Յունիս թումն Ջուղու անապատն շինում էին: Այ-
սօր կաթողիկի թաղն տվին. շատ խալաթ եկաւ:

Յուլիս ժգումն ես Ջաքարիայ վարդապառ Ըսպհան
արարի, Ջուղայ:

Յուլիս իգումն ես Ջաքարիայ որ Ըսպհանայ դուրս 51r
ելայ Աստուծով:

Օգոստոսի ժէումն Ղարաբուլղումն ես Ջաքարիայ
աստուածածին արարի:

Օգոստոսի իբումն ես Ջաքարիա եկի Թարվեզ. եխ-
ալայր Սիմոնն տէղս եր:

Սեփտեմբերի գումն ես Ջաքարիայ Սիմոնին յետ
Թարվեզու դուրս ելայ:

Սեփականների գումն հս Զաքարիայ, Սիմոն եկինք
Ազուլիս:

Հոքտեմբերի ինուն հս Զաքարիայ Ազուլայ դուրս
ելայ:

Նոյմբերի ժառն հս Զաքարիայ եկի Առզուում
Աստուծով:

Նոյմբերի ինուն հս Զաքարիայ Առզուումայ դուրս
ելայ:

Դեքտեմբերի ժռն հս Զաքարիայ եկի Թողաթ
Աստուծով: ¹⁾

1) Հաջորդում է V հավելագրությունն ուրիշ ձեռագագրով:

Յամի ՌՃԶ յունվարի զունն ես Զաքարիայ ջրաւրհ- 51v
նիք թողաթ արարի Աստուծով:

Փետրվարի ժողովն թողաթ եկաւ Ըստամբօլու խօնդ-
քարէն էլլի, անունն իսմայիլ աղայ, որ գնալ պիտէր
Ըսպհան շահն: Այս է:

Փետրվար ժեռնն. Շահաբասէն էլլի էր գնացիւ
խօնդքարն, այսօր եկաւ թողաթ, անունն էր Քալբալի-
դուլի սօլթան: Զ օր թողաթ կացին, ք էլլին միայակող
Դիարբաքրու վերայ գնացին, որ գնան շահն: Վերջն
Աստուած գիտէ:

Փետրվարի իէռնն, օրն ուրբաթ, Սիմոն վարդապե-
տըն վաղջանեցաւ. շուղայեցի էր, ավել անունն Ան-
արծաթ էր: Եկեալ էր աստ վասն քարոզ ասերու:

Մարտի իթունն թողաթ ես Զաքարիայ վատիկ
արարի:

Յուլիս եռնն թողաթ ես Զաքարիայ վարդապետ
արարի:

Յուլիս քունն թողաթու ես Զաքարիայ որ դուրս
եկայ:

Յուլիս իթունն ես Զաքարիայ եկի Առդուս Աստու-
ծով:

Յամի ռնգ օգօստոսի ժռնն ես Զաքարիայ Առդուս- 52r
մայ դուրս եկայ:

Օգօստոս ժթունն ես Զաքարիայ եկի Երևան, թէ
իմ եխպայր Սիմոնն ուղբաշի Ալահվերդի բէկինանէ
պրծած, գերայ ժ տարի էր, որ սորայ պարտք էր
տված:

Օգօստոսի իէռնն ես Զաքարիայ եխպայր Սիմոնին
յիտ Երևանայ դուրս եկայ:

Օգոստոսի լուսն միայտեղ եկինք Ագուլիս:

Հոքտեմբերի գուսն ես Զաքարիայ Ագուլաց գուրս
եղայ Աստուծով:

Հոքտեմբերի քուսն ես Զաքարիայ ուր եկի թարվեղ
Աստուծով:

Նոյմբերի ժգուսն ես Զաքարիայ թարվեղու գուրս
եղայ:

Նոյմբերի ժղուսն ես Զաքարիայ եկի Ագուլիս
Աստուծով:

Դեքտեմբերի գուսն ես Զաքարիայ Ագուլաց գուրս
եղայ:

Դեքտեմբերի ժեուսն ես Զաքարիայ Երևանայ գուրս
եղայ Աստուծով:¹⁾

1) Հաջորդում ե Վ հայկեղազրությունն ուրիշ ձեռագրերով:

Օգոստոսի լուսն միայտեղ եկինք Ագուլիս:

Հոքտեմբերի գուսն ես Զաքարիայ Ագուլաց դուրս
եկայ Աստուծով:

Հոքտեմբերի քուսն ես Զաքարիայ ուր եկի Թարվիկ
Աստուծով:

Նոյմբերի ժգուսն ես Զաքարիայ Թարվիկու դուրս
եկայ:

Նոյմբերի ժգուսն ես Զաքարիայ եկի Ագուլիս
Աստուծով:

Դեքտեմբերի գուսն ես Զաքարիայ Ագուլաց դուրս
եկայ:

Դեքտեմբերի ժեուսն ես Զաքարիայ Երևանայ դուրս
եկայ Աստուծով:¹⁾

¹⁾ Հաջորդում եմ Վ հավելագրությունն ուրիշ ձեռագրագրով:

Յամի ՌՃԷ յունվարի գումն Գոմայձոր ես Զաքա- 52v
րիայ ջրաւրհնիք տեղս արարի Աստուծով:

Յունվարի Էռնն ես Զաքարիայ եկի Առդուում Աս-
տուծով:

Փետրվարի Իսռնն Առդուում ես Զաքարիայ բուն
բարէկենդան արարի:

Ապրիլ ժառնն Առդուում ես Զաքարիայ զատիկ ա-
բարի:

Յունիս Իեռնն Առդուումայ ես Զաքարիայ զուրս
եւայ Աստուծով:

Յուլիս ժըռնն ես Զաքարիայ եկի Թողաթ վարդա-
վառ կիրակի որն:

Օգոստոս ժեռնն ես Զաքարիայ աստուածածին
Աջիսուվոնն արարի:

Սեփտեմբերի ժառնն ես Զաքարիայ եկի Իզմիր
Աստուծով:

Սեփտեմբերի ժթռնն ես Զաքարիայ Իզմիր այսօր
մտայ նաւ, որ Աստուծով գնաք Վենետիկ: Նաւն էր
Ֆէլամիկ, անուն նաւին Մարգանդ Լիօռնը: Աստուած
բարին աջողի:

Սեփտեմբերի Իթռնն նաջն հասաւ Մութուն - բու-
ռունն. Է նաւ Տարաբուլուս հէռու երեւցաւ, զալիս
էին, թէ մեր նաջն առնու: Խօ Աստուած մեզ ողորմե-
ցաւ, քամի վեր կացաւ, մեր նաւն պրծաւ, փախաւ
Աստուծով:

Հոքտեմբերի ժգռնն նաւն հասաւ Վենետիկ Աս-
տուծով:

Յամի ՈՃԷ հոքտեմբերի ժեռնն Վենետիկ նաւին 53r
ԻԷ հայ, թող զֆուանգ, ամենեքեան թուջին հրամա-

նաւն տարան հին նազարաթն, տվին մինչի ի օր նա-
զարաթ:

Նոյմբերի իեռլմն նազարաթն թամամեց: Այսօր
զմեզ ամեն զուրս տարան: Ես Զաքարիայ որ եկի
Վենետիկ քաղաք Աստուծով:

§ 18 Յամի ՌՃԸ յունվարի գ, տրէ մէկ, արամ իբ, օրն 53v

Եղաբթի, Ես Չաքարիայ ջրաւրհնիք Վենետիկ արարի:

Յունվարի Իեռմն Ես Չաքարիայ Վենետիկէն այսօր զուրս ելայ Աստուծով, որ ցամաքով գնանք Ամսրդամ:

Փետրվարի Ժգռմն Ես Չաքարիայ բուն բարէկենդան Ալաման ի քաղաքն Լիմբօրքումն արարի Աստուծով:

Փետրվարի Իռմն Ես Չաքարիայ այսօր եկի Ֆէլայմէնգ ի քաղաքն Ամսրդամ, որ է աննման:

Ապրիլ գռմն Ես Չաքարիայ զատիկ Ամսրդամ արարի:

Մայիս մէկռմն Ամսրդամ այսօր ըստամբայ, որ է գիր զուրս եկաւ, թէ Իսպանօլի թագաւորին աղչիկն տվին Ֆռանգսիսի թագաւորի տղին, որ բարիչեցին. զերայ կասին, թէ չ տարի այ, որ կռիւ էին անում: Այս է:

Յամի ռնը մայիս Իգռմն Ես Չաքարիայ Ամսրդամ 54r
մու գնացի Լէյգայ քաղաք, եկի Հառլում քաղաք, Բօրէն յետնայ այլվի եկի Ամսրդամ:

Յունիսի Ժքռմն Ես Չաքարիայ Ամսրդամ գիշերն Եսհաթ, ցերեկն ժք սհաթ տէսայ:

Յունիս Իառմն Ամսրդամ եկին, մուշտուղուղ բերին, թէ Հնդստանու ք նավ եկաւ Ամսրդամ:

Յուլիս գռմն Ամսրդամ Ես Չաքարիայ տեսայ, որ մէկ արծաթէ ջահ տարան, Մուսկօլի թագաւորին համար տարան, որ էր Բուքճը ֆունդ արծաթ, Ե ֆունդ ոսկի, որ ջուր էր տված, որ էր աննման, որ կանի ճիւղ լիղր խոնդքարի լիղր արծաթ:

Սեփտեմբերի ժաման ևս Զաքարիայ սուրբ խաչ
Ամսրդամ արարի:

Նոյմբերի ժբումն ևս Զաքարիայ որ Ամսրդամայ
դուրս ելայ, որ ծովով գամ Լիկորնայ, նավի անունն
Ջուստից:

Դեքտեմբերի գումն Թէսիլու 610 նավ մին տեղ վեր
կացինք Աստուծով:

Դեքտեմբերի իթումն ջրաւհնեաց բարեկենդան նա-
վի Ջուստիցումն արարի: Այսօր Փուրթուկալու սարն
երեւցաւ, գերայ իբ օր այ, ցամաք չէիք տեսիլ: Մեծ
ուրախութիւն է:

Յամի ՌՃԹ յունվարի մէկումն նալն եկին Իսպա- 54v
նիայ, ի քաղաքն Կալիս արկաթ գծեցինք:

Յունվարի 9, տրէ մէկ, արամ ԻԲ ես Զաքարիայ
ջրաւրհնիք Կալիս արարի:

Յունվարի ծումն նավերն Կալիսու վեր կացին:

Յունվարի ժէումն ես Զաքարիայ նավով եկինք
Իսպանիայ, ի քաղաքն Մալիկայ. Բ օր կացին, նա-
վերն Մալիկու վեր կացին:

Փետրվարի գումն ես Զաքարիայ նավով այսօր ե-
կինք Իսպանիայ, ի քաղաքն Ալըկանթայ. Գ օր կա-
ցինք, նավերն վեր կացին:

Փետրվարի Իէումն ես Զաքարիայ այսօր նավով
եկինք Լիկօրնայ: Եխպայր Նիկողոսն, Ալէքսանն տէ-
ղըս էին:

Մարտի գումն ես Զաքարիայ բուն բարեկենդան
Լիկօրնայ արարի:

Ապրիլ մէկումն ես Զաքարիայ, Եխպայր Ալէքսանն
մին տեղ մտանք նավի Զուստիցն, այսօր Լիկօրնու
դուրս ելանք Աստուծով, որ գանք Իզմիր:

Ապրիլ ժէումն ես Զաքարիայ նավով եկինք Մի-
սինայ, արկաթ գծեցինք:

Ապրիլ Իբումն գատիկ տեղս արարի:

Ապրիլ Իբումն ես Զաքարիայ որ Միսնու նավով
դուրս էլանք Աստուծով:

Յամի ՈՃՔ մայիս ծգումն ես Զաքարիայ այսօր 55r
եկինք Իզմիր, արկաթ գծեցինք, դուրս ելանք ցամաք:
Գոհութիւն Պրիստոսի, որ նոյմբեր ծբումն Ամսըր-
դամ մտայ Ֆէլամիկի նալն Զուստիցն, այսօր Գ ա-
միսն թամամվեց, ավել Բ օր, եկինք Իզմիր:

Յուշիս ժքումն ես Զաքարիայ այսօր Իզմիրէն դուրս
ելայ:

Յուշիս իեռումն ես Զաքարիայ այսօր եկի Թողաթ:

Յուշիս իքումն ես Զաքարիայ վարդաւառ Թողաթ
արարի Աստուծով:

Օգօստոսի մէկումն ես Զաքարիայ Թողաթու դուրս
ելայ Աստուծով:

Օգօստոսի իումն ես Զաքարիայ այսօր եկի Աղլ-
ռում:

Հոքտեմբերի դումն ես Զաքարիայ Աղլռումայ դուրս
ելայ:

Հոքտեմբերի ժգումն ես Զաքարիայ եկի Երևան,
հիսպայր Սիմոն տէղս եր Երևանայ զառարբաշի, խանն
էր Նաջաֆդուլի խան:

Դեքտեմբերի ժեռումն ես Զաքարիայ Երևանայ դուրս
ելայ:

Դեքտեմբերի իումն ես Զաքարիայ այսօր եկի Այու-
լիս Աստուծով:

Յամի ՌՃԺ յունվարի զ, արամ իբ, տրէ բունն, օրն 55v
կիրակի, ես Ջաքարիայ ջրաւրհնիք Ագուլիս արարի
Դարցեալ, Յակոբ կաթուղիկոսն եկեալ էր Ագուլիս
նվիրակ, այսօր ջրաւրհնիք սայ արաւ, որ 626 մարդ
շապիք էր հաքել:

Ապրիլ ժզ, մեհեկի ծունն ես Ջաքարիայ այսօր
դատիկ Ագուլիս արարի:

Մայիս բունն ես Ջաքարիայ որ Ագուլաց դուրս
ելայ:

Մայիս ժգունն ես Ջաքարիայ այսօր եկի Թարվեզ
Աստուծով:

Յունիս իւնունն ես Ջաքարիայ վարդավառ այսօր
Թարվեզ արարի:

Օգոստոսի ժըունն ես Ջաքարիայ աստուածածին
Թարվեզ արարի Աստուծով:

Օգոստոսի իգ ես Ջաքարիայ այսօր Թարվեզու
դուրս ելայ Աստուծով:

Օգոստոսի իբունն ես Ջաքարիայ այսօր եկի Ագու-
լիս Աստուծով:

Հոքտեմբերի Էունն ես Ջաքարիայ այսօր Ագուլաց
դուրս ելայ:

Դարցեալ, հոքտեմբերի ծունն եկի Նախջիվան:

Դարցեալ, ես Ջաքարիայ բեռն ճանապարհ արարի,
գնացին Երևան, ես Ջաքարիայ հոքտեմբերի ժբունն
եկի Ագուլիս:

Յամի ռ68 նոյմբերի զունն ես Ջաքարիայ Ագու- 56v
լաց դուրս ելայ:

Նոյմբերի ծունն ես Ջաքարիայ այսօր եկի Երևան:

Նոյմբերի ժգումն ևս Չաքարիայ այսօր Երևանայ
դուրս ելայ Աստուծով:

Նոյմբերի Խումն ևս Չաքարիայ այսօր եկի Առդը-
ռում, բէռանս հասայ:

Նոյմբերի Ղումն ևս Չաքարիայ այսօր Առդռումայ
դուրս էլայ, որ բարով գնաք Իզմիր Աստուծով:

§ 19 Դարցեալ, գեքտեմբերի ժգումն ևս Չաքարիայ, իմ *ibid.*
եխալայր Սիմոնն այսօր կրկին Երևան կարգեցաւ: Ես
Չաքարիայ Իզմիր էի, մարտի Խումն այսօր Իզմիր
լսեցի. զերայ Սիմոնն ինձ գիր ուղարկեց, թէ գեք-
տեմբերի ժգումն Մոծակենց Արզնրեկի կինն առի:
Այս է:

§ 20 Դեքտեմբերի Խումն ևս Չաքարիայ այսօր եկի *ibid.*
Թողաթ:

Դեքտեմբերի Ղումն ևս Չաքարիայ այսօր Թողաթու
դուրս ելայ, որ գնաք Իզմիր Աստուծով:

* Փետրվարի ժգումն եկի Իզմիր:

§ 21 Յամի ՌՃԺԱ յունվարի 9, տրէ Բ, արամ ԻԲՈՒՄՆ ևս 56v
 Զաքարիայ այսօր ջրաւրհնիք ժաղլու - դաշունն արա-
 րի:

Փետրվարի քունն ևս Զաքարիայ այսօր եկի Իզմիր
 Աստուծով:

Փետրվարի քունն ևս Զաքարիայ բուն բարեկեն-
 դան Իզմիր արարի:

Մարտի և Յարացի ԻԵ, շամս ժունն ևս Զաքարիայ
 զատիկ Իզմիր արարի Աստուծով:

Մայիս քունն ևս Զաքարիայ այսօր համբարձում
 Իզմիր արարի:

Յունիս զունն ևս Զաքարիայ այսօր վարդայվառ
 Իզմիր¹⁾ արարի:

Օգոստոսի ժէունն ևս Զաքարիայ աստուածածին
 Իզմիր արարի:

Սեփտեմբերի ժզունն ևս Զաքարիայ այսօր սուրբ
 խաչ Իզմիրունն արարի Աստուծով:²⁾

Յամի ռեժա դեքտեմբերի էունն ևս Զաքարիայ 57r
 սուրբ Յակոբի բարեկենդան այսօր Իզմիր արարի
 Աստուծով:

Դեքտեմբերի Իունն որ եխալայր Ալէքսանն Ազու-
 րաց այսօր եկաւ Իզմիր, ևս Զաքարիայ Իզմիր էի:

Դեքտեմբերի Իքունն ևս Զաքարիայ ջրաւրհնեաց
 բարեկենդան այսօր Իզմիր արարի Աստուծով:

§ 22 Թվին ռեժաունն որ Շահարաս իւր օլքին հրաման 56r

1) Զեռագրում Իմիր:

2) Հաջորդում և X հալեյապրոթյունն որիչ ձեռացապրով:

աժաւ, որ ամէն զառաւիթանէն արասին բ մսխալ կըտ-
րէն, որ Ե շահանոց է, զերայ առաջ Գ շահանոց էր:
Երևանայ զառաքին Սիմոն էր. Ազուլիս Նաջաֆդուլի
խանի զաւտում եր:

§23 Յամի ՌՃԺԲ յունվարի Գ, արէ Բ, արամ Իբուլմն 57v
 ևս Չաքարիայ ջրաւրհնիք այսօր Իզմիր արարի Աս-
 տուծով:

Մարտի մէկունն ևս Չաքարիայ բուն բարէկենդան
 այսօր Իզմիր արարի: Շատ զօլղով բարէկենդան արա-
 րաք Աստուծով:

Ապրիլ Եունն ևս Չաքարիայ այսօր Իզմիրէն դուրս
 Ելայ Աստուծով, որ գանք Ագուլիս Ժ ագուլեցի մին
 տէղ:

Ապրիլ ԺԲ, շամս Լ, մէհէկի ժեունն ևս Չաքարիայ
 այսօր զատիկ Գունէունն արարի, որ գալ օրն կու գինք
 Աֆիան Ղարայհիսարն Աստուծով:

Մայիս ԺԵունն ևս Չաքարիայ այսօր Իզմիրեն եկի
 Թողաթ:

Մայիս ԻԵունն ևս Չաքարիայ որ Թողաթու դուրս
 Ելայ:

Յունիս ԺԳունն ևս Չաքարիայ Թողաթու այսօր եկի
 Աղղուում:

Յունիս ԻԳունն ևս Չաքարիայ այսօր Աղղուումայ
 դուրս Ելայ:

Յունիս Գունն ևս Չաքարիայ այսօր Աղղուումայ եկի
 Երևան, թէ իմ Ելապայր Սիմոն տէղս հարսանիք արած:

Յամի ՈՃԺԲ յուլիս Իգունն ևս Չաքարիայ վարդա- 58r
 վառ Յէջմիրածնունն արարի այսօր, ուխտ էինք Ելել
 Երևանայ:

Օգոստոսի Գունն ևս Չաքարիայ այսօր Երևանայ
 դուրս Ելայ:

Օգոստոսի ժուռն հս Ձաքարիայ այսօր Երևանայ
եկի Ագուլիս:

- 24 Դարցեալ յամի ոճժ օգոստոսի ժուռն հս Ձաքա- 57
րիայ այսօր Իզմիրէն եկի Ագուլիս: Այս երկիրս այն-
պէս չոր ու երաշտ եր անց կացել, որ ոչ ձմեռն ձուռն
չեր եկել, զ ամսոյ ոչ անձրև եր եկել. որ Նախշվանայ
մինչև ի Թարվեզ որ շատ տեղ կեր, որ խմելու ջուր
չկեր. շատ ախպիւրներ չորացաւ, շատ վար ու ցան
ու ծառ չորացաւ մեղայ մերոց: ¹⁾

- § 25 Օգոստոսի լառն հս Ձաքարիայ այսօր Ագուլաց 58
դուրս ելայ:

Սեփտեմբերի գոռն հս Ձաքարիայ այսօր եկի Երե-
ւան Ագուլաց:

Սեփտեմբերի ժեռն հս Ձաքարիայ այսօր Երևա-
նայ դուրս ելայ:

Սեփտեմբերի ժըռն հս Ձաքարիայ այսօր Երևա-
նայ եկի Ագուլիս:

Հոքտեմբերի իեռն հս Ձաքարիայ Ագուլիս որ
Մասէյինց Կիրակոսին մայեն յետ տվի, իմ գիրն առի:

Նոյմբերի լոռն Ագուլիս հս Ձաքարիայ իմ մայեն
տվի մեր փեսա Բիչիբէի տղայ Աստուածապոլն մայայ,
զնաց Թարվեզ:

Դեքտեմբերի ժռն հս Ձաքարիայ իմ եխպայր
Սիմոն այսօր Երևանայ եկաւ Ագուլիս:

Յամի ոճժ որ Նաջաֆդուլի խանն Երևանայ մա-
ղուլ ելաւ, տարան Շամախի, խանութիւն տվին: Դար-
ցեալ Երևանայ խանութիւն տվին Աբասղուլի խանն,
որ էր մեծ Ամիրգուհայ խանի տղէն:

Յամի ՌՃԺԳ յունվարի մէկուսն Ագուլիս եւ Զաքա- 58v
րիայ, իմ եխպայր Սիմոն այսօր Ագուլաց դուրս էլաւ,
որ Մուղանու վերայ գնաց Շամախի, որ Նաջաֆդուլի
խանին յետ հսաբն կտրի, զառավիսանին, կամ թէ այլ
Յունվարի զ, տրէ Բ, արամ ԻԲ, օրն չորեքշաբթի,
Ագուլիս եւ Զաքարիայ այսօր ջբաւրհնիք արարի Աս-
տուծով:

Յունվարի ժուսն որ թագավորի հրամանաւ սադրուն
մարդ եկաւ, Հայաստանայ ամեն եկեղեցին թէ վանք
զազով չափեցին, բարցրութիւն, լայնութիւն, երկայ-
նութիւն, այսօր Ագուլաց դուրս ելան, գնացին:

Ապրիլ Ժ, մէհէկի Է, շամս Իսուսն Ագուլիս եւ Զա-
քարիայ զատիկ այսօր Ագուլիս արարի Աստուծով:

Մայիս ԺԹուսն եւ Զաքարիայ այսօր համբարձում
Մցգուն արարի, զերայ ուխտ էինք գնացել ջումիա-
թով:

Մայիս ԼԱ Ագուլիս Ներքի թաղի սուրբ Ովանէս
անվան եկեղեցին այսօր ձեռք տվեցին, վեր կալան,
որ շինեն:

Յուլիս Էուսն հիմն աւրհնեցին, ըսկիսպ արարին
շինելոյ թագաւորի ըռաղամով, Միրզա Իբրահիմի
խօսքով, զերայ Ագուլիս նորայ զաֆտուսն էր:

Յամի ՈՃԺԳ յուլիս Իգուսն, օրն ուրբաթ, Ագուլիս 59r
որ սուրբ Թումայի առաքելոյն հալիսկոպոս Խաչատուր
վարդապետն այսօր վաղճանեցաւ: Սայ Ժ տարով յա-
ռաջ իւր եխպայրորդի Պետրոս վարդապետն հալիսկո-
պոս եր աւրհնել, զրել իւր տէղն: Պետրոս վարդապետն
նստաւ սուրբ Թումայի աթոռ ըսպասաւոր: Դարցլալ,
Խաչատուր վարդապետն կացաւ Թումայի ըսպասաւոր

ամս լգ. ինքն էր ամաց կե. այս է: Պետրոս վարդապետն խաչատուր վարդապետի վրայ տաշած քարով մեծ մատուռ շինեց եկեղեցոյ յարաւու կողմն:

Հօքտեմբերի ժըումն ես Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս ելայ, գնացի Երևան, թէ իմ եխպայր Սիմոնի խիզանն բերեմ Ագուլիս, խօ Աբասղուլի խանն դատուր չտվեց:

Ես Զաքարիայ իմ եխպայր Սիմոնն Վեր կայլայ. դէքտեմբերի զումն եկի Ագուլիս, որ մին ք ամիս կենայ, ել գնայ Երևան:

Դեքտեմբերի զումն ես Զաքարիայ այս գիշեր Շարուր տեսայ, որ գիսաւոր առող երևեցաւ, որ է զոյրուղլու աստղ: Ոչ թէ միայն ես տեսայ, բօվանդակ երկիր տեսան, այսպէս շառավիղ մնաց մինչի ի օր երևեցաւ, քիչ քիչ վարթարաւ ելաւ:

§ 26 Յամի ՌՃԺԴ յունվարի 9, արէ 9, արամ Իբուն 59v
Ագուլիս ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք իմ եխալայր
Սիմոնին յետ Ագուլիս արարինք Աստուծով:

Փետրվարի Էունն ես Զաքարիայ իմ եխալայր Սի-
մոնին յետ բուն բարէկենդան Ագուլիս արարի Աս-
տուծով:

Փետրվարի Ժգունն որ եխալայր Սիմոնն այսօր
Ագուլաց դուրս ելաւ, գնաց Երեան Աստուծով:

Մարտի Իգ, Յարաց Իբ, շամս գունն Ագուլիս ես
Զաքարիայ գատիկ արարի Աստուծով:

Մայիս գունն ես Զաքարիայ այսօր համբարձում
Գաղ արարի, զերայ խիզանով ուխտ էի եկել աստ:

Յունիս բունն ես Զաքարիայ այսօր վարդյվառ Ա-
գուլիս արարի:

Սեփտեմբերի Ժէունն Ագուլիս սուրբ խաչ արարի:

Նոյմբերի Էունն Ագուլիս որ Ներքի Թաղի սուրբ
Ովանէս անվան եկեղեցին ավարտեցին, այսօր աւրհ-
նեցին: Աստուած վայելունն տայ:

* Թվին ռնլե մայիսի Իունն ըսկիսբն արին
այս եկեղեցիս գաջելու, գաջեցին, ծաղկե-
ցին, հոքտեմբերի Լաունն հրաշալի օրհնեցին:

Յամի ռնծգ նոյմբերի Ժունն Ագուլիս որ ես Զա- 60r
քարիայ խիզանով այսօր դուրս ելայ, գնացի Նախա-
վկայն ուխտ, ե օրէն յետ եկի Ագուլիս:

Դեքտեմբերի գունն ես Զաքարիայ այսօր Ագուլաց
դուրս ելայ, որ գնամ Երեան:

Դեքտեմբերի Էունն ես Զաքարիայ այսօր եկի
Երեան:

Դեքտեմբերի ժեռումն ես Զաքարիայ այսօր երևա-
նայ դուրս ելայ:

Դեքտեմբերի ժրումն ես Զաքարիայ այսօր երևա-
նայ եկի Ագուլիս:

Թվինն ռեթգումնն որ է խասն Ադիլբէջանայ վէզիր
Միրզա - Իբրահիմի զաֆտումն էր, Ագուլաց մէլիքն էր
Բադալիջ Շահնազարն:

Թվինն ռեթգ երուսաղեմայ եղիազար ոմն վարդա-
պետ դուս եկաւ, եկաւ Ըստամբօլ, Սուլթան Մահամադ
թագաւորէն ամբր հանեց, թէ էջմիածնայ թէ մէոոն,
թէ նվիրակ, թէ սեվայգլուխ չի գան Ալի - Օսմանայ
երկիրն: Այս պատճառէս էջմիածնայ առաջնորդ Յակոբ
կաթուղիկոսն գնաց Ըստամբօլ, անգաւ Սուլթան Մա-
համադ թագաւորն. յին գիր կէր թագաւորաց, նշանց
ետուր, դարուլ արաւ, թէ ինչպէս առաջ կէր, այնպէս
լինի: Այս պատճառէս էջմիածին, երուսաղէմ մինչի
բգնո մտուչիլ խարջեցին:

* Վերջն թագաւորէն ամբր դուս եկաւ, որ
կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն
քշեցին. քն թուման պարտքով փախաւ:
Թվինն ռեթա մայիսի ժեռումն եկաւ էջմիա-
ծինն. շատ աղմուկ մնաց:

Յամի ՌՃԺԵ յունվարի Գ, տրէ Գ, արամ ԻԲՈՒՄՆ 60v
 ևս Զաքարիայ ջրաւրհնիք այսօր Ագուլիս արարի Աս-
 տուծով:

Ապրիլ ժգումն զատիկ թաթախում շաբաթ իրի-
 գունն որ մեր եխպայր Սիմոնի կողակից Գուլումն և իւր
 զուստը Սալլինազն և իւր որդի Աղամիրն, այլ յետն
 կէր մին աղչիկ, անունն Գաֆար, մին կին, անունն
 Սանաղայ, որ իւր և երեխուցն զուլուղքար, սոքայ
 այսօր եկին Ագուլիս, որ մին քանի ամիս կենայ,
 այլի գնան Երևան. զերայ Սիմոն Երևան կարքված
 էր կրկին անգամ:

Ապրիլ ԺԵ, մէհեկի ԺԲ, շամս ԻԳՈՒՄՆ ևս Զաքարիայ
 զատիկ այսօր Ագուլիս արարի Աստուծով:

Յունիս ԻԲՈՒՄՆ Ագուլիս, օրն ուրբաթ, որ ևս Զա-
 քարիայ նշան այս տեսայ. Գ Ժամուն որ արեգակն
 արևին ըռանգն փոխեցաւ, քիչ մի մնաց, մթնեցաւ,
 որպէս թէ խաւարումն: Զուր ածեցի աման, տեսայ, որ
 արեգակն Գ յիսեն բռնված, մին յիսեն բաց: Այսպէս
 մինչի կէս սհաթ մնաց, ապայ քիչ քիչ բացվեցավ:
 Այսօր Յինն մին էր:

Յամի ՈՃԺԵ յունիս ԻԵՈՒՄՆ Ագուլիս այսօր Երևա- 61r
 նայ Գ մարդ եկաւ. Սիմոն եր աղարկած, որ իւր խի-
 ղանն տանի Երևան:

Ես Զաքարիայ յունիս ԻԸ խիղանն այսօր վեր առի,
 Ագուլաց զուրս ելայ:

Դարցեալ յուլիս մէկ սալամաթ այսօր մտաք Երևան:

Յուլիս ԸՈՒՄՆ Երևան, որ Նիկողոսն եկաւ Երևան
 Առգուումայ:

Յուլիս Իգուլմն ես Ջաքարիայ, եխպայր Նիկողոսն
այսօր Երևանայ¹⁾ դուս ելայ:

Յուլիս Իգուլմն ես Ջաքարիայ, պարոն Նիկողոսն
այսօր Երևանայ եկիք Ագուլիս:

Սեփաեմբերի լուսն այս ով գնաց Երուսաղէմ, վան-
քեն գնաց Մովսէս վարդապետն, գեղիս գնաց Տէր-Ազա-
րի որդի Տէր-Ալեքսանն, Աղլանենց Տէր-Գրիգորն,
Հալաղարն, Ավալխօջինց մղղսի Մարկոսն:

Հոքտեմբերի մէկուսն ըստղամ եկաւ ամէն երկիր,
թէ Շահաբաս մեռաւ, տէղն նստաւ իւր մեծ որդի
Շահ-Սէֆի: Շահաբաս էր Խ ամաց: Շահ-Սէֆին էր
ԺԸ ամաց: Շահաբաս գնում էր Ղազվին, ճանապարհին
մեռաւ: Սոցայ թախտն էր Ըսպհան քաղաք: Թագաւո-
րին անուէն փոխեցին, դրին Շահ-Սլէման:

Հոքտեմբերի ժուսն որ Երևան Աբասղուլի խանն
այսօր մեռաւ: Սա էր Կ ամաց: Տէղն եկաւ Սէֆիդուլի
խան, որ առաջի անուէն Ալխաս - Միրզայ էր: Սորայ
ասլն թագաւորադայ է, որ է լաղլի Դադստանու:

Թվին ռեթեուսն, Ագուլաց զաբուղն էր Ադիլբէջա-
նայ վեզիր Միրզա - Իբրահիմն: Ագուլաց մէլիքն էր
Մէլիք - Մանվելն, որ իջարայ արեց գլուխն բռեց
դիւան:

Յամբի ՌՃԺԶ յունվարի 9, արէ 9, արամ ԻԲ, օրն 61v
 Կիրակի, որ ևս Զաքարիայ այսօր ջրաւրհնիք¹⁾ Ագու-
 լիս արարի, որ ժխաշ - ալամ ին վեր առել, Խ մարդ շա-
 պիք հաքել. գետունն ջրաւրհնեցին Աստուծով:

Յունվարի ժբունն Երեանայ Սէֆիդուլի խանին
 մին աղայ, անունն Դամուր - Դայարէկ, այսօր դա-
 րուղայ եկաւ Ագուլիս. ոչ թէ միայն Ագուլաց, այլ է
 խառի գաւառայ, զերայ քանի վախտ եր, որ Թարվի-
 դու վեղիր Միրզա - Իրրահիմն գաֆտում է խաան եր.
 էս²⁾ խանս շահիցն տուաւ, ինքն գաֆտ արաւ: Սայ
 եկաւ ք ձիաւորաւ, մին ամիս կացաւ, գնաց:

Յունվարի ժեունն Ագուլիս այսօր Երեանայ մին
 շաթիր եկաւ, ևս Զաքարիայ, իմ եխպօր Սիմոնիցն մին
 զիր բերաւ, թէ հասանել թխթոյս եկ, որ զիր նաչաղ
 եմ: Ես Զաքարիայ այսօր ք մարդով դուրս ելայ:

Յունվարի ժբունն գնացի Երեան, Աստուծով հիս-
 պայր Սիմոնն տեսայ, լաւացել էր Աստուծով. ժբ օր
 կացայ:

Փետրվարի բունն ևս Զաքարիայ եկի Ագուլիս Աս-
 տուծով:

Ապրիլի է, մէհէկի 9, շամս ժբունն Ագուլիս այսօր
 ևս Զաքարիայ գատիկ արարի Աստուծով:

Ապրիլի ժգունն ևս Զաքարիայ այսօր Ագուլաց դուրս
 ելայ, խիզանով գնացի Կարճվանայ սարն, սուրբ Ովա-
 նէսն ուխտ:

Ապրիլի ժեունն եկի Ագուլիս:

1) Զեռագրում՝ ջրաւրհիք:

2) ևս:

Յամի ռնժգ մայիսի ժեռմն որ Երևանայ Սէֆի- 62r
ղուլի խանիցն զաջար Յուսէնխան բէկն Ագուլիս այ-
սօր դուրուղայ եկաւ թ ձիաւորաւ, ամել անունն որ
կոչի Թարխան: Միայն Ագուլաց դարուղայ էր սայ:

* Զերայ Ագուլիս Երևանայ խանի զափտումն
էր: Ագուլաց մէլիքն Բաղալիջ Շահնազարն
էր: Սայ էլ Ագուլիս իջարայ արաւ գլուխն
բռնեց դիան: Իջարէն Մելիք Շահնազարն
արաւ:

§ 27 Թվին ռնժգ սեփտեմբերի իառմն այսօր Նախջի- 62v
վանայ խան, անունն Ալիղուլի - խան, եկաւ Ագուլիս,
կէս օրի կացաւ, գնաց Ուրդուվար, մին քանի օր կա-
ցաւ, էլ գնաց Նախջիվան:

§ 28 Թվին ռնժգ հոքտեմբերի առմն որ Շամախու խան 62r
Նաջաֆղուլի խան մեռաւ: Այս այն Նաջաֆղուլի խան
էր, որ առաջ Երևան խան էր: Շահի զաւրամում սորայ
նման զինաթով, խազինով խան չկէր: Սայ Ղազախ
խանի տղէն էր:

§ 29 Թվին ռնժգ հոքտեմբերի ժեռմն այսօր Երևանայ 62v
մարդ եկաւ Ագուլիս. ես Զաքարիայ, իմ եխպայր Սի-
մոն է աղարկել, թէ այ եխպայր Զաքարիայ, հալ-
բաթէ շուտ եկ, որ բան ունիմ:

Ես Զաքարիայ հոքտեմբերի ժգումն Ագուլաց դուրս
եկայ:

Հոքտեմբերի ժթումն գնացի Երևան: Դարցեալ, որ
գնացի Երևան, Սիմոն ասաւ, թէ ես Սիմոնս Աբաս-
ղուլի խանին հասըն որ տվի, ռզնն թուման տալու
եմ խանին: Խանն մեռած էր. իւր փեսայ Զալ-բէկն
ու խանի տղէն, վարասներն կանգնեցին, Սիմոնին
հասըն առին, ռզնն թուման մնաց Սիմոն մոտ: Սիմոնն
գիր էր տալիս չուրի գամիս, որ փողն ժողովի, տա-
նի Ըսպհան տայ: Զալ-բէկն¹⁾ զարուլ չարաւ, յետով

1) Այս հատվածը «Զալ-բէկն... դարաւ» հեղինակն ավելաց-
րել է լուսանցքում՝ ուղղահայաց տողերի վրա գրելով:

Սիմոն ինձ Ձաքարէս գամին տվեց, զարլաւ:¹⁾ Այս ջանքէս ես Ձաքարիայ ինձ էլ տարան, թէ այս ողն թամասուկն մհրէ: Ես Ձաքարիայ մհրեցի, օհտայելայ, որ չուրի Սիմոն փողն ժողովի տայ, գրերն առնի: Դարցեալ մին քանի օր կացայ, Ձալ-բէկն, Աբաս-ղուլի խանի խիզանն դուս էլան, գնացին Ղազվին:

Դարցեալ, դեքտեմբերի լաուսն, այս վերոյ գրերն ինձ Ձաքարիս հասաւ, պրծայ. թվին ոնիուսն եղև. այս է:

§ 30 Թվին ոնիուսն ես Գուրգուսնց Աղամիրի որդի Ձա- 62-
քարիայ առի Ըռույունց Մարքարինանէ մին այքի, այլվի մեր հայրենի այքուն կպած: Ամէն շինեցի. մեծ ու պղտիկ է վերք ընձան շինեցի. ծղ թուման առի, խղ թուման խարջեցի: Այս ամէն իմ եխպայր Շմա-
ւոնի հրամանաւ արարի, դերայ Շմաւոն Երևան Սե-
ֆիղուլի խանի կշտին էր, համ Երևանայ գառավխա-
նէն Շմաւոնի ձեռացն էր շահի հօքմով:

Թվին ոնիուս Երևանայ գառավխանեն Ըսպհան շա-
հին մին աղայ, ոմն Աղայ-Վելի անուն, դուս եկաւ,
իջարայ արաւ: Այս աղէս Շահ-Սէֆուանէ հօքմ²⁾ ա-
ռաւ, որ արասին զ շահանոց կտրեցին. ե շահանոցն
վարթարաւ ելաւ: Ապա այս աղէս զ ամսոյ տէր կա-
ցաւ, այլվի տվին խանին, խանն տվեց Սիմոնն:

§ 31 Թվին ոնիուս այս տարուս ըսկիսքն մինչևի կատա- 63r
րածն գիր ցաւագար, ծաղիկ, մահ, ցասում, հարամի,
գողի տարի չէր տէսեալ, որ և տարէկան մարդն զար-
մանայր, թէ չեմ տէսեալ: Դարցեալ, այս տարուս մին-
չևի վերջն յենց ծաղիկ ընգաւ, որ Ագուլաց բն երե-
խայ ծաղկով մեռաւ, թողզ այլ ցաւով մեռածն: Դար-
ցեալ, Խորմացտանն յենց ջալալի դուրս եկաւ, որ ԵՐ

1) Ձեռագրում՝ բղաւ: Տպագիրը (յերես 28) նույնպէս կար-
դում է դաբուլաւ:

2) Ձեռագրում՝ հօք:

կարավանի տվին, շատ մարդ ըսպանեցին,¹⁾ ամէն
ապրանքն տարան: Դարցեալ Բ, Վ կարավան Ղզլբաշի
երկրում թալանեցին, ապրանքն տարան: Դարցեալ,
այս տարուս Իզմիր բինադար ոմն ջուղեցի, անուռն
Գրիգոր, ավել անուռն Դաւաջի, որ մեռաւ, զժողոպ
րածին էլաւ, մնաց այս սատակածիս վերայ բազրկանի
ապրանք զճա մառչիլ: Ոմն փող ին շախով տվել, ոմն
ապրիշում կամ այլ ապրանք: Ամէն երկրի մարդի կէր:
Ապուլաց ջումիաթին կէր ծբա մառչիլ: Ես Զաքարիայ
ու իմ եխպայր Սիմոնին կէր ժեռ մառչիլ, զերայ ըն-
դէրք կէր Իզմիրումն, որ այս փողս տվին:

* Այս սատակելուս որ սատակեցաւ, փող շատ
ուռնէր, Հնդստան թէ Ֆոնգստան, ամէն ու-
րիշ մարդ կերաւ: Սորայ դավին մինչի Վ
տարի արարին, ախրն փուշ ելաւ, փող չի
բհաւ եկաւ: Շատ շատ մարդ ավարայ ելաւ:
Մեռաւ այս Գրիգորս, մնաց Քրիստոսի դա-
դաստանին սև երես:

Թվին ռճժգ այս տարուս Իզմիր Բ բինադար որ Բ- 63v
քինն մին տէղ ընդէրք ին, այս Բ բինադարս վրա-
ցի²⁾ են, ազգաւ հայ, ի քաղաքէն Թվիսու, անուռն
Շահվերդի, միուսն Գասպար, սոքայ իւրենք մֆլիս
սնդուռն հանեցին: Մնաց բազրկանի սոցայ վերայ
սլարտք էճա մառչիլ, որ փողն ոմն շախով էր, ոմն
ապրիշում կամ չուխայ կամ այլ ուրիշ ապրանք ին
տված: Այս չՇահվերդի, չԳասպարս այսպէս էրեսներն
սէվադուցին: Մարդ ընդաւ մէջ, որ բէրին, կիսու կըտ-
րեցին. գիր տվին, թէ չուրի ժը ամիս կէսու կարածն
տանք: Ապուլաց ջումիաթին կէր սոքայ մօտ ծա մառ-
չիլ: Ես Զաքարիայ, իմ եխպայր Սիմոնին կէր ռ մառ-
չիլ, զերայ ընդէր ուռնէր Իզմիր:

1) Չեսապրում՝ ըսպանեցի:

2) » վարացի:

* Դարցեալ այս կիսուկ կտրածս այլ տվին
 ոչ: Մինչևի գ տարի այնչափ դավի, դի-
 վան գնալ, որ Բ, գ յետ Իզմիրուն յետ գը-
 նացին Ադրանայ՝ խոնդքար Սուլթան Մա-
 համադ թագաւորին գանգադ արարին. Բ
 յետ ըսպանելու էլաւ, այլվի կաշառք տվին,
 պրծան: Փողացտէրն տէսան, որ այսչափ
 շուռ եկին, փող խարջեցին, ախրն փուշ
 էլաւ, փող չի դուռ եկաւ:

Թվին ռեծգ այս տարուկ Իզմիր դալալ ոմն Ագու- 64r
 լաց Դաշտեն, անուէն Կոստանդ, ինքն մֆլիդ սնդուն
 հանեց: Մնաց սորայ վերայ բազրկանի լո մառչիլ:
 Ագուլեցոց կէր եւ մառչիլ: Այլ ուրիշ երկրի բազրկան-
 նէր այս Կոստանդս դրին զնդանում Իզմիրումն:

* Այսպէս դէս ու դէն ընկան, փուշացաւ:
 Մնաց հոգոջն, մարմնով Քրիստոսի դադաս-
 տանին պարտական, սե երես:

** Վերջն Իզմիրեն փախաւ, գը-
 նաց Մսր, Արաբստան, մեռաւ:

§ 32 (Թվին ՌՃԺէ յունվարի գումն Ագուլիս կամաց շարժ 64v
 եկաւ: Այս շարժս էլ յունվարի գումն Շամախի քա-
 ղաքն յենց եկաւ, որ մինչի գ, էս հոգի մեռաւ: Շատ
 սարայ, բէրթ ու պարիսպ փլաւ. վասն մեղաց մերոց:

§ 33 Թվին ռնծէ յունվարի գ, տրէ գ, արամ իբ, օրն ibid
 բշարթի, ես Զաքարիայ որ այսօր ջրաւրհնիք¹⁾ Ագու-
 լիս արարի: Գետումն ջուր աւրհնեցին դովուլ զոնով:

§ 34 Թվին ռնծէ յունվարի ժբումն Ագուլիս ես Զաքա- ibid.
 րիայ այսօր առաջաւորաց բարէկենդան արարի. որ
 ջրաւրհնեաց մէջն է օր կէրանք. բշարթի Ոհանու տօն
 չկատարին, ապաշխարութեան ասացին:

Թվին ռնծէ յունվարի իսումն որ Քրիստոսի սուրբ
 գէղարթն բէրին Ագուլիս վասն ժողովքի: Ոչ թէ միայն
 Ագուլիս, այլ ամէն երկիր, վասն փրկութեան աշխարհի:

Թվին ռնծէ յունվարի իբումն Ագուլիս որ Մուսա-
 բէկի տղայ Մահամադ - խան մեռաւ, տարան Թարվեզ
 իմամզադէն:

§ 35 Թվին ռնծէ փետրվարի իգումն Ագուլիս որ յարե- 65r
 մտեան կողմն գիշաւոր²⁾ աստղ երևեցաւ, որ առաջի
 իրիգուն մէր կու մտանէր. իւր չարութիւն շատ էր: Աս-
 տուած փրկէ փորցանած:

Թվին ռնծէ մարտի իբ, շամս բ, յարաց ժբումն
 Ագուլիս ես Զաքարիայ այսօր գատիկ արարի:

Թվին ռնծէ ապրիլի գումն Ագուլիս յենց ձուն
 եկաւ, որ կտուր սրփվեցաւ: Այս եղև վասն մեղաց
 մերոց:

Թվին ռնծէ ապրիլի իումն Ագուլիս խաբար եկաւ

1) Ձեղագրում՝ ջրաւրհիք:

2) » հենց այսպէս, գիսաւոր-ի փոխարեն:

Ըսպահանայ, ոչ թէ միայն Ագուլիս, այլ ամեն¹⁾ մի երկիր ընդամ գնաց, որ շահի անունն իմաստունք թասնիֆով²⁾ փոխեցին. առաջ Շահ - Սէֆի էր, փոխեցին, դրին Շահ - Սիլէյման:

Թվին ռեժէ մայիսի եռմիս Ագուլաց մին կարավան էր գնում էր Թարվէզ. այլ տեղաց մարդ էլ շատ էր: Գնացին, մտան գամին, թէ Երասղն անց կենան. ջուրն ուժով կնի, գամին շատ լցաց, կարիւ չէն զափտ անիւ: Գամին ախմիշ կնի, շատ տէղ կու տանի, կտայ քարի, ճոթ ճոթ կանի, մին գ, է ձի, գ, է մարդ կու խէխտի: Են թուման բաթմիշ էլաւ. գն թուման Ագուլաց էր: Ճիգ թուման էս Զաքարիայ, իմ եխպայր Սիմոնին գնաց: Ամայ Ագուլաց մարդ չմեռաւ. ապրանքն գնաց: Շատ դէս ու դէն գնացին, գտաւ ոչ:

* Շատ խարջ արին. ամայ կասին, թէ ապրանքն Դուզալու ժահիայ ուղբաշին զաֆթեց: Կարացին³⁾ ոչ վերայ սաբուլ անիւ, դերայ շուն մարդ էր:

Թվին ռեժէ յունիսի գումիս Ագուլիս էս Զաքարիայ Ագուլաց առաջնորդ Պետրոս վարդապետին յետ գնացիք Ղափանու անապատէրն ուխտ, քանզի Ագուլաց ջուր միաթ շատ գնաց: Նախ և առաջ գնացինք Յալիձորու կուսանաց անապատն: Սորայ հայրն է Տէր - Միքայէլ: Այս անապատումս կէր և կուսանք ապաշխարող: Երկրորթ՝ գնացինք Տաթևու անապատն: Սորայ հայրն է Արիստակէս վարդապետն: Սորայ ունէր և կրօնաւոր մարդ: Այս անապատիս եկեղեցին դէռ ևս կիսակաւար էր: Քանզի առաջ ուրիշ տէղ ին բնակեալ. հնարից սատանի՝ տէղն խախտվեցաւ, փլաւ. այս պատճառէս վախեցան, վեր կացան, եկին այս տէղս, նոր ըսկիսւն⁴⁾ արարին, յիսար, խուց, եկեղեցին շինե-

65v

1) Ձեռագրում ան:

2) » քասնիֆոն:

3) » կարաց:

4) » քսկիսւն:

ցին: Այս ք տարի այ, որ եկել ան այս տէղս: Շատ աշխատանք արաւ այս Արիստակէս վարդապետն այս տէղիս, կամ թէ առաջին: Երրորթ՝ գնացինք Շնրհերու կուսանաց անապատն: Սորայ հայրն է մղղսի Մարքարէ: Սորայ ունէր Կ կուսանք ապաշխարող: Զորրորթ՝ եկինք Տաթևու վանքն: Սորայ առաջնորդն է Շաբանի տղայ Ովանէս վարդապետն: Սորայ ունէր մին ժարէղայ: Ինքն գնացած էր Ըսպհան վասն դավի:

Դարցեալ մեք ջոմիաթով յունիսի ժըռմն: Եկինք Ագուլիս:

Թվին ռճԺէ յունիսի Իգուլմն Ագուլիս այսօր խա- 66r
բար¹⁾ եկաւ, թէ Գիլանայ ծովէն իռ դազախ է դուս
էկէլ, Ըոէշտ քաղաքն չափմիշ արել, տարել, շատ մարդ
են ըսպանել, շատ ապրանք տարել: Յետով գիր եկաւ,
մարդ եկաւ, ըստուք որ այս բանս էլաւ, շատ դա-
րար էլաւ Ըոէշտու:

Թվին ռճԺէ սեփտեմբերի Իբուլմն Խորմացտանէն
գիր ու մարդ եկաւ Ագուլիս, որ գրած ին, թէ Աս-
տուածածնուն պատէն յենց շարշ եկաւ, որ շատ մարդ
այ մեռէլ, շատ ավերութիւն էլէլ այս քաղաքներումս:
Թողաթ ու Նիկսար, Բօլխայ, Բուրսայ, Մարդիվան,
շատ տէղ փլաւ:

§ 36 Թվին ռճԺէ հոքտեմբերի ժըռմն Ագուլիս որ ես 66v
Զաքարիայ, իմ հօր եխպայր Սարկավաքի որդի պարոն
Ալէքսանն այսօր հարսանիք արաւ: Սայ էր ամաց ԼԲ.
ես Զաքարիայ որ գրեցի:

§ 37 Թվին ռճԺէ հոքտեմբերի Իէռմն Ագուլիս ես Զա- 66v
քարիայ իմ եխպայր որդի Գրիգորն վեր առի այսօր,
Ագուլաց դուս էլայ, որ գնամ Երևան, քանդի²⁾ իմ
եխպայր Սիմոնն Երևան կրկին կարքված էր, համ
Երևանայ խանին կշտին էր, համ Երևանայ զառափխա-
նէն Սիմոնի զաֆտումն էր: Այս պատճառէս զ տարի էր,

1) Ձեռագրում՝ խար:

2) » Լագի:

որ իւր որդի Գրիգորն տէսած չէր. տարայ, տէսաւ:
Գնացի էջմիածին, Մուղնի, Վիրաբն, ամէն ուխտ արի,
այլի Գրիգորն յետս բերի Ագուլիս:

Նոյմբերի Իթումն եկի Ագուլիս սաղ սալիմ. գոհու-
թիւն Աստուծոյ:

§ 38

Թվին ռճԺէ նոյմբերի Իումն ես Զաքարիայ Երե-
ւան էի, այսօր Շահ-Սլէման թագաւորէն Ըսպհանայ
չափար եկաւ Երևան Սէֆիդուլի խանին վերայ, թէ
ըն մարդ տուր, ամէն խան ու բէկ տալիս աչ, քանզի
ըռուս աչ դուս եկել, Իս մարդ աչ, տվել ան, Ասրա-
բաղ չափմիշ արել, տարել, դիր անողորմ բան են արել,
որ մանդր երէխեքն վեր կու փթաւէին. դալու ժուկն
թրով կու տին, բ ճոթ կանեն, այսպէս սիթամ արին,
շատ գերի, ապրանք տարան: Այս ջանիբէս Շահ-Սլէ-
ման Մանսուր-խանն սարգար դրեց, հրաման տվաւ,
որ ասկար կիտվէն, գնան Ասրաբաղ կուլ: Այս ջանի-
բէս Շահ-Սլէման իւր օլքին վերայ մադաթի փող գծեց,
ջամէջամ առաւ: Ագուլաց ծէ թուման գա դիան՝ առաւ:
Ամէն երկիր տվին դինարայ դինար դիվանի: Դաշտե-
ցոց ըռասագոփն տվինք այս ծէ թուման գա դիանս.
այս է:

66v

նշան
54.

Թվին ռճԺէ դէքտեմբերի Իումն որ Ագուլաց Դաշ-
տին ժողովուրդն հակառակ ընկան Ագուլաց վանքի
սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետին յետ
բ պատճառի: Մին՝ վասն այս. այր ոմն մեծատուն՝
Դաշտէն, անունն մղղսի Մեկքում, զերայ վարդապետն
Մեկքումն ուզէր, դաշտեցիք Մեկքումն ուզին ոչ, թէ՛
մեք Մեկքումն ուզում չէնք, դու էլ ուզիլ մի: Քանզի
այս Մեկքումս չ տարի ավել աչ, որ Դաշտի ազսախա-
լու էր, ապա այժմուս գծեցին¹⁾. վասն հսաբի այս
Մեկքումիս յետ շատ դավի դիվան գնացին դաշտեցիք.
այս է: Մին պատճառն այս եղև, որ Ագուլաց այր ոմն

67r

1) Ձեռագրում՝ գծեցի:

խօջայ Պողոս, սորայ մին աղչիկ տվել էր Դաշտն ժար-
 ղուլու տղին: Մարդն մեռաւ, աղչիկն մնաց որր: Դաշ-
 տեցի այր ոմն, Տէր-Մարքարի տղայ Ազարէ, իւրենց
 տանուտէր դրին: Ես Ազարիս կին չուներ, այրի էր:
 Այս Ազարիս գնաց վարդապետն մօտ, թէ դաստուր
 տուր ինձ, որ խօջայ Պողոսի աղչիկն առնեմ: Վար-
 դապետն հրաման չտվեց, թէ չհաս այ: Ազարէն գնայ,
 ք իրիցի իւր գլխու պսակել կուտայ, տանէ: Ժողո-
 վուրդն Ազարի կողմն էին: Այս ք պատճառէս շատ
 դիվան գնացին, շատ փող գնաց. ամէն հակառակ ին:
 Մինչի ծղ ամիս այս կուլս կայր, յետով բարիշեցին:
 Ապայ են ք իրիցի փիլունն էջմիածնայ աթոռակալ
 Միքայէլ վարդապետն վեր առաւ. յետ ք տարու իրի-
 ցին փիլունն տվին: Բարիշեցին, պրծան, վարթարաւ
 էլաւ:

§ 39 Թվին ռեժէ Ագուլաց մէլիքն էր Մէլիք-Մանվելն, 64v
 Ագուլաց հաքիմն էր Ագլբէջանայ վէզիր Միրզա-
 Իբրահիմն:

§ 40 * Թվին ռեժէուլմն Աքուլաց սուրբ Թումայի 64
 առաջնորդ Պետրոս վարդապետն ըսկիսրն
 արաւ վանքի զ կողմի պարիսպն մեծացա-
 նել. որ քար ու հողով եր ամէն տներն,
 սայ Քրդստանայ ուստէք բերաւ, նոր այլվի
 հող ու քարով պարիսպն շինեց, բրջեր շի-
 նեց, մաղայղէք շինեց, ոմն կիր ու քարով
 գումբէզի, ոմն երած քարփիշ ու գաջով
 գումբէզիք. մէջն ամէն տաշած քարով, թէ
 խուց, թէ օթախնի լաւ արծակացոյց: Ջրի
 առուն գծեց պարիսպի մէջն: Շատ աշխա-
 տանք արաւ, շատ դրամ խարջեց: Աստուած
 ողորմի աշխատավորաց:

** Այս Պետրոս վարդապետս 1129
 ~ուլմն ամէն տէղաց մանսարով

դրկեցին Երուսաղէմ, Եղիազար
վարդապետն բերին Էջմիածին,
կաթողիկոս դրեցին: Թվին 1131
դարցեալ Պետրոս վարդապետն
գնաց Ագուլիս, ժամանակ կա-
ցաւ: 1133ումն նոյժ բերի գումն
եկաւ, թէ գայ Երևան, գայ սուրբ
Կարապետն, մեռաւ: Տէղն նըս-
տաւ Ոհան վարդապետն:

§ 41 Թվին ՌՃԺԸ յուշարի գ, տրէ գ, արամ Իբ, օրն 67v
 չորեքշաբաթ, ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Ագու-
 լիս արարի: Վերի եկեղեցու ժողովուրդն միաբան,
 Ագուլաց առաջնորդ Պետրոս վարդապետն մինչի Խ
 հոգի շապիք էին հաքել. խաչաւամով, սազով, նաղրով
 գետումն ջուր աւրհնեցին: Ձնի նշան չկէր, որպէս թէ
 գարուն: Այս գիշեր յենց ձուն եկաւ, որ ա գազ ձուն
 նստաւ. այսպէս: Ձունն ջրաւրհնիք գիշերն եկաւ:

Թվին ռնծք փետրվարի Իսաումն Ագուլիս այսօր ես
 Զաքարիայ բուն բարեկենդան արարի:

Դարցեալ, փետրվարի Իգումն Թուրքերն ըստմազան
 դատիկ արարին, օրն զշաբաթ:

✓ Թվին ռնծք մարտի մէկումն այս տարուս Ագուլիս
 մէլիք չունէր, քանզի Մելիք-Շահնազարն գնացել էր
 Ըսպհան վասն քաւանթարանի հօքմն նորի: Այս ջանի-
 քէս մէլիք չկէր. գ տանուտեր դրին, որ մալ ու թավ-
 ջին անէ: Այսմ ամի Ագուլիս ռ թուման¹⁾ Աղլբէջա-
 նայ վէզիր Միրզայ-Իբրահիմի զաֆտումն էր:

§ 42 Թվին ռնծք մարտի մէկումն Երևան որ ես Զաքա- 71v
 րիայ, իմ եխալայր պարոն Շմաւոն այսօր ըսկսքն
 արար Լուսավորչի Խոր Վիրաբի հօրն ու հորի վերայ
 եկեղեցին շինելոյ: Այս Շմաւոնս, որ է Ագուլեցի Գուր-
 դունց մղղսի Աղամիրի որդի, որ այս ժք ամ է, որ
 Երևան այ, որ գ խանի զուլուղ արաւ, որ է այս՝ Նա-
 ջաֆղուլի խանին, Աբասղուլի խանին, Սէֆիղուլի
 խանին: Քանզի այս գ խանս այլ առաջ՝ Լաւա-
 բէկի տղայ ուղբաշի Արահվերդի բէկին զուլուղումն

1) Ձեռագրում ռ ր:

այլ է կացեր: Դարցեալ այս Շմաւոնիս կիսն մեռած էր Ագուլիս. չունքի Երեւան խանի զուլուղումն էր, նաջաֆղուլի խանի այանումն Երեւան վերստին կիս առաւ. այս քամ է: Դարցեալ, քանզի այս խաներիս զուլուղումն այս էր գործն. համ զառաֆխանէն, համ ըռահտարխանէն¹⁾ սորայ ձեռացն էր. շատ շատ շահավետ էր վաճառականի որ առուտրի: Այս պատճառէս խաներն սայ ձեռաց տալ չին: Այս Շմաւոնս շատուց ցանկայր Խոր Վիրաբն շինելոյ, քանզի յին ժամանակաց հորն լցված էր, վերայ եկեղեցին խախթված էր, այս Վիրաբս ավերեալ էր, այլոց, թուրքի ձեռաց էր, անբնակ: Այս գամ է, որ ոմն վրացի ինքն ծառայէր: Դաւիթ վարդապետ կաթուղիկոսի հրամանաւ եկեալ, աստ բնակեալ || պարիսպն քաշեց, թէ այլ ինչ: Դարցեալ, Շմաւոնն խոստացաւ, որ Լուսաւորչի հորն ու հորի վերայ եկեղեցին շինէ, թէ խանի, թէ այլ ինչ խարջ՝ շինելոյ գնայ, Շմաւոնն տայ վասն իւր և իւր ծնողաց յիշատակ, հոգոյն²⁾ փրկութեան:

Դարցեալ թվին ռեծք մարտի մէկումն եկեղեցին ու հորն ձեռք տվին, ք վարդապետի մարմին տապանի դուս եկաւ: Տապանին վերայ գրած էր մինն՝ Ներսէս վարդապետ, մինն՝ Վարդան վարդապետ, որ բքինն ընդիր, սուրբ վարդապետք էին: Լիակատար պատմութիւն կոնդակումն գրած էր: Սոցայ վաղջանն գրելին թվին Էնթէ, որ գնա տարի էր, որ վաղջանէին: Ամենեկն մարմինն փտած չէր: Ապայ բքն մէկ տէղ չէր մեռած. ժ տարի յետ ու առաջ էր մեռած: Շատ երկրի մարդ եկաւ, տեսան, շատ զարմանալի բան էր: Ես Զաքարիայ գ, գ անգամ տեսայ, նշխարքն համբուրեցի: Դարցեալ, այս Շմաւոնս յիմնարկեաց, Խոր Վիրաբի հորն շինեց: Թվին ռեծք ապրիլի զումն շատ վարդապետ, եփիսկոպոս, շատ անթիւ մարդ եկին:

1) Զեռագրումն ըռահտարանէն:

2) " հոգն:

ուխտ. համ եկին հորն աւրհնեցին: Ագուլաց սուրբ
Թումայի վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն,
քահանայք, ժողովուրդ, ի մարդ գնացինք, ապրիլի
ժեռումն այլվի ջումիաթով եկինք Ագուլիս: Փառք ան-
մահին. այսպէս տեսանք: || Այս սրբոց մարմինն այս- 72v
պէս սաղ էր, որ ոտնն, մարմին, գլուխն, ձեռքն սրբ-
տին վերայ խաչած¹). այսպէս տեսանք: Դարցեալ, այս
Շմաւոնս որ հորն շինեց, աւրհնեց, ապա սկսաւ յորի
վերայ եկեղեցին տաշած քարով շինէ, քանզի առաջ
այլվի այսպէս ին շինել: Սայ էլ առաջի շինածի նման
շինեց, ամայ այլ մեծ շինեց: Սայ վերայկացու դրեց
թէ հորին շինելու, թէ վերայ եկեղեցին շինելու երևանա-
ցի Յակոբջանի որդի Ռհան - բաբէն, որ սարքարութիւն
անէ, հսարն տայ Շմաւոնին: Այս Ռհան - բաբէն այլ-
վի դօնլուղով այ: Ահա այսմ ամի, որ թվին ռճթ
ըսկիսբն արաւ շինելու, Ռհան - բաբէն սարքար դրեց:
Դարցեալ թվին ռճթ յունիսի մէկն Ըսպհանայ Շահ-
Սէյման թագաւորէն ըռաղամ եկաւ Երևան, Սէֆի-
ղուլի խանին վերայ, թէ այտ հայ զառաքի խօջայ
Սիամոնտ գայ Ըսպհան: Այս Շմաւոնս տարան Ըսպհան:
Յունիսի ամսուն Երևանայ դուրս ելաւ: Այս եկեղեցիս
ապսպարեց Ռհան - բաբէն, թէ՛ շինէ, ինչ փող որ խար-
ջիս, իմ քեռի Ղուգաղէն առ: Զերայ այս Շմաւոնս
|| որ գնաց Ըսպհան, իւր քեռու տղայ ունէր, անունն²) 73r
Ղուգաղ, այս Շմաւոնս գրեց, այս Ղուգաղս Ագուլաց
տարաւ Երևան, զերայ Ղուգաղս Ագուլեցի է: Սայ տա-
րաւ Երևան, գրեց իւր տանն, իւր առուտրին, խարջին
վեքիլ ու ինքն գնաց Ըսպհան: Այս Ռհան - բաբէն եկե-
ղեցիս շինեց, ամէն խարջ, թէ ուստի, թէ համալի, թէ
իւրն դօնլուղ, դավտարով փողն վեքիլ Ղուգաղէն ա-
ռաւ: Դարցեալ, թվին ռճթ սեփտեմբերի Իռւմն շատ
վարդապետ, էջմիսիծնայ աթոռակալ եկին, աւրհնե-

1) Զեռագրում՝ խաչաց:

» 6 անունս):

ցին, զերայ կաթուղիկոսն զէս եւջս Հստամբօլ էր վասն աղմուկին: Դարցեալ, հորի տակունմն մին գերեզմանի նման մատուռ յայտնեցաւ, մարմինն միջունմն: Ամայ բացին ոչ, զերայ գրոց մարդոց, բրոց վկայութենով ասացին, թէ Գրիգոր Լուսաւորչի մարմինն է: Բացին ոչ, չուրի կաթուղիկոսի գալն: Այս Շմաւոնս Բապհան թվին ռճժ զէքտեմբերի Էոմն առ Աստուած փոխեցաւ, ապայ իւր խոստմունքն կատարեցաւ. հորն, թէ եկեղեցին շինվեցաւ, աւրհնեցին, մնաց յիշատակ իւր, թէ իւր ծնողացն, իւր որդոցն, իւր կողակցացն¹⁾ հոյգոյն փրկութեան: Եւ սրբոց վարդապետաց և ամենայն սրբոց || և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի բարեխօսութիւնովն Քրիստոս Աստուած սոցայ մեղացն թողութիւն և մեր մեղացն թողութիւն խնդրեցէք. ես Շմաւոնի եխպայր Զաքարէս որ ամենայն բանի ահանատէս էղայ և իմ հողացեալ ձեռնովս գրեցի, և Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

73v

* Թվին ռճի առմն այս բ սուրբ վարդապետաց մարմինն այս հորի գլխի շինած եկեղեցուն յարևմտեան կողմնի տակունմն ներքնայտուն մաղաղա կայ, այս մաղաղիս յարաւային կողմն անփոփեցին: Դունն եկեղեցու միջունմն է, յարևմտեան կողմի յունսասային²⁾ կողմն է:³⁾

§ 43 Թվին ռճժ ապրիլի գումն Ագուլիս որ Երևանայ մուղնեցի Ովանէս վարդապետն այսօր առ Աստուած փոխեցաւ: Սայ էր և ամաց: Սայ էր սուրբ Գէորգի առաջնորդ: Քանզի այս բ ամիս էր, որ եկեալ էր որ Ագուլիս, սուրբ Գէորգայ մասն բերել վասն ժողով անելու, քանզի Մուղնու սուրբ Գէորգայ անվան եկեղեցին այս բ տարի այ, որ շինում է: Պարտք ունէր:

68r

1) Ձեռագրում՝ կողակցածն:

2) » յիսուայի:

3) Հաջորդում են Z. a, b, c հավելագրություններն ուրիշ ձեռագրով:

եկաւ Ազուլիս, չ թուման կիտեց, գնաց Ուրդուլար, ի գիւղն Անապատ, յանկարծակի յիվանդացաւ, բերին Ազուլաց սուրբ Թումայի Առաքելոյ վանքն: Մարդ ուղարկեցին Նրեան, ի գիւղն Մուղնի, իւր ախպեր որդի Տէր-Դաւիթ յարէզան, ալլ մարդիք եկին Ազուլիս: Ովանէս վարդապետն կտակ արաւ, իւր ախպէր տղայ Տէր-Դաւիթն վարդապետ աւրհնէց, իւր աթոռ սուրբ Դէորդ իւր տէղն դրեց, յետ քամսոյ ապրիլի զուլմն Ազուլաց վանքումն առ Աստուած փոխեցաւ: Իւր եխպայր որդի Դաւիթ վարդապետն, ալլ մարդիք Ովանէս վարդապետի մարմինն տարան Նրեան, ի գիւղն Մուղնի, սուրբ Դէորդայ եկեղեցին, անդ հանգուցին, որ ինքն էր շինել Սայ անվանի, մեծ վարդապետ էր: Ազոթք սորայ մեզ ողորմի:

Թվին ռճժ ասրիլի եռմն Ազուլիս յենց ձուն 68v
եկաւ, որ կտուր սրիվեցաւ. շատ պտղոց¹) դարար էլաւ. վասն մեղաց մերոց:

Թվին ռճժ ասրիլի ժառմն Ազուլիս ես Ջաքարիայ այսօր դատիկ արարի, մէհէկի ամսոյն ք, շամս ամսոյն իք արարի Աստուծով:

Թվին ռճժ ասրիլի ժք Ազուլիս որ այսօր անձրևի բսկիսըն էլաւ մինչի ասրիլի խումն. խումն ձուն եկաւ մինչի գալ օրն, որ էր մայիսի մէկ: Ձուն եկաւ, սառեց, որ բարձր գէղորէից որթն, ծառն ցուրտ տարաւ: Այս եղև վասն մեղաց մերոց:

Թվին ռճժ մայիսի զուլմն Ազուլիս այսօր Նախայվկայէն գիր եկաւ, թէ Էջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն եկել այ տէզս, Ազուլաց առաջնորդ Պետրոս վարդապետն, ես Ջաքարիայ ինձ աթոռակալն ուզել այ: Այսօր ես Ջաքարիայ, Պետրոս վարդապետն գնացինք Նախավկայն, ա օր կացինք,²) ալլի մայիսի քումն եկինք Ազուլիս:

1) Ձեռագրում³ պսոց:
կացին:

Դարցեալ մայիսի ժբումն աթոռակալ Միքայէլ վարդապետն, լէյիցի Ըստէփանոս վարդապետն ալ քանի վարդապետօք եկին Ագուլիս, Ե օր կացին, գնացին Երևան վասն միոյ պատճառի:

Թվին ռճժը մայիսի ժբումն Ագուլիս այսօր Ագուլաց ի տուն խիզանով գնացինք Գաղայ նահատակն ուխտ: Ես Զաքարիայ այլվի խիզանով յետ սոցայ գնացի, ուխտ արարաք: 69r

Մայիսի իումն եկինք Ագուլիս, օրն համբարձում:

Թվին ռճժը յունիսի ժգումն Ագուլիս Վերի թաղէն այր ոմն մեծատուն, անունն խոջայ Ավաք, որ այսօր առ Աստուած փոխեցաւ: Քանզի շատ մարդի վկայութենովն իմացաք, որ սայ ի հօրէ, ի մօրէ ժէթիմ էր, որ բնաւ ունչիչ չունէր սայ Աստուծոյ տուածէն: Այնչափ տվեց Աստուած, որ թէ տուն, թէ մուլք, թէ աջնա, թէ փող, գո թումանի տէր դառաւ: Սայ էր Խամաց, Սայ մեռաւ, ոչինչ տարաւ, բայց միայն ի գազ կտաւ: Ով մահկանացու, մի շատ ազահուլիսն անիլ. վերջն այսպէս կու լինի. այս է:

Թվին ռճժը յուլիսի իբումն Ագուլիս Բ օրի անձրեկաւ. Բ օրի յետեն սարերն բարցր ձուն եկաւ: Այս եղև վասն մեղաց մերոց:

§ 44 Թվին ռճժը օգոստոսի ամսոյ ըսկիսք էլաւ, Ագուլիս փորացաւութիւն ընկաւ: Շատ մարդ, շատ էրէխայ մեռաւ, որ տուն կէր գ կամ Ե երեխայ մեռաւ: Այսպէս մնաց մինչի նոյմբերի վերջն, ապա վարթարաֆ էլաւ: Ոչ թէ միայն Ագուլիս էր, այլ շրջակայ ղէղորայքն էլ այսպէս կէր: Այս եղև վասն մեղաց մերոց: 70r

§ 45 Թվին ռճժը օգոստոսի էումն Ագուլիս այսօր Ագուլաց մէլիք Շահնազարն այս ա տարի էր, որ գնացել էր Ըսպհան, թագաւոր Շահ - Սլէմանէն քալանթարի հօքմն հանեց, էլի մանսարով այսօր եկաւ: 69r

Թվին ռնժը օգօստոսի էռւմն Ագուլիս որ այսօր 69v
 էջմիածնայ աթոռակալ Միքայէլ վարդապետն եկաւ
 Ագուլիս վասն նվիրակի: Քանզի Հակոբ կաթողիկոսն
 դէռ եւրս Ըստամբօլ էր վասն աղմուկի: Դարցեալ,
 աթոռակալն եկաւ, մին շունչն ի դիան հարկ է, որ
 ամէն հայ ի դիան կուտան էջմիածինն. այս գ տարի
 էր, որ առէլ չէր: Սայ եկաւ, շունչն Կ դիան առաւ գ
 տարէն:

Թվին ռնժը օգօստոսի ժռւմն Ագուլիս Մուսաբէկին
 աղայ Մահամադխան բէկն մեռած էր. իւր զուլէրն ծ
 թվանգչի բերել են իւրենց տունն պահում: Քանզի
 Մուսաբէկին ք տղայ ունէր, մեծն՝ Մահամադխանն
 էր, փոքրն՝ Իսախան: Այս ք ախպէրս հայրենիք մուլ-
 քի, ապրանքի վերայ դաւի են անում: Այս ծք տարի
 էր, որ ախպէրք դաւի ին անում. որ ք յետ շահն գնա-
 ցին, գ, է յետ բէկլար-բէկի գնացին, բալքի թէ
 գո թուման ավել խարջել ին. շատ արբաբ ին: Այս
 ջանիրէս կռիւ ին անում: Մահամադխան մեռաւ,
 իւր մեծ տղայ Ավդուլայրէկն էր դաւի անում: Ավ-
 դուլէն Ըսպհան էր, սորայ թվանգչիքն տվին, մին
 քանգառուռ ոմն, Իսախան անուն, ըսպանեցին: Այս
 Իսայխանս առաջ Մուսաբէկինց Իսախանին կշտին
 կացել էր, ապայ այժմուս գնացել էր, Միրզայ Իբրա-
 հիմի նօքար էլէր, եկէլ էր Ագուլիս վասն սոցայ դա-
 վուն: Վէզիրին մին Ղլիջ-աղին յետ էր, առաջի ինա-
 գուն տվին¹⁾, ըսպանեցին: Շատ կռիւ էլաւ: Ագուլիս
 այս ջանիրէս լ թուման զարար քաջեցին:

§ 46

Թվին ռնժը հոքտեմբերի Իբռւմն Ագուլիս ես Զա- 70x
 քարիայ որ այսօր Ագուլաց գուրս էլայ, որ գնամ
 Թարվեզ:

Դարցեալ հոքտեմբերի լառւմն ես Զաքարիա եկի
 Թարվեզ: Իմ Թարվեզ գալու պատճառն այս էր: Որ
 ես Զաքարիայ իմ եխպայր Սիմոնն Երևան զառաբի

1) Ձեռագրում՝ սվի:

էր: Սիմոնն ուզում էր, թէ գնայ Ըսպհան, Աբասղուլի խանին պարտքն տայ, Երևանայ Սէֆիղուլի խանն թողնում չէր, թէ՛ Աբասղուլի խանի վարիսներն գայ, փողն տանի: Ոչ նոքա էն գալիս, ոչ խանն թողնում էր, թէ Սիմոնն Երևանայ դուրս գնայ: Քանզի զառավ- խանեն Սիմոնի ձեռացն էր: Ես Ջաքարիայ այն թա- մասուկն, որ Սիմոնն տվել եր Աբասղուլի խանի փե- տայ Ջալ բէկին, ես էլ մհրել ի: Այս ջանիւրէս ես վա- խում ի, քանզի ոգն թուման էր: Ես Ջաքարիայ գնացի Թարվեզ, թէ գնամ Ըսպհան: Խո Սիմոնն թո- ղեց ոչ, թէ՛ գալիս ես Երևան: Ես Ջաքարիայ յուշվա- րի բումն թողի, հկի Ագուլիս յուշվարի ե:

§ 47 Թվին ոգն զեքսեմբերի¹⁾ ժե²⁾ ումն Ագուլիս որ 74v
Տաթեւիլու կրօնաւորաց անապատին հայրն, Արիստա-
կէս վարդապետն, այսօր առ Աստուած փոխեցաւ: Սուրբ
մարմինն տարան Տաթեւ, իւր շինած անապատն, անդ
թաղեցին: Սայ էր ի գեղջէն³⁾ Տաթեւու⁴⁾: Սորայ տեղն
նստաւ.

* մէկ տարոյ յետնայ Խոտանեցի Մովսէս
վարդապետն, քանզի մին տարի անհայր
մնացին. այս է:

1) 2) 3) 4) Հասկածի այս բառերը հեղինակը հետոյ ի ավելաց-
ոե բնագրում առաջնից տարբերվող թանաքով:

§ 48 Թվին ՌՃԺԹ յոռնվարի գ, տրէ գ, արամ ԻԲ, օրն 70v
 եշարաթ այսօր ես Չաքարիայ Ագուլիս ջրաւրհնիք
 արարի: Ջուրն գետումն աւրհնեցին նաղրով, զոնով:
 Օրն էր որպէս գարուն:

Թվին ռճԺ յոռնվարի ժուռն Ագուլիս այսօր ըստուք
 խաբար եկաւ, թէ օսմանցի Սուլթան Մահամադ թա-
 գաւորի վէզիր Մահամադ¹⁾ փաշայ²⁾ Գրիդն Ֆռանկէն
 առաւ: Քանզի թագաւորն Ուռումէլի ժէնգի ~ շահրումն
 էր օթրազ: Քանզի ք տարի այ, որ Ըստամբօլու դուրս
 էր թագաւորն ու վէզիրն: Թագաւորն գնաց ոչ Գրիդն.
 վէզիրն ասկարովն գնաց Գրիդն: Այս ԻԲ տարի այ,
 օսմանցին Վէնետիկին թուջին յետ Գրիդումն ք բէրթի
 վերայ կռիվ այ: Այս վեզիրս գնաց, ք տարի նստաւ,
 ք բերթն առաւ: Գրիդն ամէն օսմանցու ձեռաց էր:
 Մին մեծ բերթ, իւր պտղիկ բէրթն ու երկրովն վենե-
 տիկցու ձեռաց էր, առաւ: Ոչ թէ զօռով առաւ, այլ
 գրաւով: Քանզի Ֆռանսիսի թագաւորն մին մեծ մարդ
 գամով կու աղարկի Գրիդն իբր թէ վենետիկցու օգ-
 նական: Այս մարդն գայ, գինով կնի, մին օր դուրս
 գնայ ասկարով, թէ կռիվ: Օսմանցին կտայ, Ֆռանգ
 շատ մարդ ջարթէ: Ֆռանգի բերթի բէկն յետ կու փա-
 խի բերթն, դուռն բընդի: Այս Ֆռանսիս մեծ մարդն
 օսմանցիք³⁾ բռնէն, թէ՛ կամ բերթն տուր կամ չի՛ ես
 մարդս տալ չեմ: Այս պատճառէս բերդն մինչի ե փո-
 ղի զատն էլ կրեն նավերն, բերդն տան, մարդն սաղ

1) 2) Այս բառերն ել հեղինակը հետո լե ավելացրել բնագրում
 առաջնից տարրերովոյ թանաքով:

3) Ձեռագրում՝ օսմանցի:

առնուն նազն: Բ, զն նավ եր կանգնած. այս է. ֆռան-
գի նավ:

Թվին ռնծք յոնվարի Իուլն Ագուլիս որ այսօր 71r
Ադիլբէջանայ վէզիր Միրզայ Իբրահիմէն ծգ ձիաւոր
եկաւ, Կ լիզր թիլանի, որ է զ հողայ, քնար ապրիշում
բէրաւ, թահր¹⁾ տվեց Ագուլաց ու Դաշտին, թէ վէզի-
րն Շամախու է բերած, շահլուղայ է. Աստուած գիտէ.
լիզրն ժբռեճ դիան փողն տվէք: Աժմունքն ըն դիան
էր: Մին Ի թուման ել խարջեցին, գնացին վէզիրն,
էլաւ. ոչ, թէ բերողի ղուլուղ, թէ խորակ էլաւ: Այս Կ
լիզր ապրիշումս ու Ի թուման խարջն ագուլեցիք ու
դաշտեցիք ղաբուլ արին, վեր կալան: Դաշտեցոց ըռա-
սագ ապրիշումն ու խարջ ղաբուլ արին, տարան Ագու-
լեցոցն: Ագուլեցիք վեր կալան ապրիշումն ծախեցին
ըն դիան:

* Թէ խարջ, թէ ղուլուղ, թէ ապրիշումի
պակաս ծախեն, ամէն Ի թուման ղարար
քաշեցին թէ ագուլեցիք, թէ դաշտեցիք:
Ապրիշումի փողն յետ ք ամսոյ վեզիրէն
եկին, առան, տարան. այս է:

§ 49 Թվին ռնծք փետրվարի Իբուլն որ Ագուլաց մէլիք 74r
Շահնաղարն Թարվեզ մեռաւ, բերին Ագուլիս, այսօր
թաղեցին: Սայ էր Կգ ամաց: Խ տարի Ագուլաց ու
Դաշտին մելիքութիւն արաւ: Սորայ ավել անունն Բա-
ղալիջ կասէն, զերայ կարճիկ մարդ էր, լեզվով: Սայ
վասն ինադու թուրքացաւ, յետ գ տարու գնաց Ըս-
պհան, շահիցն յօքում առաւ, եկաւ: Շատ ապրեցաւ,
հայուլթիւն արար, հայայթաղ արարին: Սայ գնաց
Թարվեզ, գալ օրն յանգարծակի յիվանդանայ, միուս
օրն մեռնի, յայտնի բերէն Ագուլիս, հրաշալի թաղե-
ցին: Այսմ ամի Ագուլիս Միրզայ Իբրահիմի ղավ-
տումն էր. այս է:

1) Տպագիրը (յերես 37) կարդում ե՝ քանի:

§ 50 ԹՎԻՆ ՈՃԹ մարտի մէկուսն Թարվեղու վէղիւ Միր- 71r
 զայ Իբրահիմինանէ մարդ եկաւ, թէ՛ Միրզէն մին
 այքի այ նոր գծել, զճ տնգելոյ համար տնգի այ ու-
 զում, մալաչի տանձի, խնձորի, սումաղի, ծիրանի:
 Ամէն բհամ արին, աղարկեցին: Այս չափ տնգի էլ
 Շուռութու բերին այլվի զճ տնգի: Դարցեալ գ, էն
 յունի այլ ուրիշ տնգի Մեղրու տարան:

§ 51 ԹՎԻՆ ՈՃԹ ապրիլի գ, շամս ժգ, մէհէկի մէկուսն 74r
 Ագուլիս ես Զաքարիայ այսօր զատիկ արարի:

ԹՎԻՆ ՈՃԹ ապրիլի ժբումն Թարվեղու Միրզայ
 Իբրահիմէն Ալիդուլի բէկ անուն դարուղայ եկաւ
 Ագուլիս ժ ձիաւորաւ. ի օր կացաւ, ե թուման դու-
 լուղ տվին, ապայ գնաց: Օրն եռ դիան խարջ ունէր.
 այս է:¹⁾

§ 52 ԹՎԻՆ ՈՃԹ ապրիլի Իումն Ագուլիս Վերի Թաղն 75v
 Խուստէնց փողրակէն ես Ագուլեցի Քուրդունց մղգսի
 Աղամիրի որդի Զաքարէս որ այսօր ձեռն արկի, մեր
 հայրենի տունն վեր կալայ, նորն շինեմ. զերայ շա-
 տուց շինված էր: Մէկ մեծ ձմեռնատուն էր, որ գիւ-
 կէր գրած, բն տարի էր շինած. մին մեծ սրահ կէր,
 որ մին 6 բ տարի այ, շինած էր. այս է. մին քանի
 վերնատուն, ներքնատուն կէր յին շինած: Ես, վերոյ
 Զաքարէս, ողորմութեամբօք Քրիստոսի այսօր ձեռն
 տվի շինելու: Մինչևի նոյմբերի մէկն կարողութեամ-
 բօք Աստուծոյ ամէն շինեցաւ: Շինածս այս է. որ
 յարաւու կողմանէ մինչևի յիւսուս իբ գազ է. յարևել-
 եան մինչի յարևմուտ է գազ է: Դ կողմն այս է. յա-
 րաւային կողմն փողրակն է. յիւսուսային կողմն
 Մարխանեց Սէթու բաղչէն է. յարևմտեան կողմն այլվի
 Սէթու տներն է. յարևելյան կողմն մեր հօր ախպեր
 Սարկաւաքի որդին է, որ է Ալէքսան: Որ մեր տներն
 ձեռք տվիք շինելու, Ալէքսան էլ ձեռք տվեց, ինքն
 էլ շինեց. զերայ Աղամիրն, Սարկաւաք, որ է Ամիր,

1) Հաջորդում ե ձ հավելագրությունն ուրիշ ձեռագագրով:

սոքայ եխպայրք էին բաժանված: || Ես Ջաքարիայ իմ 76r
 շինածս այս է. ք մեծ, մին պստիկ ներքնատուն, մա-
 դաղայ, որ գումբազի այ, գաջով, քարով թաղ. մեծ
 մաղաղի գլուխն մին մին մեծ, որ ժք գաղ է, երած
 քարփիչով, գաջով, այլվի գումբազով, թաղով շինած:
 Այս մեծ օթաղի գլուխն մեծ քօչկ այ, որ էլ ժք գաղ
 է, Դարցեալ, օրթայ մաղաղի գլուխն մին քաշ թավան
 օթախ է, որ սանդուղ, թէ այլ շորի տէղ, ք դռնէ.
 մինն մեծ գումբազի օթախումն է, մինն դէպի բարան
 է. Այս օթախի գլուխն մին բացր թավան օթախ է,
 ք չարբարայ դէբի մեր բաղչէն: Այս օթախի գլուխն
 մին քաշ քօչկ այ: Դարցեալ, պստիկ մաղաղի գլուխն
 ճանապարհ է, ք, գ բարան է, որ գնայ մեր բաղչէն:
 Մեր բաղչումն կայ մին պղտիկ մուտքախտ: Որ էլաւ
 մեծ ու պստիկ ք օթախ: Ես Ջաքարիայ ամէն շինե-
 ցի, թէ ուստի, թէ արկաթեղէնի, թէ փայտի, թէ դուր-
 գար ու թէ գաջի, թէ քարի, չուրի ք տարին մի ըստ
 միոյէ դավտարումն ջոկ գրեցի. չուրի մին գինարն
 գրած եմ ուրիշ դավտարումն, թէ խորակ: Ամենայն
 հսարն տէսայ, ջամն տէղս գրեցի, որ էլաւ Կե թուման:
 Աստուած վայելումն տայ: || Դարցեալ, այս տներս որ 76v
 վերստին շինեցի, թէպէտ փոքր, ապայ գիտեմք թէ
 գրոց, թէ բրոց, թէ մեծ մամիս, որ էր Բանաւշայ,
 հարցանելով իմացայ, որ այս տներս բճծ տարի եղև,
 որ պապէ ի պապ, որդոց որդիք որ մեր ավաղն ժա-
 ռանգէ: Ես Ջաքարիայ այսպէս իմացայ գրոց, տէսայ,
 որ սոքայ էն. նախ և առաջ այլ ոմն. ք եխպայրք էին:
 Այս տան տէրն հօր անունն չիմացայ: Այս ք եխ-
 պարքս մինն Շախամիր, մինն՝ Աղամիր: Սոքայ բա-
 ժանեցան: Աղամիրի յիսէն այս գրած տներս այ: Շա-
 խամիրի յիսէն այս յարեմտեան կողմի տներն՝ այ:
 Շախամիրիս յիշատակ չմնաց. մնաց տունն անտէր:
 Սիթամով այլ ոմն Ամիրխան Շախամիրի տներն դավտ-
 կանի, կտայ իւր ախպէր որդի Մարխան, որ է տէղս

գրած Սէթու պապն: Դարցեալ, Աղամիրն առ Աստուած
 գնայ: Մնաց սորայ մին աղչիկ, անունն Բանաւշահ:
 Այս Բանաւշահս գնայ Խձայձոր, որ է Ներքի թաղն,
 մարդի, անունն Երանջան: Այս Երանջանս առ Աս-
 տուած գնայ: Մնաց ք տղայ, մին աղչիկ: Աղչիկն
 գնայ մարդու, մնաց Բանաւշահն, իւր ք տղերքն, մեծ
 տղի || անունն Աղամիր, պղտիկն՝ Ամիր, որ լաւ կար- 77r
 դացող դառցաւ, անվանեցին Սարկավաք: Այս Բանաւ-
 շահս որ իւր այրն մեռնի, օսմանլուի¹⁾ ժամանակ էր
 ու սղութիւն. այն Ամիրխանն կու գայ, թէ Աղամիրի
 յիսէն տէրութիւն անէ: Այս Բանաւշահս որբ գոլով՝
 փաշայ, շար ընկնի, գայ իւր հայրենիքն զափտ անէ,
 մարդի տներն ձեռաց գնայ: Այս Բանաւշահս տղոցն
 հարսանիք անէ. Աղամիրին ուզէ Ներքի թաղէն Գօ-
 ղալի դուստր Սավգուլն ու Սարկավաքին ուզէ մելիք
 Աղավելի դուստր Խոստրոֆն: Այս Բանաւշահս ծ տարի
 որբ մնաց, պատճառ հայրենի տներն ու տղերքն, թէ
 այլոց ձեռք չի ընկնի: Այս Բանաւշահիս մայր ունէր
 անվանի, մեծ ազգի, անունն՝ Խանում, որ որբ շատ
 մնաց: Տէղս գրած սրահն Խանումն էր շինել որբ ժա-
 մանակին: Շատ աշխատաւոր կին²⁾ էր: Աստուած իւրն
 ողորմի: Դարցեալ, Աղամիրէն, Սավգուլէն էլաւ ք զա-
 ւակ, գ աղչիկ գ տղայ: Դ տղէն պղտիկ մեռան: Մնաց գ
 աղչիկ, մեծացան, մեծն՝ Խանում, միջնակն՝ Փարիխան,
 պղտիկն՝ Զարիֆ, որ աւագանի անուն էր Հոփսիմէ:
 Սոքայ գն էլ ³⁾ գնացին մարդի, զաւակի տէր դառան:
 Ամայ Խանումն ու Փարիխանն ք ք մարդ առան, Զարիֆն
 մին մարդ առաւ: || Աղամիրի ք տղէն որ մնաց, մեծն 77v
 Շմաւոն է, որ այս դավտարումս⁴⁾ անունն գրած շատ
 տէղ կայ, պղտիկն դավտար գրող մեղաւոր Զաքարէս
 եմ: Դարցեալ, մեծ Խանումն, որ է մեծ Աղամիրի կը-

1) Ձեռագրում՝ օսմալուի:

2) » զին:

3) » էր:

4) » դաւաւումս:

նիկն, սայ մին մարդ առաւ, Բանաւէն մին մարդ առաւ, Աղամիրն մին կնիկ առաւ: Շմաւոն ք կին առաւ, առաջին՝ այս Մարխանի որդի Մուրադի դուստրն առաւ, անունն Գուլաղէն: Սորայանէ էլաւ ք տղայ, մին աղչիկ, անունն Շուշան: Շուշան գնաց մարդի, ա տարի մնաց, մեռաւ, զաւակ չի մնաց: Ա տղէն պղտիկ մեռաւ, ա տղէն, անունն Խանազատ, ք ամաց մեռաւ, ա տղէն Գրիգորն է, ահայ ծգ տարու է: Այս Գուլաղէս թվին ռճթումն մեռաւ: Այս Շմաւոնս գնաց Երևան, վերստին կին առաւ, անունն Գուլում, թվին ռճթումն: Դարցեալ, ես Ջաքարիայ թվին ռճգումն յունվարի իջումն որ առի ավել անունն Տրունկցունց Հերապետի դուստր Բէկումն ի կնութիւն: Ես Ջաքարիայ էի իգ ամաց, Բէկումն ծէ ամաց: Մեզնէ թվին ռճգումն էլաւ ա աղչիկ, անունն Մարիամ: Այս Մարիամս թվին ռճի առ Աստուած գնաց: Աստուած փոխն բարի յիշատակ տայ: Դարցեալ այս զավտարումս Քուրդունց Աղամիր շատ եմ գրել, գերայ Շախամիրի եխպայր Աղամիրն ավել անունն կոչէին Քուրդ վասն պատճառի: Դարցեալ Սարկավաքն մեռաւ, մնաց ք տղայ: Բ մեծ տղէն || մեռաւ, մնաց մին տղայ, անունն Ալէքսան: Այս Սարկավաքս մին կին առաւ. ք տղէն էլ ա ա կին առաւ. այս է: Աստուած սիրողն ասի այս նախնեաց մէկ հայր մեղայ: Աստուած ձեզ ողորմի:

* Սարկավաքի միջնակ տղի անուն էր Տէր-Մելքում, լաւ քահանայ էր. մեռաւ, մնաց ա տղայ, անունն Ոհանէս: Ես Ջաքարէս այս Տէր-Մելքումիս¹⁾ մօտ կարդացի: Թվին ռճիբ մարտի իջ ես Ջաքարես, իմ կին Բէգումն առ Աստուած փոխեցաւ: Այլվի այս թվիս օգոստոսի թումն ես Ջաքարես գնացի, Վերի գետցի Դիշի-գէդուտ Ովանէսին ունէր ազաբ աղչիկ իա ամաց, այս առի կին:

¹ Ձեռագրում՝ Տէր - Մելքումս:

Թվին ռնիգ հոքտեմբերի լառնն էլաւ
տղայ, տնունն Միքայել եղաւ:

1125 մայիսի իգումն, օրն զշաբաթ, էլաւ
մին աղչիկ, անունն եղաւ Սաւգուլ: 1127 մար-
տի գումն օրն բշաթի, ելաւ մին տղայ, ա-
նունն եղաւ Գափրիէլ:

** 1130 փետրվարի բումն օրն
զշաբաթ, մին տղայ էլաւ, ա-
նունն եղաւ Սահակ: Թվին 1132
ապրիլի բումն էլաւ մին տղայ,
անունն եղին Ովանէս, օրն բշաթ-
ի:

1134 յուլիսի ծումն, օրն որբաթ,
ինձ Զաքարիս ելաւ մին աղչիկ,
անունն եղաւ Բանաւշահ, որ է
իմ Զաքարիս հայրենի մամու
անունն: ¹⁾

§ 53 Թվին ռնծք մայիսի մէկումն Ագուլիս, թէ Դաշտն, 74v
թէ Ուրդուվար խիստ մեղացն մեր մորեխ եկաւ: Այս
բամ է, որ Ղափանն, Դգմար, Ղարադաղն մորեխ
խիստ կերաւ:

Թվին ռնծք յունիսի եումն այսօր Թարվեզու Միր-
ղայ Իբրահիմէն դարուղայ եկաւ Ագուլիս՝ համ մալիջ-
հաթն տանի, անունն Բահրամ բէկ, ի ձիաւորաւ եկաւ,
ք օրի կացաւ: Օրն մին թուման խարջ ունէր: Ապայ
ծէ թուման զուլուղ առաւ, ապայ գնաց միուս խասէրն,
զերայ Ե խասն էլ ²⁾ Միրզայ Իբրահիմի զաֆտումն էր
շահի հրամանաւ, այս է:

§ 54 Թվին ռնծք յունիսի ծումն որ այսօր մեր եխալայ 75r
Սիամոն, որ է Շմաւոն, Երեանայ եկաւ Ագուլիս մին
ի մարդ յետն, ոմն ֆռանկ, ոմն երեանցի հայ: Մին
ծ օրի կացան, յունիսի իգումն գնաց Թարվեզ, որ գնայ

1) Հաջորդում է Ե հավելագրութիւնն ուրիշ ձեռագագրով:

2) Զեռագրում էր:

Ըսպհան: Զերայ այս ժը տարի այ, որ Երևան խաների ղուլուղումն է. համ զառարի այ, համ խանի գարաք ժարաղ է: Գ խանն այս է. առաջ՝ Նաջաֆղուլի խանին, որ սորայանէ շատ շախ արար, յետով՝ Աբասղուլի խանին, յետով Սէֆիղուլի խանին: Շատ փող, ըողակ կիտեց, որ համբաւն Հնդստան ու Ֆոնգստան հասաւ: Ապա յետի խանն, որ է Սէֆիղուլի խան, սայ շատ սիթամ արաւ: Այս համբաւէս Շահ - Սլէյման յօքմ աղարկեց, զառաֆխանի պատճառէն տարան Ըսպհան: Ապայ կամօքն Աստուծոյ Ե ամիս կենդանի մնաց, ապայ դէքտեմբերի Էումն առ Աստուած փոխեցաւ, եղաւ Ըսպհան Զուղայու հանգիստներումն պատվով, նշանաւոր տէղի: Վերայ մեծ մատուռ շինեցին: Մահն աջալով, բիաջալն Աստուծոյ է գիտելի: Ամայ շատ դրամ գնաց, զերայ ոմն հախ, ոմն նուհախ, ոմն սիթամի, ոմն զալումի, որ մինչի մին տարին բոթուման սորայ գնաց: Վերջն, մնաց, էթէ ունի բարի գործ, Աստուած գիտէ:

§ 55) Թվին ռնծք յուլիսի Իգումն Ագուլիս որ ես Զաքարիայ մեր խիզանով, այլ ուրիշի խիզան, շատ ուխտվոր, գնացինք Բստու վանքն սուրբ Նշան ուխտ: Այս այն սուրբ Նշանն է, որ Քրիստոս աշակերտաց ոտնն լվաց, այս խաչս այն թաշտի պղինձն է: Սորայ առաջնորդն էր այս գեղիս, որ է Բստուցի, Ալէքսան վարդապետն: Գ օրէն գնացինք, եկինք Ագուլիս: 78v

Թվին ռնծք դեքտեմբերի ժեումն Ագուլիս որ Վերի թաղի սուրբ Քրիստափոր անվան եկեղեցին ինքնին փլաւ, զերայ գ խորանն երած քարփիշով ին շինել, այլն փայտով ին շինել: Զերայ այս եկեղեցիս Թաթէոս առաքեալն եր շինած. եկաւ մինչևի Թվին ռնծք վերստին այնպէս ին շինել: Քանզի բ թագաւորաց ժամանակին էին շինել. մինն՝ օսմանցոց Սուլթան Մուրադին, մինն՝ պարսից Շահ - Սէֆուհն: Այս բ թագաւորաց կռիւ էր Երևանայ բերթին վերայ, վասն այն՝

կէսն երած քարփիշով, կէսն փայտով շինեցին. վասն ահիւ մին տարով շինեցին: Այսպէս շինած եկաւ, մինչի թվին ռեթրումն փլաւ: Աստուծով մին քինթ չարիւնեցաւ, անփնաս մնաց Աստուծով: Սորայ առաջի շինողն Քրիստոսի առաքեալքն էին: Սոցա յետնայ Վերի թաղի խոջայ Գուլնազարն, Քիչիբէկն, Մալխանն վերակացու եղէն, ժողովրդեան փողով շինեցին, մինչև էհաս այսմ ամի: || Թվին ռեթ ըսկիսքն արարին յին եկեղեցին վեր կալան, յիմն գծեցին քարով, կրով, Գուրդստանայ ուստայ բէրին, շինեցին մինչի էհաս հողի հավասար: Թվին ռեթա այլվի Գուրդստանայ լ ուստայ եկին, տաշած քարով շինեցին, մինչի նոյմբեր ամիսն հասաւ դռների գլուխն. Գ դուռն ունի՝ յարեմուտ, յարաւ, յիւսուս¹⁾: Թվին ռեթ մարտի Իռմն այլվի Գըրդստանայնուն ուստէքն եկին. այսմ ամի Խ ուստայ եկին, այլվի տաշած քարով հասուցրին մինչի փայլի թաղ: Նոյմբերի մէկունն ուստէքն վարցն առան, գնացին: Դարցեալ, այս եկեղեցու Գ որմին Իե խաչ, ոմն պատկեր վասն յիշատակի գրեցին: Այս դավտար գրող Զաքարէս մին Աստուածածնոյն պատկերն ես գրել տվի: Ամէն խաչի, թէ պատկերի մէկ մէկ թուման տվին եկեղեցուն:

§ 56

* Թվին ռեթ եկեղեցոյ ավաք խորանն մարտի Իթ աւրհնեցին, որ պատարագ անէն: Միայն Բ խորան էր ծածկված²⁾ այսմ ամի. այս է:

§ 57

** Թվին ռեթ մայիսի Իեռմն այլ- ibid. վի վերոյ Քրտուստանուցն³⁾ Ժը ուստայ եկօ, ասպարէքն կապեց, կիսատ բաներն շինեց, ել քարայրան չմնաց: Դարցեալ յասմ ամի Բինիստու ուստայ բերին, մեր

1) Ձեռագրում՝ յիւուս:

2) , ծածկված:

3) , frsotusուցն:

վանքի դռանն փուռն շինեցին:
 Վանքի հողէն քարփիշ երեցին,
 բերին եկեղեցոյ զ քունջ պու-
 ճաղն զ փոշիշն արարին: Այսմ
 յամի այս եղև:

Թվին ռճիզ ապրիլի ժէկն այլ-
 վի Բրդստանայ նոյն ուստէքն ժէ
 ուստայ եկաւ, միջի զ կամարն քա-
 րով տաշած կապեց, կիսատ քարէ-
 բան, թէ սեղան, ամէն շինե-
 ցին: Դարցեալ, տէլիս ուստէքն,¹⁾
 Բ ջուղեցի ուստայ, մէկի ան-
 ունն Ուլանէս, մինն՝ Խունդվիլի,
 սոքայ երած քարփիշով գլուխն
 փոշիշն արարին: Մնաց կաթու-
 ղիկէն դարցեալ Բրդստանայ ուս-
 տէքն: Մեծ ուստէն էր ի գէղէն
 Մոկսու: Ահա կատարեցաւ: Աս-
 տուած անփորձ պահէ:

¹⁾ Ձեռագրում՝ սուսէկն:

Ջաքարիա Ազուրեցու Որագրութիւնը—7.

§58 ԹՎԻՆ ՌՃԻ յՈՒՆՎԱՐԻ Վ, ԽՐԷ Վ, ԿՐԱՄ ԻՔ, ՕՐՆ ՈՒՐ 79v
բաթ, ես Ջաքարիայ այսօր ջրաւրհնիք Ագուլիս արարի
Աստուծով:

ԹՎԻՆ ՈՃԻ յՈՒՆՎԱՐԻ ՔՈՒՄՆ Ագուլիս որ Ըսպհանայ
շաթիր եկաւ մեր վանքն, գիր բերաւ Պետրոս վար-
դապետին վերայ: Վարդապետն ինձ Ջաքարէս տարաւ
եկեղեցին, ծածուկ սև գիր տվին ձեռս, տեսայ գրած
այսպէս. ջուղեցի խառատ ուստայ Յակոբջանէս, շոռ-
թեցի խօջայ Ջաքարէս, անապատցի խօջայ Սարգիսէս
մալումնի Պետրոս վարդապետին ու Սիամոնի եխպայր
Ջաքարին, որ իմանաք, դէքտեմբերի Էռմն խօջայ
Շմաւոն առ Աստուած գնաց: Խիստ շատ պարտք ու
շատ հսաք ունի. ամէն գրած էնք, մհրած: Հալբաթէ
Ջաքարէն գայ. թէ որ յետի գայ, մարդ կու գայ, կու
բերէ, շատ դարդիսար կուտան. ահա ձեզ գրեցի: Դար-
ցեալ, ես Ջաքարէս որ այս սև գիրս տեսայ, գ կսկիծ
մտաւ սիրտս. մէկ որ ախպօր մահն, ք որ պարտքի ահն,
գ որ ճանապարհի ցուրտ ու ցաւն: Այլ ճար չի մնաց. ա-
սացի, թէ՛ այլ ումմէքէ ասիլ միք. այսպէս գիր կամ
խաբար Ադամայ որդոց ոչ գոյ: Զերայ պարտք շատ
ունէր. ահայ առաջի կայ գրած այսպէս: || Դարցեալ, ես
Ջաքարիայ որ այս սև խաբարս լսեցի, ժք օր Ագուլիս
կացայ, մարդի ասացի ոչ: Ապայ յՈՒՆՎԱՐԻ ԻԱՌՈՒՄՆ
Ագուլաց դուս էլայ, դառն, տրտում գնացի Ըսպհան:
Դարցեալ, ես Ջաքարիայ որ տանէ դուս կու լինիմ, մին
աղչիկ ունէի, յետ ժ օրէն յետնայ առ Աստուած գնաց:
Այս պատճառէս բերէն Շմաւոնի խաբարն կու տան.
մին կսկիծն ու դառցաւ: Ես Ջաքարիա փետրվարի ժը-
ռմն գնացի Ըսպհան, մին քանի օր կացայ, տեսնում

Աբասղուլի խանի վարիսներն գան, ինձ բռնեն, թէ՛
 Շմաւոն մեզ զնձ թուաման մին է տալու, զնիս թուաման
 փողի շախ ա տալու: Այս Աբասղուլի խանի վարիսներս
 մեծայմեծ մարդիք էն, որ մինն շահի մուհըրդարն
 է, մինն՝ շահի էշիկ-աղասի այ, մինն ուզբաշի այ.
 ամէնն մեծայմեծ մարդ են: Պատճառն այս է, որ այս
 Շմաւոնս Երևան համ զառարի էր, համ ըռահտար:
 Աբասղուլի խանս Երևան խան էր: Այս խանս կու
 մեռնի աջալով: Խանի վէքիլներն Շմաւոնիս հսարն
 կուտէսնուն: Շմաւոնս բոթն թուաման սանադով խանին
 տալու կընի, տված կնի: Մնաց Բաղի խանին տալու
 ուրնիս թուաման: Մնաց զառաֆխանին ջանիրէ տալու
 բնէ թուաման: Որ Շմաւոնս էլաւ խանին տալու ուզն
 թուաման: Այսպէս սանադ կուտայ խանի վարասնե-
 լուն, || թէ՛ չուրի զ ամիս բերեմ Ըսպհան, տամ: Թէ՛ 80v
 զ ամիսն թամամի, տամ ոչ, այս մալլաբիս օրն էռէն
 ա աբասի պակաս շախ տալու լինիմ: Ես Չաքարէս
 այն ժամանակին ինձ տարաւ Երևան այս Շմաւոնս,
 շատ աղաչանք պաղատելով ինձ այս ուզն թուամանիս
 զամին տվեց: Չերայ Աբասղուլի խանի վարիսներն
 դայիլ չի կացան, թէ՛ դու Երևան Սէֆիդուլի¹⁾ խանի
 դուլուլումն էս. բալքի քեզ թողնու ոչ, գաս Ըսպհան:
 Քո ախպեր զամին կէնայ, որ փողն դու տաս Չաքա-
 րէն, Չաքարէն բերի Ըսպհան, տայ խանի վարասներն,
 գիրդ առնու, բերէ: Չերայ Աբասղուլի խանն մեռաւ,
 տէղն լազդի Ալխաս - Միրզին տվին, որ անվանեցաւ
 Սէֆիդուլի խան: Այս մին տարի այ, որ Աբասղուլի
 խանն մեռաւ, տարան Մաշադն, տէղն նստաւ Սէֆիդուլի
 խանն: Դարցեալ, այս Շմաւոնս եսօր, վաղն գծելով
 այս պարտքս մնայ: Ես Չաքարէս քանի անգամ վերս-
 տին գնացի Երևան, այս Շմաւոնիս յետ կռիւ, շատ
 խռովութիւն, թէ՛ կամ դու գնայ Ըսպհան, քո պարտքն
 տուր, իմ զամինլամէն առ, տուր ինձ, կամ փող տուր,

1) Ձեռագրում՝ Սէֆիդուլի:

ես գնամ: Այսպէս ասելով, ետոր, վաղն գձելով մնաց,
մինչ որ¹⁾
. դուս մնաց Ջուղայ, խառատ Յակոբջանից 83v
տան սմանաթ: Ամէն մի ըստ միոյն գ դավտար գրե-
ցաք: Մինն տվի Յակոբջանի տղայ Եաղուբն: Յակոբ-
ջանն մարտի իթումն առ Աստուած փոխեց: Մինն տվի
շոթեցի խօջայ Ջաքարէն: Մինն ես Ջաքարիայ ա-
ղարկեցի Շմաւոնի կնգանն: Այս այսպէս եղև: Դար-
ցեալ, ես Ջաքարիայ թէ ինչ չարչարանք քաշեցի, գնա-
ցի, զամինով մլթանուց թէ բաղրկանից եճ թուման
պարտք արի, գողի նման թվին ռճի յուլիսի ժգումն եկի
Թարվեղ: Ես Ջաքարիայ Թարվեղ ել թաքրար զամին
տամ, օգօստոսի էումն Թարվեղու դուս գամ, օգօս-
տոսի թումն գամ Ագուլիս, պարտք անեմ, տամ մեր
փեսայ Աստուածապոյն, գնայ Թարվեղ, տայ մօլթո-
նիքն, իս թամասուկն ու զամինլամէքն առնու, բերի
Ագուլիս, ինձ Ջաքարիս հասնու: Դարցեալ, թվին ռճի
սեփտեմբերի իգումն ես Ջաքարիայ Ագուլաց դուս ելայ,
հոքտեմբերի մէկումն եկի Երևան: Քանզի քանի որ եխ-
պայր Շմաւոն մեռած էր, եկել չի Երևան, այսօր եկի
Երևան: Այս Շմաւոնիս ք տղայ, մին աղչիկ կեր Երե-
ւան: Եկի, տեսայ, թէ մին ամիս է, որ Շմաւոնիս ք
տարեկան մին տղէն, Ահարոն անունն, մեռած: Այս
էլաւ կրկին կսկիծ: || Դարցեալ, ես Ջաքարէս որ եկի 83v
Երևան, գնացի, խանն տէսայ, ամէն տէսայ, թէ ջա-
բայ, թէ այլ ինչ փէշքաշ քաշեցի, գնացի Աբասղու-
լի խանի վէքիլ Վելի աղէն, Միրզա Զէնալաբադինն
տէսի: Ըսպհանայ բերած գիրն նշանց տվի, ասաւ՝ լաւ
է: Սայ էլ ընկաւ ուրիշ բան. գահ ասաւ, թէ՛ այն գիրն
աղարկել ամ Ըսպհան, գահ թէ՛ Սիամոն ժե թուման
պակաս այ տվի: Թէ այսպէս, թէ այնպէս, չուրի գ
ամիս սայ ել մեղ չարչարեց: Վերջն մարդ ընկաւ մէջ,
մին քանի թուման իւրն տվին, այն ք թամասուկն,

1) 81-րդ և 82-րդ թերթերն (81rv և 82rv) ընկած են:

որ մինն ուրեքն թումանի, մինն բն թումանի, որ
 Շմաւոնի ձեռացայգիրն, մուհրն վերայ, ես Չաքարէս
 զամին ու մուհրս վերայ, այս բ թամասուկս առնեմ,
 Ըսպհանայ բերած խանի վարասներուն մհրով գիրն
 տամ, այս բ գիրս առնեմ: Ահա ազատեցայ, զերայայս
 եամէ, որ ես Չաքարէս այս գիրիս դարդունն էի, Աս-
 տուծով առի, պրծայ: Դարցեալ, ես յետ խանի դարդն:
 Խանն ես Չաքարէս բռնեց, թէ՛ Շմաւոնիցն և ոսկիս
 ուզեմ,¹⁾ որ տվել ամ, տարել Ըսպհան, որ խանջալ
 շինէ: Խանջալն կամ ոսկին տուր: Խանջալ չկայ, այս
 և ոսկուս թէ թուման դուս գնաց: Մին ել բռնեց մին
 թարքաշի դավի. Ի թուման դուս էլաւ: Մին էլ բռնեց,
 գիր հանեց Շմաւոնի մհրովն, թէ կարմունջի || վերայ 84r
 ըռահտար էր Շմաւոն, և թուման բաղի կայ, ահա իւր
 գիրն. շահի ապրանք այ, մեր չէ, բեր, տուր: Ես Չա-
 քարէս ասի, ես խաբար չեմ: Ես յետ խանն վեր առաւ,
 թէ՛ լաւ այ, այս և թումանս տալ չես, ես ել Շմաւոնի
 զառավխանի հաաբի մուաֆասէն մին բանի համար
 ուղեղ անք աթոռակալն էջմիածնունն պահի, ես ել ես
 մուաֆասէն տալ չեմ. Շմաւոնի զառավխանի հաաբն
 նորն կու տեսնում: Թէ որ տէսնու, խան ինքն, բէկ
 ինքն, դազի ինքն, ինադ կանի, բռ թումանով պրծա-
 նիլ չէ. ես յետ մարդ մէջ ընգան, չուրի զ ամիս և
 թումանի ես Չաքարէս խանին գիր տամ, որ զ
 ամիսն թամամի, տամ: Ես յետ խանն մարդ աղարկի
 նախավկայն, աթոռակալ Միքել վարդապետն բերէ,
 վարդապետն գնայ էջմիածինն, մուաֆսէն բէրի, ես
 Չաքարէս իմ կշտիս տայ խանն, խանն տայ ինձ: Ահա
 այս գրիս ել ազատեցայ. զերայ Շմաւոն Ըսպհան գը-
 նալու վախտն խանին յետ գուֆտուգու ունէին, վասն
 այնորիկ այս մուաֆասես դրել ին ամանաթ: Այս այս-
 պէս էլաւ: Դարցեալ, ես յետ մինն գալիս այ, Ի թու-

1) Ձեռագրում՝ ոսկի գուզեմ: Կարելի չե առաջին գ-ն ավելորդ
 համարելով վերջանել ոսկի ուզեմ:

ման ուղում, մինն զառավիսանի դավի այ անում,
մինն քաթիբու դավի անում, մինն՝ գեղի, այս ամէնն
սուտ դավի են անում: Տէսայ ել իլաջ չի կայ, լաւն
այն է, որ Շմաւոնիս խիզանն || վեր ունիմ, գնամ 84v
Ագուլիս: Ես Ջաքարիայ գնամ, խանիցն դաստուր
ուղեմ, թէ մեք կարիլ չենք տէղս կենալ: Ամայ մինչի
ի, 1 թուման դուս ելաւ, ապայ դաստուր տվեց:
Ես Ջաքարէս գ օրէն միջում ծածուկ բանս տէսնում,
Շմաւոնի կինն, ա տղէն, մին աղչիկն, թէ նօքար,
թէ բարեկամ, ժբ, ժգ մարդ սուրբ Սարգիս շաքաթ
գիշերն Երևանայ դուրս գամք Աստուծով, գանք Խոր
Վիրաբումն գ օր կենաք, տեսնուք, թէ ել ուրիշ վա-
րաղ չի փոխէն: Ապայ փետրվարի գումն Երևանայ
դուս եկի, փետրվարի ժառանգ եկինք Ագուլիս: Ես Ջա-
քարէս շատ չարչարանք քաջեցի թէ Ըսպհան, թէ
Երևան, քանի քանի անգամ զիս բռնեցին, զնդան
գձեցին, բուխավեցին վասն այս վաթանի մոլորած
ախպօր Շմաւոնիս համար: Էթէ ամէն բան, ամէն ջա-
ֆայ գրել ի, ժ գավտար լինէր: Դարցեալ, մեր քեռի
Ղուգազն ել շատ ջաֆայ քաջեց, գերայ այս Շմաւոնս
Ըսպհան գնալու ժամանակին այս քեռու տղայ Ղու-
գազըս աղարկէ, Ագուլաց տանի Երևան, գնի իւր տանն,
կենայ. համ վեքիլ կանի, որ իւր առուտրին հաբն
տէսնու, չուրի ինքն Ըսպհանայ գայ: Այս Ղուգազս
ել այս ջանիքէս ընկաւ այս բանիս մէջն: Այս Ղո-
գազս Շմաւոնի կնգան փողն էր բանացանում: Այս այս-
պէս էլաւ: Աստուած փրկէ փորցանաց: || Դարցեալ, ես 85v
Ջաքարիայ ահա այս ժգ ամիս եղև, որ շատ շատ չար-
չարանք, շատ փորցանք, շատ տրտմութիւն, շատ կրս-
կից եկաւ մեզ վերայ վասն իմ անպատմելի մեղացն:
Այս է. որ թվին ռեթ նոյմբերի իթումն Ագուլիս որ
ես Ջաքարէս իմ աների տղայ Շահնաղարն Ըստամ-
բօլ այս ժէ ամիս էր, որ մեռած էր. այսպէս, որ գնում
էր Ըստամբօլու Սև ծովու բողաղն, դայիչն շուր կու-
տայ. ք ագուլեցի, ք դայիղչի կնի. ք ագուլեցին, ա

դայիղչին քնած կնի, մէկ դայիղչին՝ զարթուն: Հայիղն շուռ կտայ, գ հոգին քնած կու խէղդի ծովումն, մին զարթուն դայիղչին ապրի: Այս Շահնազարին խաբարն նոյմբերի իթումն Ագուլիս տվին: Այս եղև նախ և առաջ կսկիծ: Դարցեալ, յետ սորայ թվին ռնծք դեքտեմբերի իթումն Ըսպհանայ գիր եկաւ, թէ Շմաւոն գիր նաչաղութիւն քաշեց, ապա այժմուս լաւ է: Յետ սորայ թվին ռնծ յունվարի թումն Ագուլիս այս մասկանի ելած մոլոր ախպէր Շմաւոնիս մահվան սև խաբարն եկաւ Ագուլիս: Ես Զաքարէս դառն, տխուր գընացի Ըսպհան, ի Զուղայ, այս ախպօր գերեզմանն տեսայ: Եկի Ագուլիս, միայմօր մին աղչիկ ունէի տան, ծղ ամաց, եկի, թէ մեռած. սորայ գերեզմանն տեսայ: Յետ այնորիկ գնացի Երևան, եխպայր Շմաւոնի տըրտում կինն, մոլոր երեխէքն տեսայ. մին տղայ. էլ նոր մեռած՝ գերեզմանն տեսայ: Այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց: Այս բանիս կատարումն եղև թվին ռնծա փետրվարի իթումն Աքուլիս:

§ 59 Թվին ռնծ մարտի ետմն ես Զաքարիայ այսօր բուն 87v բարէկենդան Ըսպհան, ի գիւղն Զուղայ արարի:

Թվին ռնծ մարտի ժառումն Ըսպհան շատ թամաշայ արարի. գերայ նավուղ էր: Շահն դուս եկաւ, փէշքաշն քաշեցին. ամէն խան շահին քաշեցին:

Թվին ռնծ մարտի իթումն Զուղայ որ ջուղեցի ուստայ Յակոբջանն մեռաւ, սայ շահի դուրգար էր: Շատ թուր ջրի հորեր կու շինէր: Տարին չ թուման շահիցն դօնուղ կուտէր:

Թվին ռնծ ապրիլի իգ, մէհկի իա, ադամ գումն Ըսպհան, ի գիւղն Զուղայ ես Զաքարիայ այսօր զաւիկ արարի:

§ 60 Թվին ռնծ մայիսի իթումն Ըսպհանայ Զուղայ մին 86v Ռհան անուն չի վարդապետ ջուղեցի, սայ քուրդացաւ, շատ զարար տվեց Զուղու, ես առավել հովատի պակասութիւն: Անունն եդին Շխ - Մումին:

Թվին ռնծ յունիսի թումն Ըսպհան շահիցն ըռաքի

եկաւ, ես Ջաքարիայ ինձ բռնեցին, բռնաւեցին, տա-
րան շահի ժէյլաղն, զերայ շահն ժէյլաղումն էր: Մին
երեւանցի գնաց, շահին արդ տվեց, թէ՛ զառաքի Սիա-
մոնն մօտ այսչափ փող ունիմ: Սիամոնի ախպօրիցն
ուզում էմ, տալիս չէ. ուր որ գնում էմ, դիվանս ա-
նում չէն: Շահն ըռաքի կուտայ, բուռումիչ կանէ, թէ՛
դիվանբէկին հաղիղաթին հասնու: Այս ջանիրէս ես
Ջաքարէս գնացի Դէհիքուրտ ժէյլաղն. շահն տէղս էր:
Մինչի ժէ օրի ես ժուրդումս դիվան անէ, են ժուր-
դումն դիվան անէ, ախրն դիվան արաւ: Ես Ջաքա-
րիայ մին քանի թուման խարջեցի, պրծայ. ամա շատ
փորձանք քաշեցի, զերայ նաչաղ էի: Նաչաղ գնացի,
նաչաղ եկի Ըսպհան: Այսմ ամի էր թագաւորն Շահ-
Սէյլէման, էհտիմալ ղօլաթն էր Շխալի խան, դի-
վան - բէկին էր Ջանի խանի մեծ տղէն, անունն Աբաս-
ղուլի բէկ: Ես Ջաքարէս գնալ ու գալն մին ամիս քա-
շեց: Իմ մեղացն է:

§ 61

Թվին ոճի յուլիսի ժգումն ես Ջաքարիայ այսօր 87v
Ըսպհանայ դուս եկի:

Դարցեալ, ես Ջաքարիայ յուլիսի ժըումն եկի Քա-
շան:

Թվին ոճի յուլիսի լումն վարդայվառ Հաջի-աղումն
արարի:

Դարցեալ, յուլիսի լաումն այսօր Ըսպհանայ եկի
Թարվեղ:

Դարցեալ, օգօստոսի էումն ես Ջաքարիայ Թարվե-
ղու դուս եկի:

Օգօստոսի թումն եկի Ագուլիս:

Թվին ոճի սեփտեմբերի ըումն Ագուլիս, օրն ուր- 88r
բաթ, Յինն ժեումն Յինն խավարեցաւ առաջի իրի-
գունն, որ բռնէն մինչի բացվիլ ու պարզիլն գահաթ
անցաւ, շատ խաւարակալաւ:

Թվին ոճի սեփտեմբերի իգումն ես Ջաքարիայ այ-

սօր Աղուլաց շատ ջուճիաթով, զ կնիկ ել, գնացինք¹⁾
 Խոր Վիրաբն ուխտ:

Հոքսեմբերի առաջն աշուր եկի Երևան, գնացի մեր
 եխպայր Շմաւոնի տունն, խիզանն տէսայ: Զերայ
 Շմաւոն Ըսպհան մեռած էր, գնացի Ըսպհան, աշուր
 եկի Երևան:

Թվին ռճի նոյմբերի բռնն Երևան որ Սէֆիղուլի
 խանն իւր աղալարոյն, շատ մարդով գնացին Շահ-
 -Սէյման թագաւորի նազիր Մասդուդ բէկին փէշվազ,
 որ գնում էր Հաջ: Ժբ օր կացաւ, գնաց Աղուլում: Յետ
 քանի օրէն շահի մաշադալ-բաշին եկաւ Երևան, գնաց
 Հաջ: Այսմ յամի դիր շատ մարդ գնաց Հաջ. դիր շատ
 գնացին:

§ 62 Թվին ռճիռն օսմանցու Սուլթան Մահամադ թա- 87r
 գաւորն, իւր վէզիր Մահամադ փաշէն ասկարով գնան
 Լեհի վերայ մինչի Կամենից, Կամենիցու քաղաքն իւր
 երկրոյն առաւ. անթիւ զօրօք գնաց:

* Թվին ռճիգ Սուլթան Մահամադ թագա-
 ւորն մին քանի ռ մարդով դուս կու լինի
 Բաբայդադու յետ գնայ ինադով, կուտայ
 Մաշաուի սնօրների քրիստօնեաքն ամէն
 գերի անէ, ոմն սուր քաշէ, ոմն գերի անէ,
 բէրի Աղրանայ: Ասացին թէ ձու ջան ծախ-
 վեցաւ, թողց սուր քաշածն: Այս պատճառ
 դրաւ, թէ՝ ուզում էն, որ դօնմիշ լինին, ես
 ել աշսպէս արարի: Ապայ շատ հայ ու հռօմ,
 այլ ազգ, շատ բէրաւ տնով. ոմն Հուլուբայ,
 ոմն այլ տէղ Ուռումէլու, ոմն Աղրանայ,
 ոմն բէրաւ Ըստամբօլ, աշսպէս թէ քաղաք,
 թէ գիւղ բնակեցան, մնացին:

Թվին ռճիե ապրիլի Իռնն Սուլթան Մա-
 համադ թագաւորն եկաւ Ըստամբօլ:

Թվին ռճիէռնն ապրիլ ամսոյն Ըստամ-

1) Զեռագրում՝ գնացին:

բօլո՛ւ Սո՛ւլթան Մահամադ թագաւորն իւր
վէզիր Մուստաֆայ փաշա դուս ելան անթիւ
զօրօք, գնաց Ադրանիայ, մեծ սաֆար կան-
չեց Մօսկօվին վերայ:

**** Ուր գնաց Լէհն. ազգ մի կայ,**
անուեն Տրէշան, գնաց այս Տրէ-
շանիս վերայ, որ այս ազգս առ-
նէ, որ Մոսկօվո՛ւ սահրատն է,
առնէ, ապայ թէ գնայ Մօսկօփն:
Թէ Մօսկօվ, թէ Լէհ, թէ Տրիշան
այս տէղ կռիվ տվին, օսմանցո-
ցանէ մին ճձեռ մարդ ըսպանվե-
ցաւ: Մին դարդակ բէրթ առին,
դարցան, հկին Ատրանայ թէ թա-
գաւոր, թէ զօրք: Օսմանցիք այս-
պէս մնաց խայտառակ:

§ 63 Թվին ՌՃԻԱ յունվարի գ, տրէ գ, արամ Իբուժն 88v
Երևան ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Երևան արա-
րի:

Թվին ՌՃԻԱ փետրվարի գունն Երևան ես Զաքա-
րիայ այսօր մեր Շմաւոնի խիզանն որ կնիկն, մին աղ-
չիկ, անուէն Սալվինազ, մին տղայ, անուէն Աղամ,
որ է Աղամիր, թէ նօքար, թէ բարէկամ, որ ժբ հոգի
վեր առի, դուս եկի. փետրվարի ժառանգ խիզանով
եկինք Ագուլիս: Թէ տուն, թէ մուլք, թէ աջհաս, թէ
սանդուղ, թէ խորակ, թէ շոր, թէ պղինձ, ամէնն թո-
ղաւ Երևան: Միայն իւրեանց ք դաստ հաքնելու շոր վեր
կալանք, եկինք Ագուլիս: Ամայ դիամաթ ցուրտ այ:

Թվին ՌՃԻԱ ապրիլի է, մեհեկի գ, շամս ժթունն ես
Զաքարիայ զատիկ այսօր Ագուլիս արարի: Դարցեալ,
այսմ տարի աշունքն մինչև ջրաւրհնիքն ձուն չկեր:
Ենքան չեկաւ ձուն, որ գետինն ծածկէր: Ապայ յենց
չոր ցուրտ էր, որ շատ մարդ զարմայնայր, որ չէին տե-
սել: Ապայ այսույետե սկսաւ կրկին ցուրտ անելն, ձուն
գալն մինչև ապրիլի բունն: Շատ անասուն չորքոտո-
նեանց կոտորումն եղև, շատ ճանապարհ, սարեր կա-
պեցաւ:

§ 64 Թվին ՌՃԻԱ յունիսի ժգունն որ Երևանայ Սէֆի- 89v
դուլի խանէն մարդ եկաւ այսօր Աքուլիս, ես Զաքա-
րիայ, իմ քեռու տղայ Ղոգագն տարան Երևան վասն
մեր եխպայր Սիամոնի և թումանու կարմունջի
բաղուն համար: Զերայ Շմաւոն ըռահտար էր, բաղի
ունէր, մեք Շմաւոնի վեքիլ ինք, տարաւ, առաւ և
թուման, ինչպէս իւր դավտարումն զրած ենք: Դար-
ցեալ, օգոստոսի Իբ եկինք Աքուլիս:

§ 65 ԹՎԻՆ ՈՃԻԱ յՈՒԼԻՍԻ ԺԳՈՒՄՆ ՎԱՐՂԱՎԱՌ ԿԻՐԱԿԻ 90v
 օրն Երևան ի սուրբ Էջմիածինն Յակոբ կաթողիկոսն
 ժողով արար եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանա-
 յից, աշխարհականաց, մինչի գ, գռ մարդ կէր, խանի
 քարանաչի, շատ երկրի մարդ եկին, որ այսօր սուրբ
 մէռն աւրհնեցին: Դարցեալ, Գանձասարու Պետրոս
 կաթողիկոսին գավազան իշխանութիւն տվեց, քանզի
 կաթողիկոսութիւն վարէր, ապայ օրէնք չէր. այժ-
 մուս տվեց: Շատ ուրախութիւն եղև. սիրով և յօժարու-
 թեամբ գնաց Գանձասար: Ես Աքուլեցի Աղամիրի որդի
 անարժան Ջաքսրէս ականատէս եղայ այսմ շնորհաց:
 Դարցեալ, ես Ջաքարիայ յետ ե օրէն գնացի վերոյ
 վանորայքն ուխտ: Առաջ գնացի Ուշական, մեր հայոց
 թարգմանիչ, գիւտ գրոց Մեսրոփ վարդապետի գերեզ-
 մանն համբուրեցի: Գնացի Մուղնու վանքն, սուրբ
 Գէորգայ մասն համբուրեցի: Սորայ առաջնորդն էր
 մուղնեցի Դաւիթ վարդապետն: Յետով գնացի սուրբ
 Կարապետ Ոհանայ վանքն, Ոհանու մասի գերեզմանն
 համբուրեցի¹⁾: Սորայ առաջնորդն էր կարփեցի Ոհանէս
 վարդապետն: Դարցեալ, գնացի սուրբ Սարգսի վանքն,
 սուրբ Սարգիսի մասի գերեզմանն համբուրեցի: Սո-
 րայ առաջնորդն էր երևանցի Ոսկան վարդապետն.
 այժմուս գնացել էր վասն գրքեր բասմայ տալու, որ
 այս թ ամ է Ֆռնգատան է: Սորայ տէղայպահն էր
 երևանցի Պօղոս վարդապետն: Աստուածաշունչն այս
 Ոսկան վարդապետս հանեց բասմով, շատ շատ գրգէր
 հանեց: Հայոց կրկին թարգմանիչ էր սայ. || Դարցեալ, 91r
 գնացի Սաղմոսավանք, Լուսաւորչի իւր ձեռամբ շի-
 նած խաչն համբուրեցի և այլ սրբոց գերեզման համ-
 բուրեցի: Դարցեալ, գնացի ձորի միջի գետի վերայ
 անապատն, որ Լուսաւորչի անապատ կոչէն: Սաղմո-
 սայվանքին առաջնորդն էր կարփեցի Դարբիէլ վար-

1) Ձեռագրում՝ համուրեցի:

դապետն: Լուսաւորչի անապատի հայրն էր խորժցի Տէր Սիմոն: Ես Ձաքարիայ գ օր ալս վանքերս ուխտ արարի: Դարցեալ, յետոյ Եղլարթայ վերայ անց կացի, եկի Ղրխ-բուլաղն, գերայ Սէֆիղուլի խանն եկել էր էյլախ: Ես Ձաքարեայ խանիցն ըստղաթ առի, եկի Երևան, բէրթն: Դարցեալ, օգոստոսի ժեռումն ես Ձաքարէս, իմ քեռու տղայ Ղօգաղն այսօր Երևանայ դուս եկինք, եկինք այսօր Խօր Վիրաբն: Գալ օրն ղալավուղ բռնեցինք, գնացինք Ակուռի, սուրբ Յակոբ Մձբնայ հայրապետի աղբիւրն, ուխտ արարաք, այլլի այսօր եկինք ի Վիրաբն: Ամայ գնալ ու գալն ժգաղաջ կայ. դժվար ճանապարհ է: Դարցեալ, օգոստոսի ժեռումն աստուածածին ի սուրբ Վիրաբն արարինք: Օգոստոսի իռումն Վիրաբէն դուս եկինք, օգոստոսի իբումն եկինք Ագուլիս Աստուծով. այս է:

Մին գրգում տէսայ, թէ թվին ռղաումն փոքր Շահ-արաս Ըսպհան թախտ նստաւ թագաւոր: Սայ գրուստ հայոց թագաւոր էր:

§ 66 Թվին ռճիա օգոստոսի ժեռումն որ Ագուլաց ժգ մարդ եկաւ Երևան, որ մինչի ի օր բան անեն բերթի պարիսպի վերայ, որ միայն Աքուլիս բճկ մարդ են գձել: Դիվանի ի օր բան արին, գնացին: Մարդայգլուխ օրն Կ դիան առանց հաց դիվանի տվին, ավելն աքուլեցիք զարար քաշեցին:

§ 67 Թվին ռճիա սեփտեմբերի մէկումն Աքուլիս ես Ձաքարիայ մեր եխպայր Շմաւոնի երևանցի կնիկն ու տղէն, աղչիկ արաշխարողն ջումիաթով տարայ Տրու-նաց սուրբ Խաչն, ուխտ արարին, եկին Աքուլիս:

Թվին ռճիա սեփտեմբերի բումն Աքուլիս ես Ձաքարեայ իմ եխպայր Շմաւոնի խիզանն, երևանցի կը-նիկն, տղէն, աղչիկ արաշխարողն ջումիաթով տարայ Աքուլաց Սահրի Աստուածածինն, ուխտ արարին, եկին Աքուլիս, տունն:

Թվին ռճիա հոքտեմբերի ժաւումն Աքուլիս ես Ձա-

քարեայ որ իմ եխալայր Շմաւոն երեանցի կնիկն, տը-
ղէն, աղչիկն արաշխարողն շատ ջումիաթով գնացինք
Նախավկայն, ուխտ արարաք: Սորայ առաջնորդն էր
շամբեցի Մուքել վարդապետն: Ե օրէն գնացինք,
եկինք Աքուլիս:

Թվին ռճիւ աղէքտեմբերի իջումն ես Ջաքարեայ
մեր եխալայր Շմաւոնի երեանցի կնիկն ու քեռի Ղօ-
գաղն, Պետրոս վարդապետն գնացինք Նախավկայն,
որ Յակոբ կաթուղիկոսն եկեալ էր Նախավկայն վասն
իւր պարտքին ջանիւրէ: Ամէն երկրի մարդ էր եկել Գոխ-
թան տանէն. կաթուղիկոսին պարտքի ջուղար արին,
վասն շատ պարտք ունէր: Զերայ Ըստամբօլու մարդ
էր եկել, || թէ՛ կաթուղիկոսն իզու մառչիլ Մահմուդ 92x
աղային տալու այ, տվէք: Զումիաթ ջուղար արին,
թէ չունքի կաթուղիկոսն Օսմանցու երկրէն սրգուն
են արել, պարտքն Օսմանցու երկրին հայերէն տայ:
Այս պատճառէս կաթուղիկոսն առան, տարան Երևան:
Մեք, Ջաքարէս, Շմաւոնի կնիկն գնացաք կաթուղի-
կոսն մօտ. մեք ել ք, գն թուման կուղէինք կաթու-
ղիկոսէն. բալքի թէ մին քանի թուման առնինք: Տե-
սանք այսպէս աղմուկ, մեք ել բաց թողինք, եկինք
Աքուլիս:

* Դարցեալ, թվին ռճիւ ապրիլի մէկ, Երե-
ւանայ Սէֆիդուլի խանէն մարդ եկաւ, ա-
նունն Քայքայուզ. բէկ, Յակոբ կաթուղի-
կոսի տեղակալ Սհակ վարդապետն, Նախչի-
վանայ քալանթարն որ ամէն չ ձիաւոր
էին: Շահի, խանի յօքմով եկին Աքուլիս,
թէ՛ ո թուման դուք տվէք: Կաշառք տալ,
գեղ վեր կենալ, մին գիշերի լե մարդ կա-
խեց, շատ անհամութիւն, վերջն՝ Աքուլիս,
Դաշտն, Վանքն ամենեցուն գնծ թուման
դուս էլաւ: Ոչ թէ միայն Աքուլիս, ամէն
երկրէ առին, որ մինչի բո թուման կիտեց:

Ապա խանն փողն տվեց ոչ կաթուղիկոսն:
Այս պատճառէս խանն, կաթուղիկոսն մէկ
մէկի յետ հակառակ ընկան, շատ աղմուկ
էլաւ, կաթուղիկոսն ծածուկ փախաւ, գնաց
Ըսպհան:

§ 68 Դարձեալ, թվին ռճիբ մայիսի ժեռմն *ibid.*
որ Յակոբ կաթուղիկոսն Երեանայ փախաւ,
գնաց շահն, որ էր Ղազվին:

§ 69 Դարձեալ, խանն էլ տեսաւ, որ կաթուղի- *ibid.*
կոսն փախաւ, խանն հակառակ ընկաւ կա-
թուղիկոսին: Խանն շահին արգ արեց, թէ՛
այս փողս սիթամով առի, շահն հրաման
տայ, որ այլլի փողն փողայտէրն դարցու-
ցանեմ: Շահն հրաման կուտայ: Դարցեալ,
թվին ռճիգ ապրիլի ժռմն խանիցն մարդ
գայ, թէ՛ գիրն բերէք, ձեր փողն առէք:
Վարդապետն, մելիք, մարդ գնաց, այսպէս
տվին. որ միայն Աքուլաց ճաք թուման
առել ին, դք թուման կէս դուս եկաւ: Թէ
գրով, թէ այնգիր, այս դուս եկաւ: Ամէն
մարդ իւր տվածին գորայ ըռասաթ վեր
առին, խարջն դուս ընգաւ, մին թումանին
զոգն գիան ձեռն եկաւ:

§ 70 Թվին ռճի և մէկուրմն Աքուլիս էր Աղլբէջանայ վէ- 89r
դիւր Միրզայ Իբրահիմի զաֆտումն: Այսմ ամի էր Ա-
քուլաց դարուղէն Միրզայ Իբրահիմի դուլ Բահրամ-
բէկն. ժգ ձիաւորաւ օրն ըռ գիան խարջ ունէր: Խ
օր կացաւ, և թուման փող տարաւ, թողդ խարջն: Սո-
րայ շատ կենալն, շատ փող տանելն պատճառն՝ ել
աքուլեցի Մուսարէկի տղերքն ելաւ: Զերայ շահի յօք-
մով Զունուզու սուլթանն գն ձիաւորաւ եկաւ Աքու-
լիս, Ավդուլայ բէկն բռնեց, մին ժե մարդ գունդեց,
տարաւ Զունուզ, որ շահի յօքմով գնան Ըսպհան դի-
վան: Դարցեալ, այսմ ամի եր Աքուլաց մէլիքն եր

Քուրդունց Սարգսի վաթի որդի Ալեքսանն: Այս պատ-
ճառէս որ սուլթանն, Միրզայ Իրրահիմի մին մարդ,
անունն էյնսուլի աղայ, սոքայ մին Խօր Աքուլիս կա-
ցան, մին ծ, Կ թուման Աքուլաց հայերն զարար քա-
շեցին, բալբի բն թուման մօտ Աքուլաց թուրքերն
զարար քաշեցին: Զերայ շատ մարդ բռնեցին, շատ
տուն կոխեցին, թէ՛ Ավդուլէն ձեր տան այ կամ դու
խաբար էս: Այսպէս էլաւ:

* Այս Ավդուլէս Զունուզ այնչափ պահեցին
բուխավում, մինչի թվին ռնիբ սեփտեմբե-
րի մէկն միայն Ավդուլէն դուցաղ տարան
Ըսպհան, որ դիւան անէն: Մնացին այսպէս,
վերջն բարիշեցին: Այս Մուսայրէկի տղայ
Իսախանս Ըսպհան ֆնաց, մինչի թվին ռնիգ
գնաց, շահին արդ արեց: Շահի հարամիցն
մին զարավաշ տվին Իսախանի տղայ Մու-
սաբէկն. Ե խաս գէղն, որ է Աքուլիս, Մէդ-
րի, Շօռութ, Աղտապատ, Լէհրամ, տվին
Իսախանին զաֆտն:

Թվին ռնիգ հոքտեմբերի իգումն այսօր
Աքուլիս շահի յօքմի սավաթն կարդա-
ցին¹⁾, էլաւ սոցայ, մինչի փետրվարի Ե
Մուսաբէկի բ թոռն, Ավդուլէն, Մուսաբէկն²⁾
եկին Աքուլիս, ծեօր կացին, գնացին Գան-
շայ, խանին խալաթ տարան, ապրիլի Իբ
եկին Աքուլիս, խասէրն զաֆտ անում. այս է:

§ 71 Թվին ռնիա Շահ - Սլէյման թագաւորէն ըռաղամ
եկաւ Երևան Սէֆիդուլի խանին վերայ, մի մարդ 89v
եկաւ Ըսպհանայ, թէ՛ Երևանայ բէրթի յարեւելյան
կողմն մին պարխսպ ել քաշեն. բ պարխսպ ունէր,
էլաւ գ: Միայն յարեւելյան կողմն քաշեցին: Դարցեալ,

1) Զեսադրում՝ կրցին:

2) " " Մուսաբէկին:

ամէն երկիր մշակ¹⁾ գծեցին ջամի գօրայ, ամէն վարցն թագաւորական տվին: Ամայ առանց հաց և դիւան տվին վարցն: Երկիր կէր, որ 6 դիւան, 68 դիւան բռնեցին: Ավել զարարն ամէն երկիր քաջեցին: Թագաւորէն մին ռեճկ թուման փող ըռաղամ եկաւ Երևան Զորագէդ ոմն հայ խօջայ Սարգիսի վերայ, թէ՛ դավտարով փողն խարջէ, հսարն տայ. զ, Ե թուրք, հայ ժաղիչի կէր, որ գրում էն: Այսպէս ես Աքուլեցի Քուրդունց Աղամիրի որդի Զաքարէս Երևան տէսայ, այս պարիսպս քաջեցին, այսմ յամի մինչի կէսն բար-
ցրացաւ, մնացածն մնաց գալ տարիս:

1) Ձեռագրում ըմակ:

§ 72 Թվին ՌՃԻԲ յունվարի գ, արամ ԻԲ, տրէ Է, օրն 92v
 Բշարթի, Էս Զաքարեայ այսօր ջրաւրհնիք Աքուլիս
 արարի: Օրն պարզ, ինչպէս դարուն: Մինչևի այսօր
 ջուր սհալ սառեց. լավ հավայ: Զրաւրհնեաց ք օր
 անցաւ, ապայ սկսաւ ձուն գալ ու պինդ ցուրտ անել:
 Ամէն թանգացաւ, սղութիւն անգաւ, որ ալուրն ծ
 իստիլն, որ է մին լիդր, բնծ դիան դարցաւ, բրինձն՝
 բնծ դիան, միան՝ բն դիան, դարին՝ բն դիան: Նորու
 վերայ դարցաւ ալուրն զն դիան:

§ 73 Թվին ՂԵԻԲ յունվար ամսոյն ըսկըսաւ սղութիւն 93r
 հացի մինչևի յուլիս ամիսն, որ նոր ցորեանն դուս
 եկաւ. ոչ թէ միայն Գողթան տունս, այլ ամենայն
 երկիրս այսպէս. Թարվեղու մինչի Երևան, Զորսու
 մինչի Գանջայ, Էս առաւել Գողթան տունս, քանդի
 անցեալ տարոյն երաշտութիւն եղև: Դարցեալ, Երևա-
 նայ խանն իւր երկիրն զադադայ արաւ, Նախչիվա-
 նայ խանն, Զորսու խանն, Թարվեղու խանն, ամէնն
 իւրենց երկիրն զադադայ արին, որ այս Գողթան
 տունս ուտելիք չեկաւ: Աքուլիս ծ իստիլն մէկ լիդր
 էր, մէկ լիդր ալիւրն ղ, 6 դիան, բրինձն զն դիան,
 միան բն դիան. ոչ թէ գինն ավելի էր, ապա լիդրն
 ու դիան կայր ոչ: Աքուլիս հենց աղքատ լցաւ, որ
 մարդ գրին, դուս արարին: Աքուլաց կշտին վանան-
 դու ջաղացն, Տրունաց ջաղացն, Ագուլաց վանքի
 ջաղացն գիշերն բ, գ անգամ կոխեցին, մարդիքն կա-
 պեցին, ալիւր տարան: Կարիւ չէին մինակ ջաղաց
 գնալ կամ գիշերն մնալ ջաղացն: Շատ մարդ բանջա-
 րով ապրէր, շատ մշակ առանց վարցի բան կանէր:
 Դարցեալ, այսպէս գ ամիս մնաց, մինչև որ նորն դուս
 եկաւ Աստուծոյ տվածին խիստ բօլ, որ ցորէնն դար-

ցաւ ձ դիւան օգօստոս ամսոյն: Այսմ ամի Աքուլայ
գետն մինչի վարդավառն Բ, Գ ջաղացի առու ջուր
եկաւ. խիստ բօլ էր, պարզ, իստակ: Ըստեղծողին
փառք և գոհութիւն:

§ 74 Թւին ոճիբ փետրվարի Թումն Աքուլիս ես Ջաքա- 92v
րեայ բարէկենդան արարի: Գինու լիդրն 6 դիւան էր.
այս է:

§ 75 Թվին ոճիբ մարտի ժըումն Աքուլիս ես Քրդունց 85v
մղգսի Աղամիրի որդի Ջաքարէս, որ իմ եխպայր Շմա-
ւոնի որդոցն յետ բաժանվեցայ, թէ տուն, թէ այքի,
թէ աջհաս, ես Ջաքարիս յիսէն այս է. իմ հայրենի
տունն ու հայրենի այգին, Բ ժամ ջուր Մնասաց կհա-
ւին վերայ. դարցեալ, մեր դռան դէմ Շօղլինց բաղ-
չին, Բ գազ ձիգսն, Ե գազ լենքսն, այս ել ես Ջաքա-
րիայ իմ յիսին վերայ: Ինձ Ջաքարիս պղինձ ընդաւ,
մին մեծ դազան, որ է ծ հողայ, մին երաղի դազան,
որ է ԻԵ հողայ ԲԲ¹⁾: Թէ դազան, թէ բաղեաց, մար-
դաբայ, նալբաքի, լագան, ջամն էլաւ դե ճոթ, ամայ
ֆանար, ղումղումայ, թէ դալիայ նալբաքով ամէնն
դե ճոթ այ. քաշոջն եկաւ ձբ հողայ, որ Բ դազանին
յետ ջամն դե ճոթ, քաշն 6ծբ հողայ: Դարցեալ,
շորէղէնն, ինչպէս ես վեր առի, նոյնպէս Սիամոնի
կնիկն, որդիքն վեր առին: Ամայ մին լաւ սրմայ
թամբ ըռախտոջն, գիկդիկով, արծաթէ ըռախտոջն
Սիամոնի վարիսն վեր առին, Ե թուման: Ես Ջաքա-
րէս վեր առի մին խալի՝ ԷՈ դիւան, մին կանաֆէտ՝
գինն զՈ դիւան, մին քուրսու լիւէր՝ գինն՝ ԷՈ դիւան,
մին քուրսու ջէջիմ՝ ԷՈ դիւան, մին բոյլու թվանգ՝
ԲՈ դիւան, մին դէղին ֆանար՝ ԲՈ դիւան, մին շամ-
դան՝ Ո դիւան, մին ֆնթայ՝ Ո դիւան, մին թամբի

1) Կարելի չե վերծանել Բ քուման. Տպագիրը (յերես 49) ու-
նի ԲԲ առանց «պատվի», իսկ փակագծի մեջ հարցականով գրու-
մ է՝ «29 թումանի?», վոր միանգամայն անհիմն է:

թաքալթու՝ ու դիան, որ ջամն էլավ իբն դիան. մա-
րադին Սիամոնի որդոցն բաշխեցի ԲԲ¹⁾, մին արծաթ
ըռախա՝ գինն մին թուժան, այս էլ Սիամոնի որդոցն
բաշխեցի: Դարցեալ, արծաթէղէնն այս է. մին գուլա-
գան, Բ փարչ, մին բուխրդան, Բ բարակ թափշի, մին
ջամ, մին դահվագան, մին գինու թաս, մին կուլայ,
մին պուժալ քաշելու. ջամն ժա ճոթ, քաշն ամէն ուեճ
դրամ: Մին մեծ, մին պղտիկ դանթար ես Ջաքարէս
վեր առի՝ գինն զո դիան: Ես Բ դանթարիս թանխէն
Սիամոնի որդիքն վեր առին մին բիրարի ջաղաց՝
գինն զո դիան: Ես Ջաքարեայ իմ յիսէն այս ե: Ահա
նոցա յիսէն, որ դարշու գրած է:

Թվին ոճիբ մարտի ժըռմն Աքուլիս ես Քրդունց 86r
մղղսի Աղամիրի որդի Ջաքարէս որ իմ եխալայր Շմա-
ւոնի որդոցն յետ բաժանվեցայ, ես Ջաքարիս յիսէն
այս դարշու թղտումն գրէլ ամ: Այս է Շմաւոնի որդիք
Գրիգորի, Աղամջանի, Սալվինադի, իւրէնց մայր Գու-
լումին յիսէն. մեր հայրենի տան դարշու, որ է փող-
րակի ես կողմն, տներն, որ է իե գազ ձիկսն, իբ գազ
լէնքսն. յին տներն, նաշխուն օթախ ու բաղէն, դար-
ցեալ, Մնասեց կհաւին ես Ջաքարիայ իմ այքու դար-
շու այքին, որ ծով ու ընձան, թէ որթ, թէ ծառ, թէ
տնդութք ամէն ես Ջաքարեայ նոր տնիցի, նոր շի-
նեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ
ե տարի, որ մինչի բո մշակ բանացրի, Բ ժամ Մնա-
սեց կհաւին ջուր վերայ. այքին այս է: Ու մեր փող-
րակի կշտի գետումն մին ջաղացայտեղ տնդութք շի-
նեցի, որ մինչի ծ թուժան վերայ խարջեցի, Էժ տնդի
տնգեցի, այս ել սոցայ յիսին վրայ: Մին խարարայ
տնդութք Վերի գետ, այս ել սոցայ յիսին վերայ: Դար-

1) Կարելի չէ վերծանել նույնպէս Բ բուման: Տպագիրը (յերես
49) դարձյալ ունի ԲԲ առանց «պատվի», իսկ փակագծում հար-
ցականով «2 թուման?»:

ցեալ, ինչպէս որ ես շորեղէն, պղնձեղէն վեր կալայ,
նույնպէս էլ տվի սոցայ: Շմաւոնի զաւակն Աքուլաց
կնոջէն մին տղայ Գրիգորն է. Երեանայ կնոջէն՝ Աղա-
միրն, որ է Աղամջանն, աղջիկ՝ Սալվինազն. այս է:
Այս Շմաւոնի կին Գուլուժս Աքուլիս կացաւ ոչ. տղայ
Աղամջանն, աղջիկ Սալվինազն առաւ, բազի դատէն
վեր կալաւ, գնաց Երեան թվին ռհիբ ապրիլի ժեռմն,
այս Գրիգորս մնաց Աքուլիս: Տեսնուք, թէ վերջն Աս-
տուած բարին աջողէ, ամէն:

§ 76 Թվին ռհիբ մարտի 1, յարաց իւր, շամս ժռմն 92v
Աքուլիս ես Զաքարեայ այսօր դառն, տրտում դատիկ
արարի: Քանզի ես Զաքարեայ իմ նամուրսդ կողա-
կից Բէգուժն ավաք ուրբաթ օրն առ Աստուած կոչե-
ցաւ: Ուրբաթի զ սհաթին հոգին աւանդեաց, ծ սհա-
թի, նշան թաղմանն, Քրիստոսի թաղման օրն թաղե-
ցաք: Տվօղին փառք և գոհութիւն:

§ 77 Թվին ռհիբ ապրիլի ժեռմն Աքուլիս այսօր ես 94r
Զաքարեայ իմ եխպայր Շմաւոնի կին Գուլուժն, որդի
Աղամիրն, որ է Աղամջան, դուստր Սալվինազն իւ-
րենց նօքար ու աղախնոյն գնացին Երեան: Քանզի
այս ծղ ամիս էր, որ Երեանայ բերի Աքուլիս, թէ կէ-
նան, խօլ կացին ոչ: Քանզի այս Սիամոնս վերստին
կին էր առած Երեանայ, Սիամոն մեռած էր, բերի,
թէ Աքուլիս կենան, կացին ոչ: Ես Զաքարէս ասի,
երի որ կենում չէք, եկէք, թէ տուն, թէ այքի, թէ
աջհաս, թէ շոր, թէ պղինձ¹⁾, թէ արծաթ, ինչ որ կայ,
բաժանեցէք, ձեր յիսէն տարէք, պահէք, կամ տվէք
Գրիգորն պահի. ինչպէս գիտէք, այնպէս արարէք:
Գրիգորն էլ Սիամոնի տղէն այ Աքուլաց կնոջէն:
Այսպեա զաբուլ տրարին: Ղազի բերի, ամէն յիսէն
ջոկեցի, գիր գրեցի, վարդապետ, դովլաթաւորք մէջ
բերի, բաժանեցաք. ամէն մարդ իւր յիսին տէր կե-

1) Զեռագրում՝ պղինձ:

նայ, շինէ, քակէ, ծախէ, պահէ: Ես Զաքարէս, Սիւ-
մոն ք եկապարք էինք: Ամէն բան տեսան, այսօր
գնացին Երևան:

§ 78 Թվին ռեիբ ապրիլի իսուսմն Աքուլիս այնպէս ձուռն 92v
եկաւ, որ ք թիղ ձուռն նստաւ: Ապայ շատ ծառի ճուղ կո-
տրվեցաւ, շատ ծառ տակէն հանեցաւ, քանդի ծառերն
ամէն տերևն բացված էր: Այս ձուռնս Ագուլաց մինչի
Նախչիվան եկաւ: Շատ զարար Աքուլաց եկաւ: Այս
եղև վասն մեղաց մերոց:

§ 79 Թվին ռեիբ մայիսի իսուսմն Աքուլիս որ Երևանայ 93v
Սէֆիղուլի խանէն ք ձիաւոր եկաւ, թէ՛ Յակոբ կա-
թողիկոսն փախել այ, խանն ամէն տէղաց վարդա-
պետներն բերել այ, պիտի Աքուլաց վանքի Պետրոս
վարդապետն ել գայ, որ Երևանցի Օնփրիոս վարդա-
պետն կաթողիկոսն աւրհնեն: Ապա Պետրոս վարդա-
պետն, որ՝ սուտ է, Օնփրիոս վարդապետն կաշառք
ասել խանին: Այս պատճառէս Պետրոս վարդապետն
երես չեկաւ, փախաւ: Մին ք թուման տվի եկողին,
գնաց: Դարցեալ, վերստին յունիսի ժուսմն ել Երևանայ
խանէն գ ձիաւոր եկաւ, թէ՛ Պետրոս վարդապետն
գայ: Խօվ տան չէր. գ, ե օրի կացաւ, բ, գ թուման
առաւ, գնաց: Ամայ Պետրոս վարդապետն մին ք ամիս
փախստական կացաւ Ղափանումն ու Թարվեղ: Մին
ծ, ժե թուման գնաց, ապայ Երևան չի գնաց, քանդի
աղմուկ շատ լինէր: Այս չի Օնփրիոսըս շատ զարար
տվեց էջմիածնայ ու վարդապետաց, թէ՛ ես լինիմ ա-
թոռակալ: Ծածուկ կասէր, թէ՛ կաթողիկոս լինեմ:
Ես Զաքարէս գրեցի:

Թվին ռեիբ յունիսի իսուսմն Աղբբէջանայ վէղիբ
Միրզայ Իբրահիմին մին զուլ, ապայ մեծ աղայ է,
քանդի առվածի¹⁾ է. անունն Բահրամ - բէկ, ժ ձիաւո-
րաւ զարուղայ եկաւ: Օրն գա գիան խարջ ունէր: Մին

1) Թերևս կարելի չէ նաև առվածի կարգալ:

ամիս կացաւ, գնաց միուս խառ գէղորայքն. ամէն վեղիրին զաֆտումն էր: Դարցեալ, այսմ ամի Աքուլաց մէլիքն Բ էլաւ: Զերայ Ներքի թաղն Քրդունց Ալէքսանն ուղեցին, գետի ես կողմս, որ է Վերի թաղ, սոքայ Ավին ուղեցին¹⁾ Ոսկանի տղայ, անունն Ովանէս է, Օվի կասին: Այսպէս Բ բաժանեցան, շատ աղմուկ լինէր մէջն: Ես Զաքարեայ գրեցի: Այսմ ամի զուեճ դիւան մալ տվինք:

§ 80 Թվին ռճիբ յուլիսի մէկումն Աքուլիս այսօր Երևան 90r
Սէֆիդուլի խանին մարդն ու մին շահի դուլ Ժ ձիաւորաւ, շահի, խանի յօքմով եկին Աքուլաց ու Դաշտէն էճժ մարդ ուղեցին, Երևանայ բերդի կիսատն շինեն, ինչպէս անցեալ տարին: Լէ մարդ գնաց, որ մինչի էճժ մշակ բան անէ: Աքուլիս ու Դաշտն այս լէ մարդիս մարդագլուխ զու դիւան տվին: Թէ շահի փողէն էլ տան, բարի, թէ չի տան, խօլ այս է, որ տվին: Աքուլիս Ե օր կացին, մշակն առան, գնացին:

* Պարիսպն գլուխ հասուցին, ամէն մարդ գնացին իւրեանց տէղն: Թվին ռճիգումն վերջ եղաւ:

§ 81 Թվին ռճիբ յուլիսի զումն ես Զաքարեայ այսօր 93r
վարդայվառ Աքուլիս արարի Աստուծով:

§ 82 Թվին ռճիբ դէքտեմբերի իգումն Աքուլիս ես Զա- 94r
քարեայ գնացի Երևան մեր եխպայր Սիամոնի տունն, կինն ու որդիքն տեսայ, յունվարի իգումն Երևանայ այլվի դուս եկի, յունվարի իգումն եկի Աքուլիս Աստուծով:

Թվին ՌՃԻԳ յունվարի Գ, արէի Ե, արամ ԻԲ, օրն 94v
 զշարաթ, ես Ջաքարեայ այսօր ջրաւրհնիք Երեան
 արի: Այսպէս էլաւ. առաջ որ Յակոբ կաթողիկոսն
 Սէֆիղուլի խանի ահէն փախաւ, գնաց Ըսպհան, երե-
 ւանցի Օնփրիոս վարդապետն գնաց, խանին կաշառք
 կուտայ, թէ՛ մարդ աղարկէ, երկրի վարդապետն գան,
 ինձ աթոռակալ գնէն: Խանն մարդ աղարկեց, ինչպէս
 առաջն յիշեցաք: Դարցեալ, որ ջրաւրհնիքն մօտացաւ,
 այս Օնփրիոսըս գնայ խանին կաշառք կասի, թէ՛ եր-
 կրի մարդ, վարդապետք ամէն գան, որ ես հրաշալի
 ջուր աւրհնէք անեմ: Խան ել դաստուր կուտայ: Ամէն
 երկրի մարդ, թէ վարդապետ կուգան, խանին արդայ
 կուտան, թէ՛ Օնփրիոսն ջրաւրհնիք անէ, ամէն մեք
 ոչ մէկս գալ չեմ: Խանն կասի՝ ի՞նչ պատճառի: Քուլի
 Երեանայ, ամէն տէղաց մարդն, վարդապետն կասին,
 թէ՛ մեր կաթողիկոսն Օնփրիոսն անիծել այ: Խանն
 կասի՝ ապա դուք ո՞վ կուգէք: Կասին՝ շամբեցի Մու-
 քել վարդապետն. այս քանի անգամ սայ աթոռակա-
 լութիւն է վարեր: Խան ել ղաբուլ կանէ: Խանն կասի՝
 սայ ել մին վարդապետաց նման մին վարդապետ: Ես
 յետ ջումուլաթ խանի խօսքն վեր չէն ձգել, կասին¹⁾
 գայ, ամայ մեռոնն Մուքել վարդապետն ջուր ձգէ:
 Դարցեալ, չունքի ամէն երկրի վարդապետ, մարդ եկին,
 ասաւ խան, թէ՛ լաւ ջրաւրհնիք բռնէք, որ Բ խան
 կայ, տէղս բերեմ, մինն Նախջիվանայ, մինն Բարդու:
 Դարցեալ, մինչի ԲՆ մարդ շապիք ին հաքել. լաւ հրա-

1) Ջեռագրում՝ կասի:

շալի¹⁾), ամայ առօտաց բռնեց ձուռն գալն մինչի յետի ժամն: Շատ զգեստ զայ էլաւ: Ես Ջաքարեայ գրեցի: Յին քաղաքի Բ երեսունն զգեստավորեցին:

§ 83 Թվին ոճիգ մարտի ժեռումն ըսկսաւ սաստիկ ձուռն 95r
գալն ու ցուրտ անել մինչի մարտի իսունն. վասն
մեղաց մերոց:

§ 84 Թվին ոճիգ մարտ ամսոյ Շահ-Սլէյման թագա- ibid.
ւորն Ըսպհան դուս եկաւ, արեկ Ղազբին, քանզի սայ
քանի թագաւորեալ էր, Ըսպհանայ դուս չեր եկեալ:
Եկաւ Ղազբին, ամառս կացաւ, թէ գնայ²⁾ Սուլթա-
նիայ իւր զօրքին համար առնելոյ.

* Սուլթանիայ գալն խափանվեցաւ, մնաց
Ղազբին, մինչի թվին ոճիգ սեփտեմբերի
ամսոյն Ղազբինայ զօրօքն դուս էլաւ, թէհ-
րանայ վրա գնաց Աշրաֆն, թվին ոճիե
յուլիսի ամսոյն եկաւ Ըսպհան:

§ 85 Թվին ոճիգ ապրիլի ժթ, շամշ 1, մէհէկի ժըռումն ibid.
Աքուլիս ես Ջաքարեայ զատիկ արարի: Լի և առատ,
ալիւրն և դիան, գինին և դիան, միսն զճ դիան,
բրինձն ևճ դիան:

Թվին ոճիգ յունիսի իգունն օրն զշաբթի, այսօր
Ադրբէջանայ վեզիր Միրզայ Իբրահիմէն մին դարու-
ղայ, անունն Բէհզատ-բէկ, ժ ձիաւորաւ եկաւ Աքու-
լիս: Օրն գո դիան խարջ ունէր: Թէ առաջ, թէ յետ,
թէ Աքուլիս, թէ Դաշտումն ք ամիս կացաւ, թէ Աքու-
լաց, թէ Դաշտէն և թուման տարաւ, թէ նալտ, թէ
ջնս, թէ զուլուզ, թէ ահտադ, այս է:

§ 86 Թվին ոճիգ յուլիսի քունն, օրն եշաբթի, որ Ղազ- 96r
վինու Շահ-Սլէյման թագաւորէն չափար եկաւ Դան-
ջայ, այժմուս շահն Ղազվին էր: Դարցեալ, Ադրբէջա-

1) Ձեռագրում՝ հրաւարի:

2) Ձեռագրում առաջ գրված է յեղել՝ եկաւ, հետո հեղինակն
այլ թանաքով այս բառը ջնջել է և վրան ուղղել՝ կացաւ, քէ գնայ:

նայ վեզիր Միրզայ Իբրահիմն Գանջայ էր: Այս չափար, անուն Սարուխան-բէկս, կու գայ Գանջայ, վեզիրն վեր ունի չափարով, շահի յօքմով, այսօր որ յուլիսի քումն գայ Երևանայ յեյլաղն, որ այ Ղրխ-բուլաղն: Սէֆիդուլի խանն տեղս կու լինի. ասկարով եկել ին էյլախ: Այս Սարուխան-բէկս ու վեզիր Միրզայ Իբրահիմն շահի յօքմով խանն բռնէն, ամէն ապրանքն մհրէն, խանն բուխավէն, ասկարով բերէն Երևանայ բէրթն, դուցաղ անէն, շահին արդ անէն, բռադամ գայ, այս Սարուխան-բէկս Երևան խանի ջայնշին նստի. վեզիրն խանի ամէն ապրանք, դավտար մհրէն, մինչի մին ամիս խանն պահէն, յետ ամսոյն բուխավէն, մին Ի թվանգչի դնեն յետն, զրկէն շահն: Շահն երես չի տարաւ, հրաման արաւ, թէ՛ տարէք, դրէք Ղազվինու ք օրէն դէնն ֆլան բերթում: Խանին ք մեծ տղայ ել շահի դուլուդում էր լաւ առաջ, մեծի անունն Նազարալի-բէկ, պղտիկ տղի անունն Մէհրալի-բէկ: Դարցեալ, քանց խանի բռնելն առաջ՝ շահն Նազարալի-բէկի մին ձեռն կտրել կու տայ, զրկի Երևան խանին: Դարցեալ, խանն ու իւր տղայ Մեհրալի-բէկն դնի բէրթումն, օրն եւ դիւան խորակ տայ: Դարցեալ, վեզիրն մինչի հոքտեմբերի Ե ապրանք գրեց ու հարամն ապայ հոքտեմբերի Ե զրկեց շահն, շահն երես չի թողեց, երեսէն քշեց: Դարցեալ, այս վեզիրս խանի || ապրանքն գրեց, զն ուղտ բարցեալ, աղարկեց շահն, թէ ոսկի, թէ արծաթ, թէ պղինձ, թէ խալի, թէ չադր, թէ ձի, թէ ուղտ, թէ լաւ, թէ վատ, թէ նաղտ, թէ վէջ, լա թումանի ապրանք դավտար արաւ, բարցաւ, մին և ձիաւոր դրաւ յետն, բռնված խանի նազիր Իսախանբէկն դնի յետն, փետրվարի ժումն Երևան դուս ողարկեց: Այս վեզիրս մնաց Երևան, մինչի թվին ռնիզ ապրիլի Իումն Երևանայ դուս էլաւ, գնաց Գանջայ իւր բանն: Դէռ ևս խան չէր եկած:

* Թվին ռնիզ հոքտեմբերի ժումն շահն

Հազվին Երևանայ խանութիւն կու տայ մեծ
Ընստամ խանի տղայ Սէֆիղուլի - բէկն. այ-
սօր այս Սէֆիղուլի - բէկի տղայ Ընստամ -
բէկն մտաւ Երևանայ բէրթն, նստաւ հօրն
Ջայնիշին, մինչև հայրն գայ:

Դարցեալ, թվին ոճիգ¹⁾ նոյմբերի 1, օրն
զարաթ, այսօր մեծ Ընստամ խանի տղայ
Սէֆիղուլի խանն մտաւ Երևան փառօք, շա-
հի հրամանաւ խան եկաւ: Առաջի Ջայնիշին
Սարուխան - բէկն գնաց Ըսպհան իւր բանն:

§ 87 Թվին ոճիգ օգոստոսի ժըռմն Երևանայ գ ձիաւոր 95r
եկաւ, թէ Սիամոնի եխպայր Զաքարէն ու Սիամոնի
որդի Գրիգորն գայ Երևան, որ Սիամոնին դափիչի այ
դուս եկել: Դարցեալ, Զաքարէս, Գրիգորս, եկած թուր-
քն օգոստոսի իռմն Աքուլաց դուս ելաք, օգոստոսի
իեռմն եկինք Երևան. մնացի, մինչի հոքտեմբերի
ժեռմն Երևանայ դուս եկի, հոքտեմբերի ի եկի Աքու-
լիս: Ապա շատ փորցանք, ցաւ քաշեցի. ի թուման
դուս էլաւ:

§ 88 * Թվին ոճէռմն Երևան որ Նաջաֆիղուլի 53r
խանն Աքուլեցի Քրդունց Աղամիրի որդի
Շմաւոն Երևան զառաք դրեց, մինչի սայ
Երևան հայ զառաքբաշի չէր նստած: Այս
Շմաւոնս զառաքութիւն արաւ, մինչի թւին
ոճթռմն Նաջաֆիղուլի խանն Երևանայ մա-
դուլ էլաւ, գնաց Շամախի. Երևան տվին
մեծ Ամիրգունա խանի տղայ Աբասղուլի
խանն: Այս Շմաւոնս գնաց Շամախի՝ Նա-
ջաֆիղուլի խանին յետ հաար տէսնուլի: Այսմ
ամի Աբասղուլի խանն Երևանայ զառաք-
խանէն տվեց անապատցի խօջայ Սարգիս
ու Երևանայ ձորայգեղցի խօջայ Սարգիս:

1) Չեռագրում՝ ոճիգ:

Այս Բ Սարգիսս խանիցն մին ա եւ թուաման
 իջարայ արին, զառաֆխանէն վեր կալան
 մինչի մէկ տարի: Թվին ռնժգումն Շմաւոն
 Շամախու եկաւ, թաքրար Արասդուլի խանն
 զառաֆխանէն ամանի տվեց Շմաւոն, մին-
 չի թվին ռնժե հոքտեմբերի ամսոյն Արաս-
 դուլի խանն մեռաւ: Երևան տվին լազգի
 Ալիսաս Միրզին, որ անվանեցաւ Սէֆի-
 դուլի խան: Այս Շմաւոնս զառաֆխանէն
 ել ամանի բանացրուց, որ մինչի թվին
 ռնժթումն Շահ-Սլէյման այս Շմաւոնս ու-
 զեց, տարաւ Ըսպհան: Սէֆիդուլի խանն
 զառաֆխանէն տվեց ճահկեցի հայ խօջայ
 Աղաբէկն: Այս Շմաւոնս Ըսպհան աջալով
 մեռաւ: Այս Աղաբէկս մնաց զառաքի, մինչի
 թվին ռնիգ ապրիլի ամսոյն մեռաւ:

** 1123 զառավխանեն տվին ձո-
 րայգեղցի խոջայ Սարգիսն մին-
 չի թվին 1128ումն որ Զալ-խան
 եկաւ Երևան, մարդ զրկեց, Առ-
 զուումայ Աքուլեցի Մասէին բե-
 րաւ Երևան, զառաքի դրեց: Սար-
 գիսն դուս ընկաւ:

§ 89 Թվին ՌՃԻԴ տրէ է, արամ ԻԲ, յունվարի Գ, օրն 95v
 ղշարթի, ես Զաքարեայ այսօր ջրաւրհնիք¹⁾ արարի:
 Զուրն եկեղեցումն աւրհնեցին, քանզի սաստիկ ցուրտ
 էր, ու ք թիզ ավել ձուռն կէր. կարացան ոչ դուրս
 գնալ: Այսպէս ձուռնն մնաց մինչի մարտի ժեռումն, ա-
 պայ Գ, է օրի միջումն այլի ձնի նշան չմնաց: Ապայ
 այսմ յամի որթն հողի գլխէն վերն ամէն ցուրտ տա-
 րաւ, թէ Աքուլիս, թէ Դաշտն, թէ Օրդուվարայ գետն,
 թէ Տրուռաց գետն, ամէն տարաւ:

Թվին ռնիգ փետրվարի ժգումն Աքուլիս ես Զա-
 քարեայ բուն բարեկենդան արարի: Սաստիկ ձմեռն
 էր. վասն մեղաց մերոց էր:

Թվին ռնիգ փետրվարի Իբումն ես Զաքարեայ
 այսօր Աքուլաց դուս ելայ, փետրվարի Իէումն եկի
 Երևան, Սիամոնի տղոցն յետ բան կեր, տեսայ, մարտի
 Իբումն այլի Երևանայ դուս ելայ, մարտի Իգումն եկի
 Աքուլիս: Սիամոնի տղայ Գրիգորն Երևան էր, բերի
 Աքուլիս: Այս ք ամիս այ, որ գնացել էր իւր ախպէր,
 քույրն տեսնելոյ:

Թվին ռնիգ մէհէկի Գ, շամշ ժե, ապրիլի գումն
 Աքուլիս ես Զաքարէս այսօր զատիկ արարի Աստուծով:

§ 90 Թվին ռնիգ մայիսի ժումն որ Քրդստանայ են 96v
 տուն քուրդ²⁾ դոնմիշ ելաւ, եկաւ Երևան, թէ՛ մեք
 շահի սէվան էք: Երևան խան չի կէր. Սարուխան - բէկ
 ջայնիշին էր նստել թողեց ոչ Երասղն անց կենայ,
 թէ՛ կացէք, ես շահին արդ անեմ. երբ որ հրաման

1) Ձեռագրում՝ ջրաւրհիք:

2) Ձեռագրում՝ քուրդ:

տայ, ապայ գաք: Այս Սարուխան - բէկս շահին արդարեց, շահն ասաւ, թէ՛ պետք չէ: Մինչի շահէն չափարի գալն, այն եկած քրդերն իւրենց կամով գնացին այլվի իւրենց երկիրն:

§ 91 Թվին ոճիգ հոքտեմբերի ժգումն որ Յդնու պարունն, որ էր վրացի Փարսագան - բէկն, այսօր շահիցն եկաւ: Յդնու մին է, ք մարդ գնացել ին շահն Փարսագանին ձեռացն գանգատ: Շահն բուռւմիշ կանէ, թէ՛ ցղնեցիքն գուղէն վիզն դնեն, տանեն Յդնայ, դիվանն էնտէղ անեն: Զերայ շահին ծուռ ին արդ արել, շահն ու թուման ջարիմայ գծեց ցղնցուց վիզն: Այսօր եկաւ, Երասղն անց կացաւ: Մեք, Աքուլաց վարդապետ, դովլաթաւորք, մին ծ մարդ գնացինք Դաշտի տակն, բարով տվինք, վերոյ ք հոգին ոմն գնդած, ոմն բուխաված՝ գնաց Յդնայ: Այսպէս պահեց մինչի զամիս, ջարիմէն առաւ, ապայ թողեց: Ահա այս է յամ է, այս Փարսագանս տնով, ախպէրով որ Յդնայ ուտում այ, շահի յօքմով, սիթամով¹⁾:

§ 92 Թվին ոճիգ դեքտեմբերի Իումն Աքուլիս տղայոց ծաղիկ երկացաւ. շատ տղայ մեռաւ: Մինչի յուլիսի վերջն մնաց: Տուն չի մնաց, որ ընկաւ ոչ:

§ 93 Թվին ոճիգումն Աքուլիս էր Ադրբէջանայ վեզիր Միրզայ Իբրահիմի զաֆտումն: Այսմ յամի էր Աքուլաց մէլիքն Մէլիք - Օվին: Այսմ յամի խաս գեղորէիցն մէլիքներն գնացին Երևան, Միրզայ Իբրահիմն տէսան, մին քանի թուման փէշքաշ արարին, որ այս տարի դարուղայ չաղարկի: Ղաբուլ եկաւ: Զերայ վեզիրն Երևան Սէֆիդուլի խանի ապրանքն գրում էր, գրեց, ապրիլի Ի վեզիրն գնաց այլվի Գանջայ:

§ 94 Թվին ոճիգ այս տարոջ զամսէն է խասի դարու-

¹⁾ Ձեռագրում սիթ... 90-րդ թերթի ներքին անկյունի մաշված լինելու հետևանքով բառի շարունակութունը չկա: Տպագիրը (յերես 55) հաալածն ավարտում է ռանի յօմով բառերով ու վերջակետով:

դուժիւն տվեց աքուլեցի Մուսաբէկի տղայ Սարու-
խան-բէկն: Շահն Ղազվին էր: Աքուլաց մէլիքն էր
Օվին:

* Որ Միւրզայ Իբրահիմըն կտրեց 1129ումն
այս խասէրն. Մուսայբէկէն կտրեցին, տվին
Խօստրով աղէն:

§ 95 ԹՎԻՆ ՌՃԻԵ յՈՒՆՎԱՐԻ զ, տրէ ե, արամ ԻԲ, օրն, *ibid.*
 եշարաթ, ես Զաքարէս այսօր ջրաւընէք Աքուլիս
 արարի: Աքուլաց Վերի թաղի ժողովուրդն ջուր եկե-
 դեցումն աւընեցին. գ եկեղեցին ժողովեցան, Շամբի
 կհավն ջուր աւընեցին նազրով: Սաստիկ ցուրտ էր:

§ 96 ԹՎԻՆ ՈՃԻԵ յՈՒՆՎԱՐԻ Ե ուր Յակոբ կաթուղիկոսն, *ibid.*
 մտաւ Երևան, հրաշալի ջրաւընէք արաւ, յոնվարի ք
 Յակոբ կաթուղիկոսն Օնօփրիոս վարդապետն էջմիած-
 նումն բռնեց, բարչակն վեր արեց, բուխաւեց, մին
 քանի օր պահեց, ողարկեց Սէվանու անապատն: Մին
 քանի օր մնաց, Օնօփրոսն մեռաւ: Յետով կաթուղի-
 կոսն կուգայ Գողթան տունն նվիրակ: Յղնու պարոնն,
 ուր էր վրացի Փարսաղան - բէկն, յետ կաթուղիկոսին
 հակառակ ընկաւ, թէ՛ դու Օնօփրիոսն նախանձու ըս-
 պանեցիր: Ապայ Փարսաղան - բէկն Երևանայ խանին
 արդ կանէ, խանիցն մարդ գայ, կաթուղիկոսն տանէ
 Երևան: Բ ամիս մնաց, աստ, անդ կաշառք տալ, ե,
 զճ թուման դուրս էլաւ. պատճառն Օնօփրիոսն: Դար-
 ցեալ, խանն մարդ դրեց կաթուղիկոսին յետ, թէ գ...¹⁾
 Յղնայ, Փարսաղանին յետ բարիչէ: Կաթուղիկոսն
 եկաւ Յղնայ, բարիչեց... Մայիսի Իէ եկաւ Աքուլիս,
 նվիրակն ժողովեց, շնչազլուխ առ... արբար տեղն ոմն
 մին թուման, ոմն այլ ավել: Աքուլաց գ եկեղե... մին
 ճիս թուման տարաւ: ԹՎԻՆ ՈՃԻԳ յՈՒՆԻՍԻ մէկ Յերե-
 ւան... անիցն փախաւ, գնաց Վ...²⁾:

¹⁾ Հավանորեն գնայ: Այս հատվածի բազմակետերը ցույց են տալիս ձեռագրի թերին, վոր առաջացել է 97-րդ թերթի անկյո-
 նի սաստիկ փչանալուց:

²⁾ Տպագրի որերում գուցե թերթի այս մասը փչացած էր՝
 վորի հետևանքով նա (յերես 64) կարդացել է Վրացուն:

§ 97 ԹՎԻՆ ՈՃԻԵ փետրվարի 9 ես Ջաքարէս բուն բա- ibid.
րէկենդան Աքուլիս արարի: Սաստիկ ցուրտ էր: Գինու
լիդրն բճ դիան էր, ամայ գինու լիդրն Ը հողայ էր:

ԹՎԻՆ ՈՃԻԵ յարացի իե, շամշ ե, մարտի իգումն
Աքուլիս ես Ջաքարիայ որ այսօր զատիկ արարի, միսն,
իւղն խիստ զթ էր մինչի մայիսի ի, ապայ բօլացաւ:
Դարցեալ, գինին լիդրն բճ դիան, միսն գճ դիան:

§ 98 ԹՎԻՆ ՈՃԻԵ մայիսի բումն սաստիկ ձուն եկաւ: Ոչ 96v
թէ միայն Աքուլիս, այլ ամէն երկիր եկաւ: Ապայ
ամէն պտուղ թէ ցորեն յետ ընկաւ... [պ]ատճառն ձու-
նըն էլաւ, որ Աքուլիս վարդավառին ծիրան չէր հասել:

§ 99 ԹՎԻՆ ՈՃԻԵ օգոստոսի ժգումն ես Ջաքարեայ այսօր 88r
յին Ջուղայ էի¹⁾: Այսօր Թիֆլիզու Շահնուզ խանն
շատ ասկարով, շատ զուլ ու զարավաշով, շատ գինա-
թով այսօր եկաւ, Երասդն անց կացաւ, որ գնայ Ըս-
պհան: Պատճառն այս էր, որ Շահ-Սլէման թագա-
ւորն իւր զօրչի-բաշի Մուստաֆայդուլի-բէկին ըռա-
ղամ կուտայ ու մէհմանդար կանէ, թէ՛ գնայ Թիֆ-
լիս, խանն վեր առ, եկ: Այսօր եկին. ու ձիաւոր էր
մեծ ու փոքր: Կ ուղտ քաջավով զուլ ու զարավաշ էր
տանում շահին: Ամէն երկիր աղամաթ էր տանում
յօքմով: Գնաց մինչի Խօշկառու, անդ մեռաւ. ամեն
զատն տարան Ըսպհան²⁾:

§ 100 1125 հոքտեմբերի ժումն որ յերզցի հռօմ մետրա- 23r
պօլիտ Գերմանիոս եպիսկոպոս, մին հռում վարդա-
պետ, անունն Անաստաս, գ, գ վրացի տղայ, այսոնք
Վրաստանայ եկին Աքուլիս ժողով անելու: Սոքայ Ղրբդ
վանք ունին նորոգելու: Այս պատճառ եկել ան Վրաս-
տուն: Շահնուլաստ խանն գնում էր Ըսպհան, սայ ել
յետն եկաւ Նախջուան: Յակոր կաթուղիկոսն Նախջի-

¹⁾ Ձեռագրում՝ էին:

²⁾ Ձեռագրում՝ Ըսպհ... (88-րդ թերթի անկյունը մաշված է):

վան կու լինի: Շահնուվազն խանն կաթուղիկոսին կասի, թէ՛ պիտի մին գիր տաս այս հօռոմիս, որ Հայաստան ժողովք անէ: Լաւ ազաթ անէն, կաթուղիկոսն աւրհնութեան գիր կու տայ, որ լաւ ընդունեն: Եկաւ Աքուլիս, գ եկեղեցին ման եկաւ, գ թուման տվին, լաւ ազաթ արարին: Ինքն էլ լաւ մարդ, լաւ հավան կացաւ մեր հայոց պատվիրանին, սահմանքին: Ագուլաց գնաց ղէպ Ղափանն, որ գնայ Մօսկովն:

§ 101 — 1112ումն որ Աքուլաց իձայծորու մահլի սուրբ 25r
Ուվանէս անվան եկեղեցին ըսկիսպն արարին վեր առնելու: Այս մահլիս կես գերեզմանատունն այս եկեղեցուս պարիսպիս մէջն էր, ապայ շիտակ պարիսպ չունէր: Ապայ որ սահմանեցին, թէ եկեղեցին շինէն, պարիսպն քաշէն, ապայ բերին, գերեզմանատունն ել վարթաբաւ արարին. ոմն նշանաւոր մեռել կէր, զայն թողին, ապայ անտէրն, աննշան մեռելն քարն վեր կալան, ոմն դրին եկեղեցու պատն, ոմն ձգեցին եկեղեցու դռներն: Ապայ այսույետե սահմանեցին, թէ ինչ մեռել որ լինի, տանհն եկեղեցոյ յանդէպ յարաւայի կողմն տափարակ տեղ մի. անվանեցին տէղի անունն Բէկ-օղլի: Այս Բէկ-օղլի առաջի դրած մեռելն երեցիոխ Անդոնի կնիկն է թաղած: Այս հանգիստիս հիմն այս է, որ 1112ումն: Դարցեալ, 1113 եկեղեցին ձեռք տվին շինելոյ, 1114ումն ավարտեցաւ, աւրհնեցին, պարիսպն քաշեցին, թէ խուց, թէ սեղանատուն շինեցին, ապա պրծաւ: 1125 նոյմբերի ժումն ես Աղամիրի որդի Զաքարէս մին լաւ, մեծ չինարի տնգայ ես բերի, այս եկեղեցուս պարիսպի մէջըն տնգեցի վասն յիշատակի¹⁾, քանզի մեր նախնի պապերն աստ էն թաղեալ Աստուած ողորմի «Աստուած ողորմի» ասողաց, մին «հայր մեր» ասողաց:

1) Ձեռագրում՝ յիշատի:

§ 102 1125 նոյմբերի ժգումն Աքուլիս ես Զաքարէս Աքու- 23r
լաց դուս եկի, նոյմբերի ժքումն եկի Թարվեզ:

§ 103 1125ումն Աքուլիս գիր եկաւ, թէ Ֆռնգստան, ի 26v
քաղաքն Վենետիկու) օլքումն թուջի հրամանաւն զճ
փաստաւ Լօնդրինայ չուխայ կրակով երել ան: Այս
չուխիս բն վաստաւն աքուլեցի Շահշուվարենց Փա-
նոսին այ, մաբաղին այլոց, թէ ջուլեցու, թէ ջնուդի:
Այս պատճառէս երեցին. այս չուխէքս Ամսրդամ ա-
ռել ան, թէ տանեն Վենետիկի օլքովն, խարջն տան,
անց կացանեն ծովն, գնան Տօպրավանատիկի վերայ
տանեն Ուռումէլի, թէ Խորմացտանն, թէ բերէն Ղզըլ-
բաշի երկիր, ծախեն: Յենց որ Վենետիկու չուխայ
գործողն, ծախողն, գնան թուջին երես կանգնեն, թէ՛
այս չուխէս գնայ Խորմաց երկիրն, մեր չուխէն կո-
տուր կու ընկնի: Դարցեալ, մին էլ մահանայ արին,
թէ՛ այս չուխի տէրն գայ, փող դնի բանքվումն, մու-
չուլգայ տան, թէ՛ մեք այս չուխէս Ուռումէլի բանաք
ոչ, ծախինք ոչ, մեք ձեր փողն յետ տալու լինիք:
Ոմն կասի, թէ՛ սուտ այ, ել փողն յետ չեն տալ, ոմն
կասի՝ ձեզ վախեցնում էն: Մինչև աստ, անդ հարց ու
փորց անէն, չուխի կարավանն գնայ ...²⁾ իսկիլէն,
բառնայ բ նավի, է, Ե օրի ծովի երեսի ման գայ,
ըռուզգար չի լինիլ, թէ անց կենայ: Յետով թուջին
ամբը գայ այն տէղին ծովի ջնդրիալին վերայ, թէ՛
այտ բ նավ- || ումտ որ զճ փաստաւ չուխայ, դուս 27r
տուր ամէն իսկիլումն, կրակ տուր, այրէ: Զնդրիալն
գնայ, ծովի միջումն բ նավն յետ դարցնի, բերէ, չու-
խէն ամէն բանայ, ածի կրակի մէջ, այրէ: Ասել ան՝
կէսն ձեզ, կէսն տվէք մեզ կամ ամէն տվէք, Սան-
Մարկու լինի, այրել մէք, դարուլ չարին: Այսպէս
գուլմ ու սիթամով այրեցին:

1) Ձեռագրում՝ Վենիկու:

2) » մեկ բառի տեղ ե թողած, այնպես ել դատարկ
մնացել ե:

* Այս Փանոսըս դահր անէ, ցաւ բերէ իւր վերայ, որ ձեռաց գնայր մինչի կէս սհաթ, ապայ խելքն վրայ գայր: Այսպէս փնաց, մինչի 1132 ապրիլի Ի մին գիշեր ձեռաց գնաց, մեռաւ: Պատճառն զուսա արաւ¹⁾:

§ 104 Թվին ռճիե որթն կէսվայկէս ալվի ցուրտ տարաւ, 97r
որ անցած տարոյս ցուրտ տարած որթն, որ շէպ էր
գձել, այն շէպն շատն՝ ել ցուրտ տարաւ:

1) Ձեռագրում «1132.... արաւ» հատվածը հեղինակը գրել է լուսանցքում՝ ուղղահայաց տողերով: Տպագիրը վերջացնում է ձեռաց գնաց, մեռաւ բառերով: Շարունակությունը Ձեռագրում տյուպես է, ասնոն դս աւ:

§ 105 Թվին ՌՃԻԶ տրէի զ, արամ ԻԲ, յունվարի զ, օրն 23v
շաբաթ, ես Չաքարեայ այսօր ջրաւրհնիք Թարվեղ ա-
րարի: Ամայ է սըհաթ կէր չուրի լոյսն, որ սկսան
ժամ ասելն: Առաւօտեան ժամն, պատարագն, ջուրաւրհ-
նեքն ամէն արարին, ժամն արձակեցաւ, դեռ մին
սհաթ կէր չուրի լոյսն: Այս պատճառէս կանուխ ա-
րարին, որ Թուրք չի գայ, եկեղեցին լցվին: Ամայ ախր
կու գան, ճար չկայ:

§ 106 1126 փետրվարի Իեռմն Թարվեղ ես Չաքարեայ ibid.
բուն բարեկենդան արարի: Լե տարի, լե հավայ, ա-
ռատ, բարեկի: Այս ձմեռս սհալ ցուրտ արաւ:

1126 մարտի Ժեռմն, օրն եշաբաթ, ես Չաքարէս
այսօր Թարվեղու դուս եկի, մարտի Ժքռմն եկի Ա-
քուլիս:

1126 ապրիլի Ժեռմն, մէհեկի Ժե, շամս Իգռմն ես
Չաքարեայ գատիկ Աքուլիս արարի: Էժանութիւն, ա-
լիւրն և դիան, բրինձն 6խ դիան, գինին Բ6 դիան,
անձրեային, բարի:

1126 մայիսի Իռմն Աքուլիս հավի կոտորումն ըն- 24r
գաւ: Ոչ թէ միայն Աքուլիս, Ըսպհանայ մինչի Երե-
ւան այս մէջս, այսպէս հաջի կոտորեցին, թէ հաւի
փորումն օձ աչ հասլ ելած, ով ոք հավի միս կամ ձուն
որ ուտի, Խ օր կու մեռանի: Այսպէս դղրթումն ընկաւ:
Շատ տէղ գետինն փոս արարին, հավերն սաղ լցին
մէջն, հողով ծածկեցին: Շատ մարդ հաջի մորթեր,
ձգեր դուս: Այսպէս մնաց մինչի զ, Ե ամիս, այլվի
վարթարաւ ելաւ, փոշումանութիւն, սուտ ելաւ:

§ 107 1126 յունիսի գռմն անձրե եկաւ Աքուլիս: Այլ 24v
անձրե չեկաւ, մինչի օգոստոսի Իեռմն անձրե եկաւ:

Այսպէս երաշտ անցաւ ոչ թէ միայն Աքուլիս, այլ
Ըսպհանայ մինչի Առդուում: Այս երաշտ անցաւ վասն
մեղացն:

- § 108 1126 յուլիսի քումն Աքուլիս վարդապետ թէ գլխա- 24r
ւոր մարդիկ կանկնեցին, թէ մեռելի յետ կնիկ չի
գնայ հանգիստ: Զերայ մինչի հիմայ մեռելին յետ
կնիկ կու գնէր հանգիստ. մինչի մեռելն թաղէն, «Փառ-
քի բարձումն» ասէն, ապա կանայքն յետ դառնան. ան-
համութիւն եր: Բերին, այսպէս սահմանեցին, թէ՛ կա-
նայքն ոմն եկեղեցումն յետ դառնան, ոմն մինչի գետն
գնան, յետ դառնան: Տեղնու գորայ այսպէս սահմա-
նեցին:

1126 յուլիսի իբումն Աքուլիս ես Զաքարեայ աշօր
վարդապետ արարի Աստուծով:

- § 109 1126 հոքտեմբերի իբումն ես Զաքարեայ աշօր Ա- 24v
քուլաց դուս եկի, հոքտեմբերի իբումն եկի թարվեզ:

- § 110 1126 դէքտեմբերի ժքումն թարվեզ ես Զաքարէս ibid.
գնացի Մարաղայ, խանին յետ բան ունէի, տէսայ,
մին քանի օր կացայ, 1127 յունվարի ժառումն այլվի
եկի թարվեզ: Ամայ Մարաղայ մին ցուրտ, մին ղիա-
մաթ ձուն եկաւ, որ ե օրի մարդ մարդի տուն չի
կարաց գնալ. գ օրի ձուն էր գալիս, քամի, բօրան
սաստիկ:

- § 111 թվին ռնիգումն թարվեզ մին վարդապետ քարո- 23v
ղում ասաց, թէ՛ մեծն Հռումայ գրքում տեսայ, Փռան-
գաց ել լսեցի, թէ Քրիստոսի գալուն մինչի այժմոյս
Ժք միլոն մարդ մարտիրոսացել այ վասն Քրիստոսի:

- § 112 1126ումն Աքուլիս էր աքուլեցի Մուսարէկի տղայ 24v
Իսախան - բէկի գաֆտումն: Ոչ թէ միայն Աքուլիս,
այլ ե խաս գեղն, որ է Մեղրի, Աքուլիս, Շօռութ,
Լէհրամ, Ագտապատ, այս ե գեղս շահն տվել այ Իսա-
խան - բէկի գաֆտն: Իսախան - բէկն ինքն Ըսպհան
այ, ամայ գեղրանքի դիվան, թէ մալիջնաթն կիտելն

իւր տղայ Մուսայրէկն ա անուամ: Այսմ ամի Աքու-
լաց մէլիքն է Մէլիք-Օվին:

§ 113 1126ումն Երևան Սէֆիդուլի խանի նոքարն, որ է 25v
ղաջար, բայաթ, խանին երես կանգնեցին, թէ՛ այս ք
ամ է, որ դու եկել աս Երևան, մեզ դոնուդ չես տվել,
տուր, կամ թէ այս բէգիաթ բաներս վեր կալ: Այս
պատճառէս աղմուկ ընկաւ մէջն, շատ կռիւ, մինչև գ,
դ արիւն էլաւ: Խանն թողին ոչ բերթին դուս կամ դի-
ւան անէ: Խանն շահին արդ արեց. նոքարն արդ արեց:
Այս զաջարէս մին աղայ, անունն Ֆաթալիբէկ, գլուխ
քաշեց, մինչի գ, եւ ձիաւոր ժողովեց, իւրենց էլի խօս-
քով, դուլմ ու սիթամ չարաւ: Ասացին. մեք այս խանս
ուզում չենք: Մինչ որ շահիցն դուլ եկաւ, անունն Զա-
նիրէկ, եկաւ Երևան, ք կողմանէն մանսար արաւ, ք
կողմանէն շատ կաշառք տարաւ, գնաց շահին արդ անէ.
ամբր շահին այ: Դէռ Ըսպհանայ շահին մարդ չէր եկել,
խանն մարդ դրկեց, Նախջիվանայ խան Մահամադ-
Ըռազայ խանն մին և ձիաւորաւ եկաւ Երևան, գ սուլ-
թան էլ բերաւ: Այս ասկարս ամէն ժովողին, մին օր
դաֆիլ բէրթին դուս գայ, կանչէ՝ ով որ խանի կողմն
է, ձի նստի: Քանզի էլն ք կողմն էր ճղված, ոմն՝ Ֆա-
թալիբէկի, ոմն՝ խանի: Այսպէս դուս եկաւ, գնաց,
վեթի գետի վրայ կռիւ տվին, ամայ արիւն չէլաւ:
Տվին Ֆաթալիբէկն բռնեցին, || զոշունն դաղմիշ էլաւ, 26r
Ֆաթալիբէկն մին ծ մարդով դրին բերթի զնդանումն:
Ֆաթալու թաբի աղէքն փախաւ ոմն Գանջու վերայ,
ոմն Զօրսու վերայ, գնացին Ըսպհան շահին գանգադ:
ոմն Երևան ել թաքրար շահին արդ ¹⁾ արեց: Տեսնուս, ինչ-
պէս կնի: Այս եղև 1127 ապրիլի ժումն Երևան: Դար-
ցեալ, թէ Նախջիվանայ խանն, թէ սուլթաններն ²⁾
մինչի ք ամիս Երևան կացին, շահիցն խաբար չեկաւ:

1) Ձեռագրում ապ:

2) » սուլթաններն:

Սոքայ ել ամէն գնացին իւրենց տեղն: Յիմիկ Սէֆի-
ղուլի խանն բերթին դուս գալիս, դիւան անում,¹⁾
ուտում, խմում իւր թաբինոֆն: Ով որ փախած է,
մնաց, ով որ զնդանում է, մնաց, չուրի խաբար գայ:

* Դարցեալ, վերոյ գրած գանգատաւորքն
գնացին Լսպհան, թէ շահին գանգատ: Շա-
հին դիւան չունէր, դիւան չանէր. ոչ ով
դավլին հասան ոչ: Գ, դ ամիս մնացին, ա-
ջիզ էլան, բաց թողին, եկին Շարիւր, մին
ի օր նստան, ով որ խանի թաբի էր, բըռ-
նեցին: Խան որ տէսաւ այսպէս, խան էլ
Ֆաթալի էկն զնդանին հանեց, խալաթ
տվեց, մարդ մէջ գծեց, թէ բարիշէն: Աղա-
լարն բարիշեց ոչ. ամէն կիտվեցան Երևան,
խանն կոխեցին բէրթն, ոչ թողին դուս
գայ, ոչ դիւան անէ: Խորակն տվին, մնաց
իւր սարումն²⁾: Խանին մեծ տղայ ունէր.
աղէքն գնայ դիւան - բէկի դրին իւրէն մի-
ջումն ստոով³⁾: Այսպէս մնաց: Տղի անունն
Աբասղուլի⁴⁾:

§ 114

Այս եր Երևանայ ջումիաթի, խանի կռիւն: 27r
Մնաց մինչ որ 1128 յունվարի Իգումն այ-
սօր Զալ-խանն չափարով սալթ եկաւ, մտաւ
Երևան, շահի յօքմով խան նստաւ: Յին Սէ-
ֆիղուլի խանն, որ էր Ըռստամ խանի
տղէն, սայ մազուլ ելաւ: Շահ-Սէլէման այս-
պէս էր ըռաղամ տված, թէ Զալ-խան խան
լինի, գնայ Երևան, ուղբաշի զաջար ա-
ղայ Յումաթրէկն իւր գ տղայովն բռնէ,

1) Ջեռագրում՝ դիվանում:

2) Թերես սարայումն:

3) Տպագիրը (յերես 69) ունի սոսոդ:

4) Ջեռագրում՝ Աբասղ... (թերթը ժաշված է):

գնդէ, զրկէ Ըսպհան. նայ է այս աղմուկս
 գծել այ Երևան: Այսօր Զալ-խան եկաւ,
 Յիմաթրէկն, գ տղէն բռնեց, գնդեց: Սէ-
 ֆիղուլի խանն մազուլ էլաւ, իւր խազինով,
 իւր ապրանքով, որ մինչի է, ըն ուղտ բար-
 ցաւ, մարտի մէկումն Երևանայ դուս եկաւ,
 որ գնայ Ըսպհան: Շահն այսպէս էր հրա-
 ման տվել: Ամայ դիր շատ անէծ տվող ու-
 նէր Սէֆիղուլի խանին: Մարտի իթումն,
 օրն շաբաթ, այսօր Զալ-խանի հարամն,
 խանի տղէն, որ է Աբասղուլի խանի թոռ,
 անունն Մահամատղուլի-բէկ, այսօր մտաւ
 Երևան: Դարցեալ, յունիսի իջ այս Յիմաթ-
 րէկս գ տղոցովն գնդած¹⁾ Երևանայ դուս
 էլաւ, տարան Ըսպհան: Դարցեալ, այս Սէ-
 ֆիղուլի խանս գնայ չուրի Ղուվուք օր ա-
 ռաջ, անդ մեռաւ, բերին Ղում, թաղեցին
 մայիսի իեռումն:

1) Չեռագրում՝ զնդաց:

1127 յունվարի գ, տրէ գ, արամ Իբուլմն, օրն կի- 27v
րակի, ես Զաքարեա այսօր ջուրաւրհնիք Մարա-
ղայ արարի: Դարցեալ, Մարաղու Յուսէնդուլի խանն
հայերն կանչի, թէ՛ իմ մօտիկ գեղորից կարդացողն
ամէն ժողովեցէք, ջուրաւրհնէք արարէք: Հայերն կա-
սին, մեր մէջն վարդապետ չկայ, լաւ կարդացող չկայ,
լաւ փուսադ չունիք, մինչևի այժմոյս ելած չէ, թէ
գիտենք: Խանն կասի՝ չէ, ինչ որ կայ, բարի այ:
Մին ծ երեց եկաւ, հայի մահլուճն ջուր աւրհնեցին:
Դիր աղաք ժողովուրդ այ: Ոչ խաչ, ոչ լաւ խաչ-ալամ,
այս ջուրաւրհնիքս այսպէս արարին:

§ 115 1127 փետրվարի դումն Աքուլիս Վերի թաղի եկե- ibid.
ղեցու ավաք երեցն, որ էր Տէր-Աղարի որդի Տէր-
Ալէքսան, այսօր առ Աստուած փոխեցաւ, եղաւ եկեղե-
ցոյ դռսի յարաւայկողմն, թաղեցին օրն զշաբթի: Սո-
րայ հայր Տէր-Աղարիայ ալլիի աստ էն թաղած. հայր,
որդի միայտեղ: Սայ էր Կ ամաց: Սորայ իւրմէն
մարմնաւոր յիշատակ չունէր, ապայ հոգևոր շատ ու-
նի: Սայ ծ ամ է, որ այրի էր: Սայ գնաց Երուսա-
ղէմ, եկաւ, կինն առ Աստուած էր փոխել, այս է:

§ 116 1127 փետրվարի ծ, քաղոց ծա, ովդան Իէուլմն ibid.
Թարվեղ ես Զաքարեայ բուն բարեկենդան արարի:

§ 117 1127 մարտի լա, յարաց լ, շամա ծառումն Թարվեղ 28v
եւ Զաքարեայ այսօր զատիկ արարի. Աստուծոյ ո
գոհութիւն:

1127 ապրիլի եումն Թարվեղ եւ Զաքարեայ այսօր
դուս էլայ, Մարանդու վիրայ ապրիլի ժբումն եկի
Երևան:

1127 մայիսի ծառումն Երևան որ աքուլեցի Փիրու-

մի որդի Մարկոսն առ Աստուած փոխեցաւ, սայ Զորայգեղու եկեղեցոյ պարիսպի մէջն, յարեւելեան կողմն թաղեցին: Սայ էր ծե ամաց: Սայ գ օրի յիվանդ կացաւ: Աստուած ողորմի:

1127 մայիսի Իսառմն Երեան ես Զաքարեա այսօր դուս եկի, մայիսի Իգռմն եկի Աքուլիս:

1127 յուլիսի Էռմն Աքուլիս ես Զաքարեայ այսօր վարդավառ արարի:

1127 օգոստոսի մէկուրմն այսօր մին ազտապատցի բաղրկան եկաւ Աքուլիս, շատ խաչ, շատ անօթ բէրաւ ծախու Էջմիածնայ աթոռակալ Մուքել վարդապետի աւրհնութեան թուղթով, գրած, թէ՛ երեանցի զառաքի Զաքարէն Էջմիածնայ համար պարտք էր արած: Զաքարէն մեռաւ, բաղրկանին խանին արդ արին, խանն յօքմ արաւ, թէ տան, Էջմիածնու¹⁾ փող չկէր, պարտք չընկաւ²⁾, ճարեր ~ || նիս կտրաւ, ահայ այս չափ խաչ երծաթէ ու անօթ փողի տեղ տվինք այս մարդիդ: Ամէն մարդ անհոք առնու թէ իւրենց եկեղեցոյ, թէ վանքի: Մեք մեր յօժար կամօք տվաք պարտուց տէղ:

* 1127 նոյմբերի ծռմն Աքուլիս որ մին թուրքավար մանսար շինեցին, տվին Մէլիք - Օվին, որ գնայ Ըսպհան, Աքուլաց անվան ու Դաշտին յօքում հանի, քալանթար լինի: Քանզի առաջմէ ուրիշ քալանթար Աքուլաց ու Դաշտին դախլ չէն անիլ: Այսմ յամի ուղում էն, որ մուղարար անէն, որ ով որ Աքուլաց ու Դաշտին մէլիք լինի, քալանթար ել նայ լինի: Այս Մէլիք - Օվին գնաց Ըսպհան, համ Ե խասի մալիջաթն Մուսարէկն տվեց Օվին, թէ՛ տար Ըսպհան,

1) Ձեռագրում՝ Էջմիածնու:

2) չնկաւ:

տուր իմ հայր Իսախան - բէկն, համ քո
բանքա¹⁾ շինէ:²⁾

§ 118 — 1125 օգոստոսի ժեռումն Շահնուաստ խանն, որ 28r
էր աղգաւ վրացի, առաջ Շահաբաս սայ տարաւ Ըսպ-
հան, քուրդացրուց, Թիվլիսու խանութիւն կուտայ
սորայ: Յայսմ յամի Շահ - Սլէման թագաւորն զոռ-
չու - բաշու տղայ Մուստաֆայդուլի բէկն ըռաղամով
զրկեց, թէ գնայ Թիվլիս, Շահնուաստ խանի մէհման-
դար - բաշի: Այսօր շատ զօրօք, որ մինչի ու ձիոյ գա-
րի տային, եկին Յին Զուղայ, որ գնում էն Ըսպհան:
Սորայ ալաֆ ուլուֆէն ամէն քաղաքէ, գէղորէից կու
տային զուլմ ու սիթամով: Սայ հասնէ Խոշկառու ան-
վան մանձիւն, անդ կու մեռանի: Ոմն ասաց, թէ ա-
ջալով, ոմն ասաց, թէ դէղատու մեռաւ. ըստուքն
Աստուած գիտէ: Սայ տարան Ղում քաղաք, անդ թա-
ղեցին: Զօրքն ամէն գնաց Ըսպհան: Շահն մարդ զըր-
կեց, իւր տղայ Գօրգին Միրզայ տանի: Խանն որ
Թիվլիսու զուս էլաւ, իւր միջնակ տղէն, որ այ Գօր-
գին Միրզայ, դրեց իւր տեղայպահ: Շահն մարդ զըր-
կեց, այս Գօրգին Միրզեն տարաւ Ըսպհան, թուրքա-
ցանի, անունն փոխի, դնի Շահբանդայ խան, հօրն
տէղն տայ սայ: Սայ էր Վ ամայ: Դարցեալ, Մուստա-
ֆայդուլի բէկն գնի Շահբանդայ խանին յետ մեհման-
դար, Արդավելու վերայ գայ, գնայ, 1127 յունվարի
ժառումն մտանէ Թիվլիս: Շահնուաստ խան էր և ա-
մաց: Այս Մուստաֆայդուլիս յետ դառնայ, թէ գնայ
Ըսպհան, սայ գայ Դանջայ, անդ մեռանի. այս է:

§ 119 * — 1111ումն Աքուլիս Սնասեց կհավի յին 40v
անունն Պ կհաւ կասին. այս կհաւիս Բ
կհավն քօռացել այ, ջուրն ցամաքել. անայ

1) Ձեռագրում՝ բանի:

2) Հաջորդում են J, K հավելագրություններն ուրիշ ձեռագա-
րագրով:

աքուլացի այր ոմն, անունն Խօջինց Թուման, այս Թումանս այս կհավիս մին կհափն հանեց, մին մատն ջուր դուս եկաւ, ձգեց իւր այքին, որ է թվին ռճժա: Այս Թումանս իւր այքին կհավոփն ծախեց սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետն, գինն և թուման, թվին ռճիէումն. այս է:

§ 120

— Թվին ռկաումն Աքուլիս որ Աքուլաց 41բ
մեկիք Մեկքումն որ ինքնայգլուիս մին ախպիր հանեց, տարաւ իւր տունն, մին լուլայ ջուր Մէյդանի թաղումն դուս ձգեց, որ Մէլիք - Աղավելի դուս, մին լուլայ ջուր իւրենց դուս դուս ձգեց, այս է՝ վասն խեյրաթի: Այս Մէկքումս այլվի այսմ թվիս Խճայճորու սուրբ Ովանէս եկեղեցին¹⁾ մաւրամաթի շինեց: Ուր այժմ ասի Մեկիքինց կհաւ:

— Թվին ռկեումն Աքուլիս այր ոմն վաճառական, անունն Նուրի, մին ախպիր հանեց, որ այժմ ասի Նուրունց կհաւ, որ է Վերի թաղումն:

— Այսմ թվիս մեր վանքի ալել անուն Պուլա պարոնտէրն ըսպանեցին վասն նախանձու առաջնորդութեան:

¹⁾ Չեռագրում՝ եկեղիւն:

§ 121 1128 տրէի գ, յունւարի գ, արամ իբոռմն Աքու- 29v
լիս ես Զաքարեայ այսօր ջրաւրհնիք արարի: Ամէն
Ժողովուրդ իւրենց եկեղեցումն ջուր աւրհնեցին. օրն
Բշարթի. Աստուծոյ գոհութիւն:

§ 122 1128 փետրվար ամսոյ ըսկիսպ էլաւ երէխուց կար- 31r
մբուկ¹⁾ դուս գալ մինչի յուլիսի առաջի օրն, ապա
վարթարավ էլաւ: Ամայ շատ երէխայ մեռաւ: Տվօղին
փառք:

§ 123 1128 փետրվարի ծգումն Աքուլիս ես Զաքարէս այ- 29v
սօր Աքուլաց դուս էլայ, փետրվարի ծգումն եկի Երե-
ւան, որ Աբասղուլի խանի փեսայ Զալ-բէկն նոր
եկել էր Երևան, խանութիւն անէ: Փետրվարի իռմն,
օրն Եշարթի, ես Զաքարէս գնացի դիվանի, Զալ-բէ-
կի խանութիւն մոմբարաք արեցի: Որ էլաւ անունն
Զալ-խան: Սորայ ասլն վրացի այ, շահի զուլ այ:

1128 յարացի մէկ, մարտի բոռմն Երևան ես Զա-
քարէս բռն բարէկենդան արարի. առատ և բարի:
Աստուծոյ գոհութիւն:

1128 մարտի իառումն, օրն ուրբաթ, Զալ-խան բէր-
թէն դուս եկաւ, գնաց, բերթի տակի կարմունջն անց
կացաւ, գնաց, թէ գնայ վերոյ իջին գաշտ աղալա-
րով: Իքումն նստած՝ մին ք մարդ եկին մին զաջար
աղայ ձեռն յետեն կապած, թէ՛ մին իքում զօռով մին
կնիկ կոխել այ, զաֆտել: Կնիկն ել բերած: Խանն մի
սահաթի միջում դիվան արաւ. նոյն տեղն գլուխն
տվեց: Առաջի արիւնն այս էր: Ամէնս արսեցան: Ա-
նունն Մուրադի-բէկ էր:

1) Զեռագրում՝ կամբուկ:

1128 ապրիլի **Ի**, մէհեկի **Ի**, ադամ մէկ, Յինն **Ի**ա 30r
 Երևան ես Չաքարէս այսօր գատիկ արարի. լի է ա-
 ռատ Աստուծով:

§ 124 1128 մալիսի **Ի**եռմն **Թ**ողաթ խիստ ժանդու էլաւ, 32v
 շատ ապրանք, շատ տուն ու դուքան, քարվանսարէ
 այրեց, ապա մարդ չայրեց, քանզի ցերէկ էր:

§ 125 1128 յունիսի **Գ**ռմն Երևան, օրն **Ղ**աբաթ, **Ե** սհա- 30r
Թռմն յանկարծակի քամի վեր կացաւ, դղրթում, որո-
 տումն, այնպէս շարժ եղև, որ ական թօթափելու ա-
 մէն փլաւ. որ Նորայգավթայ մինչի Գօգչէն, Ղէնարէն
 մինչի Էջմիածին ամէն վեր եկաւ: Երևանայ ք եկե-
 ղեցին, Երևանայ անապատն, Չորայգեղու եկեղեցին,
 Քեղարթու վանքն, Ամենայփրկիչն ամէն վեր եկաւ:
 Քեղարթու Ըստէփանոս վարդապետն Երևանայ անա-
 պատումն ֆնաց հողի տակի: Երևանայ բերթն, խանի
 տներն, թէ համամ, թէ մաջիթ, թէ մինարէ, ամէն
 վեր եկաւ: Մինչի ք, ք օրի հողի տակի մեռել ին հա-
 նուս: Տուն կեր մին **Ե**, **ք**, **ք** ջան մեռաւ: Այս եր-
 կրումս էռգն ջան մեռաւ: Չալ-խան շահին արդ արեց.
 այսպէս երկրիս սիթամ ելաւ: Խանն մարդ զրկեց.
 Գանջու քն մարդ եկաւ, Նախջիվանայ Մահմադ-Ըռ-
 զայ խան եկաւ իւր ասկարովն, ամէն սուլթաններն
 եկաւ, բերթի չորս կողմն ասկար նստաւ, թէ չուրի
 || Շահ-Սլէման թագաւորէն մարդ գայ: Դարցեալ յու- 30v
 լիսի մէկումն չափար գայ թարվեղ Ադրբէջանայ վե-
 զիւր Միրզայ Իբրահիմի վերայ, թէ՛ դու գնայ, Երևան
 նստէ, թագաւորական դրամով շինէ: Ահայ յուլիսի
 ժբումն Միրզայ Իբրահիմ մտաւ Երևան: Յուլիսի **Ի**գ-
 ումն Երևանայ չափար եկաւ շահի յօքմով, Աքուլաց
 ու Դաշտէն **Ի**գ մարդ տարաւ Երևան, որ բերթի վե-
 ռայ բան անէն: Ոչ թէ միայն Աքուլաց ու Դաշտէն խարջ
 տարան: Մինչի **Լ**գ թուման Աքուլաց ու Դաշտէն խարջ
 գնաց: Այսպէս այս խան ու բէկլար կացին, մինչի
 ձուն եկաւ: Ապա շահէն դաստուր ելաւ, ամէն մարդ

գնաց իւր տէղն: Ապա շինուածին կիսատ մնաց, փոքր փոքր շինում էն:

* Դարցեալ, շարժն առաջի գալն օր ու գիշեր ծ, ծբ յետ շարժէր: Այս փոքր փոքր գալով մնաց, մինչև էլաւ շարաթն և ամիսն մին յետ կու գէր, մինչի բ տարումն, ապա կտրեց:

§ 126 1128 յունիսի իեռումն, օրն գշարթի, ես Զաքարէս 31r
այսօր Երևանայ դուս եկի, յունիսի իթումն եկի Աքու-
լիս, օրն կիրակի:

§ 127 1128 սեփտեմբերի իգումն Աքուլիս այսօր մին վրա- 32v
ցի եկաւ ժե ձիաւորաւ, անունն Ըստամբէկ, քրիստո-
նայ: Սայ եկաւ, գնաց մեր Աքուլաց աղայ Մուսայ-
բէկինց տունն: Զերայ այս Ըստամբէկիս քվեր աղ-
չիկն Ըսպհան շահի հարամումն կնի. այս գ ամ է, որ
Շահ - Սլէման թագաւորն այն աղչիկն կու տայ Մու-
սաբէկն կին: Այս Մուսայբէկս կին առաւ, եկաւ
Աքուլիս իւր հայրենի տունն: Երբ որ Ըստամբէկս
լսեց, թէ իւր քվեր¹⁾ աղչիկն շահն տվել ա Մուսա-
բէկն, ե խառ գեղն տվել Մուսաբէկն, այսպէս մե-
ծացել ա²⁾, եկաւ, տեսաւ, մինչի նոյմբերի բ կացաւ,
այլի գնաց Վրացտուն: Ըստամբէկն Մուսաբէկի
տան էր. մարդիկն Աքուլիս դունաղ պահեցին: Շատ
խարջ գնաց:

1128 հոքտեմբերի մին Օրդուվարի զադին մազուլ 33r
էլաւ, տէղն շխալիսլամ նստաւ: Քանզի օրդուվարցի
Միրզայ Ուսուֆի տղայ, անունն Միրզայ Արուլ Յու-
սէն, սայ Ըսպհան սադրուն անէ, շխալիսլամութիւն
վերայ կառնու, գայ Օրդուվար նստի: Խիստ անողորմ,
անիրաւ մարդ էր: Շատ եկեղեցոյ զարար տվեց: Աքու-
լաց թէ վանքի, թէ եկեղեցոյ ծ թուման առաւ, մա-
հանայ թէ՝ նոր էք չինել, յօքմ ունիմ: Շատ անիրաւ

1) Զեռագրում՝ քվեր:

2) » մեծացելաւ:

բաներ արաւ¹⁾: Յետով զագին էլ գնաց, զագութիւն առաւ, եկաւ, Օրդուվար նստաւ:

* Յետով այս շխալիսլամս ընկաւ գինա-
խմիլ, լաւանդութիւն անիլ: Իւրան համար
ուտելով, խմէլով, ման գայ:

1128 ումն էջմիածնայ Միքայէլ աթոռակալ վարդապետն եկաւ Գողթան առնն նվիրակ: Այս գ ամ է, որ էջմիածնայ նվիրակ չէր եկած: Քանզի Յակոբ կաթողիկոսն այս ք ամ է, որ էջմիածնայ Սէֆիղուլի խանի ձեռացն փախաւ, գնաց Վրացտուն, Վրացտան վերայ գնաց Խորմացտուն: Այս աթոռակալ Միքայէլ վարդապետն զէքտեմբերի թեումն եկաւ Աքուլիս, մին քանի օր կացաւ, նվիրակն առաւ, գնաց էջմիածին. այս է:

§ 128 — Պատճառ այս է. փառակեցի հայ ոմն, Զիմշիտ 31r
անուն, թուրքանայ: Իւրմից զաւակ չեւաւ. շատ ապ-
րանք ունէր. ինքը մեռաւ, մնաց իւր ծառային: Ան-
յաւ ժամանակ: Ախպէր ունէր, անունն Առաքել: Այս
Առաքելս այլվի թուրքացաւ, դավի արաւ ախպօր ծա-
ռայիցն, բան չի շինեց: Առաքելն մեռաւ, սորայ մնաց
ք տղայ: Սոքայ էլ թուրքացան, այլվի Զիմշիտէ-
կին ծառային յետ դավի արին, այլվի բան չի շինեց:
Մինչի Ի տարու դավի արին, քանի յետ շահի զուլ
բերին, շատ խաներ դիվան արին, ամէն ապրանքն
փուչացաւ: Այսու յետև Առաքելի տղերքն, որ է Շահ-
զուլի, Ալահզուլի, ընկան հայերի հետ միբասդավի:
Շատ շատ հայերի դավի արին, թէ փառակեցոյ, ջո-
ուլթեցոյ, ըւմեցոյ, աքուլեցոյ: Անցաւ ժամանակ,
այս Շահզուլիս շահէն զուլ բերի, գայ Երևան.
խան էր Զալ-խան: Զալ-խանն մին աղի օհտայ անէ,
անունն Մեհրալի-բէկ, այս շահի զուլս, Զալ-խանի
նօքարն մին լ ձիաւորաւ || 1128 օգոստոսի թբումն 31v

1) Զեռագրում բանեցաւ:

դայ Աքուլիս: Աքուլաց հաքիմն էր աքուլեցի Մուսա-
 րէկի թոռ Մուսարէկն: Սայ տունն բանալ տայ, վեր
 գան, թէ՛ Շահդուլին շահէն, խանէն յօքմ այ բերել,
 թէ աքուլեցի Ղարեց օյմաղն, որ է ժ, ժբ տունն, ամէն
 իմ դովուսմ այ: Այս ոյմաղիս մեծաւորն Մելիք-Ման-
 վելն կնի, Պետրոս: Սոքայ տան չեն ելած: Մանվելն
 Թարվեղ կնի ուրիշ բանի համար, Ոսկան, Պետրոս
 Երևան կնին այս դովուս համար: Վերոյ Մէհրալի-
 րէկն ք օր Աքուլիս կացաւ: Երևանայ Զալ-խանէն
 Ոսկան, Պետրոսն յօքում հանէն, զրկէն Մէհրալի-
 րէկն վերայ, թէ դոցայ յետ բան չունիս, եկ: Մէհրալի-
 րէկս դարուլ չանէ, թէ՛ սուտ այ: Մարդ զրկի, Ղա-
 րինց դռներն կոտրատի, թէ՛ Մանվելն տան այ: Այս
 Մանվելիս մին տղայ կնի Խ ամաց, մին քանի ամիս
 էր, յիվանդ էր: Թուրքն իրիգունն որ դռներ կոտրա-
 տի, տղէն լոյսաբացին մեռաւ: Ղարինց ջումիաթն մե-
 ռելն բառնան, թէ տանէն Երևան: Գնան Նախջիվան,
 Նախջիվանայ Մահմադ-Ըռզայ խանի հայր Ալիդուլի
 խանն թողնու ոչ, գնան: Մեռելն տանին, սուրբ կա-
 րապետումն թաղէն, շատ կռիվ անէն, վարթարաֆ ա-
 նէն, գնան Երևան: Մին և թուման ավել այս դովուս
 դուս էլաւ Ղարինց օյմաղէն վասն հաւատոյ:

§ 129 1128ումն աքուլեցի Մասէին Առզուումայ եկաւ. Զալ- 34v
 խանի գրոջն եկաւ, Երևան զառաքի նստաւ:

§ 130 1128 այսմ ամի Աքուլաց դիր շատ տղայհասակ 30r
 մարդ մեռաւ: Թէ Ըստամբօլ, թէ Իզմիր մինչի Իե
 մարդ մեռաւ, զերայ մահ էր այն երկիրն: Աքուլաց
 դիր զուլմ ելաւ:

§ 131 1128ումն Աքուլաց հաքիմն էր աքուլացի Մուսա- 32v
 րէկի թոռ Մուսարէկն: Աքուլաց մէլիք էր Մէլիք-
 Ովանէսն, որ է Օվի:

§ 132 1129 տրէ գ, արամ իբ, յունվար գ, օրն գշաբաթ, 33v
 ես Զաքարեայ այսօր Աքուլիս ջրաւրհնէք արարի: Դ
 մահլէն ամէն ժողովեցին Վերի թաղի եկեղեցին, զգես-
 տավորեցին, մեր վանքի առաջնորդ Պետրոս վարդա-
 պետն զգեստավորեց. մինչի ծ, Կ շապիք յաքնող կէր:
 Նաղրով, զոնով գնացին Շաբի կհաւն, ջուր աւրհնե-
 ցին. լաւ, արեւ օր: Այսմ ամի Աքուլաց հաքիմն էր
 աքուլեցի Մուսարէկենց Մուսարէկն: Սայ ուղարկեց,
 Օրդուվարայ շխալիսլամն, գ, ե մեծ մարդ կանչեց,
 ինքն, թէ այլ քուրդեր նստան, չուրի ջուրն աւրհնեց,
 խաղաղութեամբ, սիրով ամէն վեր կացին, իւրենց¹⁾
 տեղն գնացին: Թէ Օրդուվարայ քուրդերին, թէ Աքու-
 լաց քուրդերին խարջ չառին հայերէն: Միայն մին ա-
 ման էմիր, գ քալայ շաքար տարան. այս էր խարջն:

§ 133 1129 յունվարի իեռմն Աքուլիս Վերի թաղի սուրբ 34r
 Քրիստափոր եկեղեցումն²⁾ այսօր գանձանակ սահմա-
 նեցինք, որ ամէն շաբաթ իրիգուն գանձանակ բռնէն,
 եկեղեցուն համար շորագին լինի: Առաջմէ կայր ոչ,
 նոր ըսկսբն արարաք: Դուրի շինեցի, ֆռանկի փա-
 կով, մհրեցինք, որ թաքաղ բռնեն, ինչ որ գայ, ածէն
 զուրթինն: Ես Զաքարէս, գ, ե տարի այ, ասելով՝ այսօր
 ըսկիսբն ընկաւ Աստուծով:

§ 134 1129 քաղոցի իգ, փետրվարի իբ, օրն կիրակի, ես 33v
 Զաքարեայ բուն բարէկենդան արարի Աքուլիս, լի և
 առատ, ապա դիր սաստիկ ցուրտ և ձիւն կայր, որ բ
 թիզ ավել ձուն կայր գետնի: Ահայ գ ամիս այ, որ

1) Զեռագրում՝ իւրեց:

2) » եկեղեցումն:

ձուռն այ եկել: Այսմ ամի անչափ ձուռն եկաւ վասն մեղաց մերոց:

§ 135 1129 մարտի Էռւմն, օրն կիրակի, որ Էջմիածնայ 34r
աթոռակալ Միքայել վարդապետն Նախավկայի վանքումն այսօր առ Աստուած հանգեաւ: Մարմինն անդ դիր հանգստեան եդին եկեղեցոյ պարսպին դուս, յարեկեան կողմն կոնդին թաղեցին: Սայ էր կէ ամաց: Սայ էր ի գէղջէն Շամբու: Սայ ինքն կենդանի վոխտն դ ամով առաջ իւր տէղն, որ էր Նախավկայն, տված էր իւր ախպէր որդոյ Պէտրոս վարդապետին: Սորայ վանքն, աթոռն էր Նախավկայն, ապայ Էջմիածնայ սկայգլուխն սայ ընդրեցին Էջմիածնայ աթոռակալ, քանդի առաջմէ քանի անգամ աթոռակալութիւն էր արարեալ: Այս պատճառէս եկեալ էր Գոխտան տունն նոյիրակ, ժողովեց, գնաց Նախավկայն, մինչի ի օրի յիվանդացաւ, անդ հանգեաւ: Շատ աշխատաւոր, լի մարդ էր:

§ 136 1129 ապրիլի ժա, սէհէկի ժբ, շամշ Իբուլմն Աքու- ibid.
լիս ես Զաքարեայ այսօր զատիկ արարի: Ապայ աղքատ զատիկ էր, ամէն ինչ սուղ էր: Ոչխարի միսն լիդրն գճ դիան, պանիրն գճն դիան. այս կերպիւ էր: Զերայ գ ամիս այ, որ ձմեռն այ: Յինն Իգ էր զատիկ:

§ 137 1129 մայիսի գոլմն այսօր մեր Շմաւոնի Երևանայ 34v
կնդանէ ելած տղայ Աղամիրն մօրէն թահր արած եկաւ Աքուլիս. այս է:

Այլլի սեփտեմբերի Իռւմն եկաւ Երևան:

1129 մայիսի ժքոլմն Յինն Բ օրական, եկաւոր կենդանակերպումն,¹⁾ Աքուլիս ք սհաթոլմն մին այնպէս անձրե եկաւ, գետն սէլաւ եկաւ, այլ ոչ ճանապարհ, թէ առու, թէ տնգութք, թէ ժարլղան, ամէն տարաւ: Բալքի թէ Աքուլաց Բճ թուման զարար տվեց: Մին

1) Զեռագրում՝ Յինն Բ օրական, եկաւոր կենդանակերպումն հեղինակը գրել է լուսանցքում՝ ուղղահայաց տողով:

տղայ էլ տարաւ դաժանցի, ժ, ժբ տարեկան: Ես Զա-
քարէս մին թուման զարար քաշեցի, քանզի Ներքի
այգուն մին ժ թթի տարաւ, ճանապարհ, առու տա-
րաւ: Ամայ Տրունաց, քանց Աքուլաց շատ զարար էլաւ:
Կամք Աստուծոյ եղիցի:

1129 մայիսի Իռումն ես Զաքարէս այսօր համբար-
ձում Աքուլիս արարի:

1129 մայիսի Իէռումն, օրն եշաբաթ, այսօր աքու-
լեցի Մուսարէկի թոռ Մուսարէկն մեր Աքուլաց բա-
ղարումն յարաւայի կողմն մին քարվանսարայ յիմն
ձգեց, դուգան, բազար շինէ: Տէղն առաւ գ, դ մար-
դուանէ, գինն լք թուման: Սարքար Թումանեց Առա-
քելն էգիր, որ շինէ:

§ 138 1129 յունիսի ժումն Աքուլիս, որ աքուլեցի խօջայ 35r
Ղօգազն առ Աստուած փոխեցաւ, շատ ապրանքի, ըն-
դակի տէր էր: Սայ սարքարութիւն արաւ, որ Վերի
թաղի եկեղեցին շինեց: Շատ աշխատանք արաւ: Աս-
տուած հոգոյն ողորմի:

1129 յունիսի ժումն որ Մուսարէկն այսօր Աքու-
լաց դուս էլաւ, գնաց Երևան: Զերայ աքուլեցիք ծա-
ծուկ մանսար վէքիլ ին արարեր աքուլեցի Խօջումենց
Մանվելն, որ գնայ Ըսպհան գանգատ: Ահայ ծգ ամիս
այ, որ գնացել այ Ըսպհան, յօքում հանել Երևանայ
Զալ-խանին օհտու: Այս ժե օր այ, որ Մանվելն եկել
այ Երևան: Այս Մուսարէկս որ լսեց, սայ ել գնաց
Երևան, Ավդուլարէկն, Մէլիք-Օվին յետն տարաւ,
գերայ հսար էն ուղղում մելիքէն: Ահա այս գ տարի
կէս այ, որ Մուսարէկն Աքուլաց հաքիմն է. ոչ թէ
միայն Աքուլաց, Մեղրի, Լէհրամ, Աղտապատ¹⁾, Շօ-
ռութ սորայ զաֆտումն այ: Դարցեալ, յունիսի ժգումն
Զալ-խանի նազիր, որ է Ըսազայդուլի-բէկ, Ի ձիա-
ւորաւ այսօր եկաւ Աքուլիս, գնացին փէշվազ անթիւ

1) Չեռագրում՝ Աղտապատ:

մարդ: Մէլիք - Օվին, Մանվելն այսօր եկին Աքուլիս
 նազիրին յետ, որ Մուսարէկին առած ահտազն գրեն,
 մէլիքի հասրն տէսնուն: Ապա Մուսարէկն փառացել
 այ Երևան: Այսօր Աքուլիս մին չալխանմիջ էլաւ:
 Դարցեալ, օգօստոսի իբուսն խանի նազիրն եկաւ Երե-
 ւան: Օգօստոսի իբուսն գանգատաւորքն եկին ճի մարդ:
 Թէ Աքուլաց, թէ Դաշտէն, թէ Շօռութու, թէ Ազտա-
 պատու, թէ Մեղրու ճի մարդ էկաւ: Մեղրու գ, ե
 մարդ էր, ամայ միուս գեղերիցն շատ էր, ամէն լէ-
 լու մարդ էր: || Այս ջումիաթս եկին Երևան: Շատ, 35
 անթիւ խօսք, գիւման էլաւ: Խանն Մուսարէկիցն
 շատ փող կերաւ, բաւքի զն թուման ավել կերաւ: Խանն
 ընկաւ Մուսարէկի կողմն, թէ՛ բարիչեցէք: Գանգա-
 տաւորքն քիչ քիչ գնացին, փաց մին ի մարդ, խա-
 գեղի մարդն: Առաջ Զալ - խանի կաշառք ին ասել, թէ՛
 Մուսարէկն, թող թագաւորի մալիջնաթն, թէ ահ-
 տազ, թէ սիթամի, այս գ խասէն զն թուման առել
 այ: Պիտի խանն հաղիղաթն անի, մեր զն թուման առ-
 նի, մեզ տայ, մեք ճծ թուման տանք խանն: Յետով
 Ըսպհանայ խաբար եկաւ, թէ Մուսարէկի հերն, որ
 էր Իսախան - բէկն, մեռաւ: Զերայ խասերն այս Իսա-
 խան - բէկն, մեռով: Զերայ խասերն այս Իսախան -
 բէկս էր իջարայ արեւ, այս ջանիբէս խասերն սո-
 ցանէ կտրեցաւ: Յետով Զալ - խան մին քանի մարդ
 բռնեց, բերին բճծ թուման Մուսարէկիցն առին,
 տվին խաս գեղի մարդն, գիր առին, բարիչեցին, գնա-
 ցին: Ամայ գ ամիս Երևան կացին, ամէն գնացին:

1129 օգօստոսի մէկուսն ես Զաքարէս Աքուլաց
 դուս էլայ, օգօստոսի գուսն եկի Երևան: Մեր Գաս-
 պարն յետս բերի, առաջին դուս գալն է: Դարցեալ
 իմ Երևան գալու պատճառն այս էր, որ Երևան մին
 զառաբի, Հաջի - Թաղի անուն ոմն, գնայ Զալ - խանին
 արդայ կուտայ, թէ՛ Սիամոնիցն ծբ թուման կուգեմ:
 Ես ջանիբէս Սիամոնի կնիկն մին հայ մարդի վարց

տայ, զրկի Աքուլիս, թէ՛ այ Զաքարէ, հասնել թըխտիս գալ պիտիս: Ես Զաքարէս ահայ այսօր եկի Երևան:

§ 139 Թվին ռճիթ օգոստոսի բռնն Ըստամբօլ Աստուածածին եկեղեցունն Յակոբ կաթողիկոսն առ Աստուած փոխեց: Տարան Բէկ-եղլի հանգիստնունն թաղեցին: Օգոստոսի Իէռնն գիրն եկաւ Երևան: Յակոբ կաթողիկոսն էր հգ ամաց: Սայ կաթողիկոսութիւն արաւ իե տարի:

§ 140 1129 օգոստոսի էռնն այսօր Հաջի - Ալի խան մտաւ Թարվեզ, որ այս քանի ամ է, որ Թարվեզ ջայնջին նստէր: Ահայ այս Հաջի-Ալի խանս Շահ - Սլէման թագաւորի յօքմով խան եկաւ, որ է մեծ սիփասալար խան: Այս խանս այնպէս յօքմ ունի, որ ամէն բէկ ու խան իւր նոքարի սանն տեսնու, որ գարուն սայ ամէն խանի սանն տեսնու. այս է:

1129 օգոստոսի ժեռնն ես Զաքարէս աստուածածին էջմիածնունն¹⁾ արարի, որ անշափ ուխտաւոր էր եկել. շատ թամաշայ էր: Ես Զաքարէս Երևան էի, գնացի էջմիածին, այլվի կիրակի իրիգուն եկի Երևան:

1129 օգոստոսի²⁾ ժթունն Երևան այսօր շատ փէշվազ արաւ, Զալ - խան ինքն էլ գնաց, որ մինչի բռմարդ Հաջի ին գնում: Սոցայ գլխաւոր էր Ադրբէջանայ վէզիր Միրզայ Իբրահիմի ախպէր Միրզայ Սադիս: Սայ էր շահին մուստովֆայ մամլիք: Միուս գլխաւորն էր Մաշադու քալանթարն, որ այս քալանթարս շահի բարիբար խազինայ ունի, մուլք, որ կասին, թէ օրն իե թուման գալուր ունի. այսպէս մարդ է:

* Դարցեալ, օգոստոսի Իգունն Երևանայ դուս էլաւ, գնաց:

1130 մայիսի Իեռնն վերոյ հաջիլարն եկին Երևան: Միրզայ Սադիսն Քարուն

1) Ձեռագրում՝ էջմիածունն:

2) " օգոսի:

մեռած էր, քալանթարն գնացած էր Բաղ-
դադու վերայ, բազին եկին Երևան:

§ 141 Թվին 1129 դեքտեմբերի ժեռմն Աքուլաց սուլը 36v
վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն այսօր էջ-
միածնայ դուս էլաւ Հայաստան վարդապետաց, դուլ-
լաթավորաց, խանի գրով, մանսարով, որ գնայ Երու-
սաղէմ, թէ Ըստամբօլ Եղիազար վարդապետն բերեն
էջմիածին, կաթուղիկոս դնեն: Այսպէս սահմանք տե-
սին¹⁾: Դարցեալ, Պետրոս վարդապետ գնաց Երուսա-
ղէմ, Եղիազարին յետ լոյսն տեսան, եկին Ըզմիր,
Բուրսայ, Ըստամբօլ²⁾, ապայ ծովով եկին Տարապղոն,
եկին || Առզուում: Օգոստոսի լումն թվին ոճլա հրաշալի
այսօր եկին էջմիածին, աթոռ նստաւ:

* Ամայ կաթուղիկոսութիւն յանձ չառաւ.
անունն նորայ, նայ կու յիշէն: Այսպէս 37r
մնաց, ոճլք Պետրոս վարդապետն աթոռակալ
դրեց. քամիս արաւ, այլ դուս ընկաւ, վի-
րաբի³⁾ Դաւիթ վարդապետն ելաւ աթոռա-
կալ: Ապայ Պետրոս վարդապետն ոճլքումն
դեքտեմբերի իռմն Աքուլիս իւր վանքն
եկաւ:

§ 142 1129ումն թվին օսմանցու Սուլթան Մահամադ թա- 36v
գաւորն հրաման կու տայ Առզուումայ Իբրահիմ փա-
շին, թէ՛ քո ղօլբակոյն գնայ Վրաստանայ երկիրն Դա-
դիան, Շահնուաստ խանի տղայ Շահնազար խանին
վերայ կռիւ: Պատճառն այս կընի, թէ Ասլան փաշէն,
որ էր Ախլցխու փաշէն, յետ Շահնազար խանին յետ
մին այ դառած: Այս պատճառէս Առզուումայ Իբրահիմ
փաշէն գայ Ախլցխայ, Ասլան փաշի գլուխն կտրի,
ինքն գնայ Դադիանու երկիրն Շահնազար խանի վե-

¹⁾ Ձեռագրում՝ տեին:

²⁾ » Ըստմբօլ:

³⁾ » վիրեի: Տպագիրը (յերես 81) նույնպէս կար-
գում է վիրաբի:

բայ կռիւ. մին Բ, գո¹⁾ մարդ փաշիցն կոտորվի, փաշէն
յետ դառնայ, սեփտեմբերի Իուլիս գայ Առդուում, զերայ
ձմեռն վերայ հասաւ: Դու վրացու գերի բերաւ ասկարն:

§ 143 Թվին 1129ումն որ Աքուլաց էլն կանկնեցին, յօքմն 32x
բերին Շահ - Սլէման թագաւորէ, բերին Երևանայ
Ջալ - խանին օհտու, դիվան արին, շատ աղմուկ էլաւ,
ե խասն Մուսաբէկէն կտրեցին: Մուսաբէկի հայրն
ի տարի մօտ էր, որ Հսպհան էր, այսմ յամի նայ
Հսպհան մեռաւ, անուէն էր Իսախան - բէկ: Շահ - Սլէ-
ման թագաւորն ե խասն կու տայ խանդում - բաշի
Խոստրով աղէն: Խոստրով աղէն կտա իւր մուսահիր,
շահի դուռ ալլվի Խոստրով աղէն, իւր անվանակիցն:

* Թվին 1130ումն այս Խոստրով աղէն կու
գայ, Աքուլիս կու նստի, մարդիկն զրկի
Մեղրի, Շօուլթ, Լեհրամ, Ագտապատ, իւր
համար աղայութիւն կանի: Դարցեալ, Ա-
քուլաց ջումիաթն Մելիք - Օվին բռնէլ կու-
տան աղին, շատ սխառաթ անէն: Այսպէս
կանէն. վիզն գունդա կուտան, նստացա-
նէն էշ, նաղրով, զոնով Աքուլիս, Դաշտն
ման ածէն: Դաշտէն Մելիք - Սլէմանն ալլվի
այսպէս ման ածէն, թէ՛ ամէն դուք արիք,
որ Մուսաբէկն այսպէս սիթամ արաւ մեզ:
Այս պատճառէս այսպէս սխառաթ բերին
Մելիք - Օվու գլուխն: Մին 61 թուման ս-
ռին, թողզ գիվանում խարջածն: Օվուն
բալքի Բ6 թուման դուս էլաւ, ինքն էլ
մելիքթենի դուս ընկաւ: Ամայ Սլէմանն
կորցրին. Աստուած գիտէ, թէ ինչ էլաւ:
Աքուլաց մելիք էխանեց Ափրահամն է²⁾,
Խօջումէնց Ոսկանն:

1) Ձեռագրումն բռգ:

2) » Ափրահամն է բառերից հետո գրած ե այս-
պէս էլաւ ու հետո գրչով ջնջած:

§ 144 Թվին 1130 յոնվարի գ, արամ իբ, տրէ ամսոյն 35v
է, օրն եշաբաթ, ես Չաքարեայ այսօր Ջրաւրհնիք
Երեան արարի: Ջրաւրհնիքն ամեն մարդ իւրենց եկե-
ղեցումն արարին, զերայ դուս չի գնացին:

§ 145 1130 փետրվարի ժգումն Երեան ես Չաքարիայ 37r
բուն բարեկենդան արարի: Այսմ ամի սղութիւն էր
Երեան: Հացի ի խտիւն իս դիան է, անունն իս դիան
էր, ամայ ձ դիան ավել նստէր, ամայ են ել կայր ոչ,
Գարին՝ Կ դիան, բրինձն՝ ճի դիան: Ամայ ձմեռ չե-
լաւ: Այսմ աւուր որպէս գարուն է: Այսօր Յինն էր
գ օրական: Յորենու սօմարն գն դիան էր, յետով ո
դիան էլաւ:¹⁾

1130 ապրիլ գ, շամս ժգ, մէհէկի գ, Յինն իգ, այ-
սօր գատիկ ես Չաքարեայ Երեան արարի: Խիստ սղու-
թիւն էր այսմ տարի:

1130 մայիսի ժբումն Երեսն ես Չաքարէս համբար-
ձում արարի: Դիր հացի սով էր, որ ժբ խտիւլ ցորէնն
ն դիան կէր ոչ:

1130 մայիսի ժեումն Ըսպհանայ այսօր Շահ-Սլէ-
ման թագաւորէ մին կապայ, մին մանդիլ խալաթ
եկաւ Երեան Ջալ-խանին համար: Շատ, անչափ փէշ-
վազ գնացին: Շահ-Ժուրդի խալաթն խանն հաքաւ,
քարանով, շատ ձիաւորաւ մտաւ բերթն:

1130 օգոստոսի իռւմն այսօր Երեանայ ես Չաքա-
րէս, մեր տղայ Քասպար, երկուս ել նաչաղ, ջերմոտ,
դուս եկի, օգոստոսի իգումն եկի Աքուլիս:

1) Ձեռագրում էւ: Տպագիրը (յերես 82) վերջացնում է ո դիան
բառերով:

§ 146 Թւին ոճլ հոքտեմբերի ժառամն, օրն գշաբթի որ 35v
Աքուլիս նոր ձուն եկաւ, շատ զարար տվեց: Քանի
իքի խաղողն մնաց ձնի տակի. Բ օր ձունն մնաց, այլ-
վի վեր կացաւ. ապայ սառեց ոչ:

§ 147 1130 ումն Երևան սով ընկաւ, որ ցորենի սօմարն 30v
դարցաւ ռբճ դիան: Գարին քանց ցորենն թանկ էր,
որ սօմարն ժբ լիդր թարվեզի այ, որ է լիդրն ժբ
խտիլ: Բրինձն մինչի բճ դիան դարցաւ: Շատ մարդ,
աղքատներն պաս չի պահեցին, մածունով, պանիրով
անց կացուցին: Շատ աղքատ, թէ թուրք, թէ հայ,
խոտով, կանանչով ապրեցան: Հացն թուրքով, ժասա-
վուլով կուտին մարդի: Ոչ թէ միայն Երևան էր այս-
պէս, ապայ Ղափլանթու մինչի թողաթ այսպէս սղու-
թիւն էր: Ամայ Երևանայ նման ոչ էր սղութիւն:
Ապայ հացի անուն էր հաց. վայ մեզ, որ հող եր,
աթար էր: Փառք Աստուծոյ:

[ՅԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ԱՎԱՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ,

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

§148 Թվին ողջ մարտի եռօրէն Աքուլիս, որ ես Աքուլեցի 37v
 Քուրդունց Աղամիրի որդի Ջաքարէս, որ ես Ջաքա-
 րէս էի ծէ ամաց, նախ և առաջի իմ ճանապարհ գնա-
 ւըն այս է, որ մին բէռն խամ ապրիշմով, իմ հօր,
 մօր, իմ եխպայր Շմաւոնի, սոցայ կամով ինձ դրին
 իմ հօր եխպօր որդի պարոն Նիկողոսին յետ, գնացի
 Իզմիր: Պարոն Նիկողոսն¹⁾ ել մին բէռն ապրիշում
 ունէր: Դարցեալ, Նիկողոսն իւր ապրիշումն ծախէց ոչ,
 գնաց ի Ֆոնգստան, ի քաղաքն Լիօնայ: Դարցեալ,
 ես Ջաքարեայ իմ մին բէռն ապրիշումն, մեր Աքու-
 լաց շատ բազրկան կեր Իզմիր, ծախեցին, թէ խարջ,
 թէ գմրուկ, թէ ժող բորջի, ամէն տվին, մնաց խալիս
 ընհ մառչիլ սիվիլայ: Ջերայ ապրիշումի լիդրն, որ
 գ հողայ է, լիդրն տվի լք մառչիլ: Քնար ապրիշում
 էր, լաւ բազարի հանդիբեցայ: Դարձեալ, այս փողս
 ըն մառչիլ տվի մեր աքուլեցի աղբոյաղջի Վարդան,
 որ բերաւ Աքուլիս, տվեց իմ հայր Աղամիրին և իմ
 եխպայր Շմաւոնն: Դարցեալ, ես Ջաքարեայ և մառ-
 չիլ փող վեր կալայ, գնացի Բուրսա, գ ամիս կացայ,
 գնացի Ըստամբօլ, ինձ համար ալիշ-վերիշ արարի:
 Դարցեալ, իմ եխպայր Շմաւոն ժեա ուղարկած փողն
 վեր առնու, գնայ Ըսպահան, ապրանք առնու, ծախէ:
 Դարցեալ, այս Շմաւոնս գ Ֆիթեղի, մի քանի դանակ,
 դվթ, զալամ, նախշուն մին քանի դատ աղարկեց Ըս-
 տամբօլ, ինձ Ջաքարիս հասաւ: Ծախեցի, ձ մառչիլ
 հանեց, որ էլաւ իմ հօր փողէն ինձ հասաւ մին ճծ
 մառչիլ: Այս էլաւ ինձ Ջաքարի հայրենի փողէն մա-

1) Ձեռագրում՝ Նիկոսն:

յայ: || Թվինն ողբ ապրիլի ժըռմնն ես Ջաքարեայ Ըս-
տամբօլու դուս եկի, յունիսի գռմնն եկի Աքուլիս: Թէ
նազտ, Թէ վէջ, ւր Թուման փող բերի. գ Թուման իմ
հայր Աղամիրն վեր առեց, խարջի արաւ, զերայ Շմա-
ւոն տան չէր: Մնաց ինձ Ջաքարիս մայայ իւր Թու-
մանն ես Ջաքարէս Երանեց Աստուածապոլն ինձ ժը
Թուման մայայ տվեց, զրեց աքուլեցի Մարքարի որ-
դի Արզանուն յետ, Թէ՝ Արզանին կարդացել չէ, դու
սրայ յետ գնայ, սրայ ալիջ - վերին գրես: Այս Ար-
զանիս Աստուածապոլիս ընկեր էր. գ Թուման մա-
յայ Արզանուն յետ էր: Ես Ջաքարէս Արզանուն յետ
գնացի Ըսպհան, խրիդ արարիք Ըստամբօլ, ծախե-
ցինք, եկինք Երևան, յետ դառանք գնացինք Թւլիս,
փողն գառափխանումն¹⁾ կտրեցինք, եկի Աքուլիս: Ես
Ջաքարէս շատ փորցանք, ջալայ, չարչարանք քաշեցի,
ալս Արզանուն յետ Թվինն ուն սեփտեմբերի եռմնն եկի
Աքուլիս, ինձ Ջաքարիս շախ ու մայայ հասաւ ծգ
Թուման: Այս Աստուածապոլիս ասաց, Թէ՝ Արզանուն
յետ գնայ ու եկ, քեզ ջոկ մայայ տամ: Ել տվեց ոչ.
պատճառն իմ եխպայր Շմաւոն էլաւ: Պատճառն այս
է, որ Շմաւոն Ըսպհան նախ և առաջի մեր ապրիշու-
մի փողն խրիդ կանէ, մին յետ Թարվեզ կու ծախէ,
մին խրիդ կանէ, գայ Ըստամբօլ: Այս Շմաւոնս եկաւ
Ըստամբօլ, ես Ջաքարէս բանս տեսել ի, դուս գա-
լիս եկի Աքուլիս: Այս Շմաւոնս աքուլեցի Թուդա-
նեց Ղուլին Շմաւոնիս մայայ կու տայ, այս մա-
յէս տանի Ըսպհան, կէսն կու տայ մեծ Դալու Ա-
լիդուլի խանին, որ եկաւ Թարվեզ, խան նստաւ,
կէսն կու տայ մեծ Լալայբէկի տղայ || ուղբաշի Ալահ-
վերդիբէկին: Այս Շմաւոնս Ըսպհանայ որ կու գայ
Թարվեզ, Թէ Ալիդուլի խանէնանէ փողն ուզէ, այս
խանս այս Շմաւոնս կու տանի, գինի խմեցնել կու

38x

38v

1) Զեռադրում՝ գառափխանումն:

տայ: Յենց որ գինովանէն, խանն կասէ, թէ՛ այ Շմա-
 ւոն, արի, թուրքացիր, քո փողն տամ: Շատ խօսքեր
 կասին, այս պատճառէս այս խանն ինքն իւր թուրն
 վեր ունի, գնայ այս Շմաւոնիս վերայ, թէ վիզն տայ,
 այս Շմաւոնս ձեռաց կու գնայ, դուս կու քաշէն. էլաւ
 քին միջումն աղմուկ: Յետով խանն մազուլ կանէն,
 այս Շմաւոնիս փողն կորաւ: Այս պատճառէս առաջի
 յիշած Աստուածապոյն ել ինձ Զաքարիս մայա չէ
 տալ, թէ՛ տանի, ախպօրն նման կու տայ խանի, բէ-
 կի, կու կորէ. այս է: Դարցեալ, այս Շմաւոնս խա-
 փանօք մարդ աղարկէ Աքուլիս, թէ՛ այ Զաքարեայ,
 ինձ համար չ թուման փող աղարկէ, որ խիստ էժան
 չուխայ եմ առել, տամ քեզ: Ես Զաքարէս չ թուման
 աղարկիմ, գիտեմ, թէ ըզորթ այ: Սայ խօլ պարտք
 ունէր, կու տայ իւր պարտքն, չուրի մին տարի մօտ,
 այլվի իմ չ թումանս տվեց, շախ չի տվեց: Դարցեալ,
 այս Շմաւոնս տէսաւ, որ խանն փող չի տվեց, գնաց
 Երեւան, թէ Լալա բէկի տղինանէ փողն առնէ: Քան-
 զի Քէ-Պօստրով խանն կապանօք տանէն շահն, այս
 Քէ-Պօստրով խանիս զալուղ կու մնայ Երեւանայ օլ-
 քին վերայ: Շահ-Աբաս թագաւորն Լալա բէկի մեծ
 տղայ Մահամդուլին խանութիւն տայ, աղարկի Երե-
 ւան, խան նստի: Լալա բէկի || փոքր տղայ ուզեաշի 39r
 Ալահվերդի բէկի ըռաղամ տայ, թէ՛ գնայ Երեւան,
 Քէ-Պօստրով խանի զալուղն ժողովէ, բէր, շահի ապ-
 րանք է: Այս Շմաւոնս փողն տվել էր այս Ալահվեր-
 դի բէկս: Սայ եղև այս Շմաւոնիս պատճառ, որ մնաց
 Երեւան: Այս Շմաւոնս շատ պարտքի ներքև մտաւ, որ
 Երեւան Նաջաֆդուլի խանին, Աբասդուլի խանին, Սէ-
 ֆիդուլի խանին գարաք ժարաղ կնի, համ ըռահտա-
 րութիւն կանի, համ զառաբի կնի, շատ հսաբի ներ-
 քև կու լինի, որ համբաւն ամենայն երկիր կու սփռի:
 Այս ժամանակիս Շահ-Սէյլէման թագաւորն յօքմ գրէ
 Երեւան Սէֆիդուլի խանին վերայ, թէ՛ այդ զառաբի

Սիամոնդ աղարկէ, գայ Ըսպհան: Պատճառն Աստուած գիտէ ու թագաւորն: ԹՎին ռճԺ յոնիսի ժգումն այս Սիամոնս եկաւ Աքուլիս մին ի ձիաւորաւ, ժ օր կացաւ, ես Չաքարիայ քուլիայ զարար քաշեցի: Այս Սիամոնս գնաց Ըսպհան, ե, զ ամիս կենդանի մնաց, դեքտեմբերի էումն Ըսպհան մեռաւ, տարան, Չուղայու հանգիստներումն յարեկեան կողմն թաղէն: Յետով մարդ եկաւ, թէ՛ այ Չաքարեայ, հալքաթէ եկ, թէ չի, շահիցն զուլ այ գալիս, քեզ բերեն, որ Սիամոնի պարտքն, առուտուրն տէս: ԹՎին ռճի յունվարի իաումն Աքուլաց ես Չաքարեայ դուս էլայ, գնացի Ըսպհան: Ես Չաքարէս շատ փորցանք, շատ դարդ, շատ չարչարանք քաշեցի, Աստուծով պրծայ, օգօստոսի քումն եկի Աքուլիս, գնացի Երևան: Հալայ մինչի գ տարի այս ախպօր Շմաւունիս համար շատ շատ չարչարանք քաշեցի. միայն իմ բօղազիս, շորիս տէր ի: Այս եղև վասն մեղաց իմոց: Բալքի Աստուած տայ, որդիքն դօվլաթաւոր լինին¹⁾, մեզ մին բերան ողորմի տան, որ ես հոքայավանի ձեռք չի տվի: Միայն Աստուած գիտէ. Աստուած ողորմած է:

* Այս Շմաւոնս որ Ըսպհան մեռաւ, սաղրի 39v
գրով, հայի գրով վասիաթ կանէ, գրէ, թէ՛ իմ վեքիլ իմ ախպէր Չաքարէն իմ առուտուրն անէ, իմ ինչ որ բհամ գայ, իմ վեքիլ Չաքարէն գ յիսայ անէ. մին յիսէն ինքն վեր ունի, մին յիսէն այլվի ինքն վեր ունի, տայ իմ հոգոյս, մին յիսէն տայ իմ գ տղէն, մին աղչիկ ու իմ կնիկն, մինչի իմ որդիքն բալուղ ընի, հսաբ տայ իմ տղերքն: Դարցեալ, ես Չաքարէս որ գնացի Ըսպհան, Սիամոն գ ամիս էր, որ մեռած էր: Ամէն զատն Չուղու գարուղէն, քալան-

1) Ձեռագրում՝ լինի:

Թարն գրած ին, մհրած: Ամայ նալտ փող
 չկէր, գ, զն թուման պարտք ունէր, Արաս-
 դուլի խանին, թէ դիվանի տալու էր: Ամայ
 առնելացու շատ ունէր թէ Լսպհան, թէ
 Երևան, թէ Աքուլիս: Երևանայ հսարն Սիա-
 մոն գնալու ժուկն քեռու տղայ Դուգազն
 վէքիլ կանէ: Երևանայ առուտուրն Դուգա-
 զին յետ կնի: Հալայ շատ չարչարանք¹⁾
 քաշեցի. տղերքն մեծացան: Ես Զաքարէս
 քանի կասիմ՝ եկէք ձեր հօր հսարն տեսէք,
 թէ իմ Զաքարիս վերայ մնայ, տամ, թէ
 ձեր վերայ մնայ, տվէք: Նոքայ էլ գիտէն՝
 փող չկայ, հսար չեն տեսնում: Զերայ փողն
 քանց ինքն առաջ մեռաւ: Տալիքն դիվանի
 էր տալու, առնելիքն՝ հայի, թուրքի, ամէն՝
 սնդուռն տէղ: Բալքի բն թուման ավել փողի
 շախ տվի: Այսպէս կիսամահ մնացի, ոչ
 հսարս կտրում էն, ոչ կարում եմ պարտա-
